## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

# ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ

## ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

1912/13, 1913/14 ԵՒ 1914/15 ՈՒՍ. Տ.

Թիֆլիս
Տպարան «ՄԱՄՈՒԼ» Ընկերութեան
1916 թ.

372/3
Տ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԹԻՖԼԻՍԻ ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐ. ԴՊՐՈՑԻ

## 1912/13, 1913/14, 1914/15 ՈՒՍ. Տ. Տ.

---

### 1912—1913 ՈՒՍ. ՏԱՐԻ

1912 թ. ապրիլին լրանում էր Նախորդ Հոգաբարձական կազմի ժամանակամիջոցը. Նոր կազմը, որ պէտք է հաստատուած լինէր մայիս ամսին, որպէս զի հնարաւորութիւն ունենար իր ժամանակին կարգադրել յաջորդ ուսումնական տարուայ գործերը, ընտրութիւնների ձգձգուելու պատճառով՝ իր հաստատութիւնն ստացաւ միայն ուսումնական տարուայ երկրորդ կիսամեակին, այն է 1913 թ. յունուարի 28-ին Վեհափառ Կաթողիկոսի № 245 կոնդակով, իսկ փաստացի կերպով պաշտօնի մտաւ մարտի 1-ին։ Այդպիսով ուս. տարին սկսել էր Նախորդ Հոգաբարձական Խորհուրդը, որ և կազմել էր այդ տարուայ նախահաշիւը և ուսուցչական խումբը։ Մինչև 1913 թ. փետրուարի 12-ը, երբ տեղի ունեցաւ հին և նոր կազմերի խառը նիստը, Նախորդ Հոգաբարձական Խորհուրդն ունեցել էր 15 նիստ, որոնց մէջ զբաղուել էր ընթացիկ ուս. տարուայ վերաբերեալ խնդիրներով. այսպէս՝ աւելացրել էր դասագինը 5 րուբլով՝ դարձնելով 55 րուբլի, բացի գլաւոր վարձատրութիւնից. աւելացրել էր քարվանսարայի փողոցի վրայ եղած մի քանի կրպակների վարձագինը, իւրաքանչիւրին տարեկան 120 րուբլի. 1912 թ. նոյեմբերի 13-ին Համազգային Մեծ Յոբելեանները՝ տա-

71 2930

ռերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը դպրոցում տօնելու համար Մանկավարժական ժողովի որոշումներին՝ 6 կէտերից բաղկացած, ընդ առաջ գնալով յատկացրել է 100 րուբլի՝ բարձր դասարանի աշակերտներին օրուան պատշաճ գրքեր բաժանելու։ Բացի այս, ներկայացուցիչ է ուղարկել Էջմիածին Հոգաբարձական Խորհրդի փոխ-նախագահ պ. Հ. Առաքելեանին և տեսուչ պ. Ստ. Մալխասեանցին։ Լսելով պ. Տեսչի զեկուցումը, թէ Մանկավարժական Ժողովը որոշել է իր շրջանում տօնել դպրոցիս աւագագոյն պաշտօնեայ օր. Կ. Մուրադեանի 25-ամեայ պաշտօնավարութիւնը, կարգադրել էր դպրոցի միջոցներից միանուագ տալ 300 րուբլի Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան 5% օբլիգացիաներով, ի նկատի ունենալով նրա երկարամեայ ծառայութիւնը. սակայն այդ որոշումը չի իրագործուել, տօնախմբութիւնն ինչ-ինչ հանգամանքներով տեղի չունենալու պատճառով։

Հոգաբարձական Խորհուրդը 1912 թ. դեկտեմբերի 26-ին ստացել է դպրոցի թոշակարկղի կանոնադրութիւնը՝ հաստատուած Վեհափառ Հայրապետի հետևեալ կոնդակով.—

«Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի պատուարժան Հոգաբարձութեան Մարիամեան-Յովնանեան Օրիորդաց դպրոցի Հայոց Տփղեաց ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Ընկալեալ մեր ընդ յայտարար գրութեան Գերապատիւ ժամանակաւոր կառավարչի թեմին Հայոց Վրաստանի Տ. Եփրեմ եպիսկոպոսի յ3 յուլիսի ընդ համարաւ 1254 «զնախագիծ կանոնադրութեան թոշակարկեղ Մարիամեան-Յովնանեան դպրոցի օրիորդաց», զհաստատել ի Մանկա-

վարժական և 'ի Հոգաբարձական ժողովս, գոհութեամբ սրտի իրազեկ եղանք, եթէ բարեջան Հոգաբարձութիւնք զոյգ ընդ հոգատարութեան, որ վասն դաստիարակելոյ զաշակերտուհիս դպրոցիդ, խորհի և աշխատ լինի նաև վասն նիւթական ապահովութեան վաստակաւոր մշակուց հայ մտաւոր անդաստանի, զուսուցչաց և զուսուցչուհեաց ասեմք, որք են հոգևոր ծնողք մանուկ սերնդեան՝ ապագայ յուսոյ ազգի մերոյ։

Հաճ և հաւան գտեալ ընդ օգտակար որոշումն Հոգաբարձութեանդ, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով հաստատեմք և տամք ի գործադրութիւն «զկանոնադրութիւն Թոշակարկեղ վասն Մարիամեան-Յովնանեան դպրոցին օրիորդաց Տփղեաց», որ բաղկացեալ է ի քառասնից և հնգից (45) յօդուածոց։

Մաղթեմք առ Ամենաբարձրեալն՝ պահել զկրթական հաստատութիւնդ ի բարգաւաճութեան և ի յառաջադիմութեան ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ իւրոյ և շնորհել կար և զօրութիւն բարեջան հոգաբարձուացդ, ուսուցչաց և ուսուցչուհեաց դպրոցիդ, զի միաբան աշխատութեամբ և սրտեռանդ ջանիւք դաստիարակեսջիք զաշակերտուհիս ազգային-կրօնական ջերմեռանդ ոգւով, ներշնչելով ի մատաղ սիրտս նոցա զսէր առ Հայաստանեայց եկեղեցին, զյարգանս առ ազգն Հայոց և զսէր առ մայրենի լեզուն մեր, միանգամայն դաստիարակելով բարոյապէս և ազնուացուցանելով զհոգեկան աշխարհ սանուհեաց դպրոցիդ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Ի 20 Նոյեմբերի 1912 ամի, ըստ Տոմարի ՌՅԿԲ։

Ի Հայրապետութեան մերում Ա. ամի յԱյրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի ի Վաղարշապատ Թ. 1524։

Թոշակարկղի կանոնագրութեան՝ համեմատ վարչու-

թեան անդամներ են ընտրուել Հոգ. կազմից—պ. պ. բժշկպտ. Բ. Նաւասարդեան և Մ. Մելիքեան:

Յետագայ նիստերում Հոգաբարձական Խորհուրդը զբաղուել է դպրոցի ուսման ծրագրի քննութեամբ, որ իւր յանձնարարութեամբ վերամշակութեան էր ենթարկուել Մանկավարժական մարմնի կողմից, և հաստատել այն. իսկ վերջին նիստում, կայացած 1913 թ. փետրուարի 11-ին, որոշել է ամբողջ ծրագիրը, բաղկացած 182 երեսից, ուղարկել Վեհափառ կաթողիկոսին ի հաստատութիւն:

---

Նոր Հոգաբարձութիւնը հաստատուելուց յետոյ՝ կազմեց խառն նիստ Հոգաբարձութեան հին կազմի հետ, ուր և կարդացուեց Նորին Վեհափառութեան կոնդակը, որ է հետևեալը.—

«Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Գերապատիւ ժամանակաւոր կառավարչի թեմին Հայոց Վրաստանի Տ. Եփրեմ Եպիսկոպոսի՝ հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Ընկալեալ Մեր ընդ յայտարարութեան Ձերում ի 27 նոյեմբերի անցելոյ ամի ընդ համարաւ 2677, զարձանագրութիւնս ժողովոց մեատասան պատուիրակաց երից եկեղեցեաց քաղաքիդ՝ Վանուց աւագ եկեղեցւոյն, Մողնւոյ ս. Գէորգ և ս. Բէդղէհէմի եկեղեցեաց, իրազեկ եղաք, զի յերկուս ժողովս, գումարեալս ընդ նախագահութեամբ Ձերով, ընտրեալ են գաղտնի քուէարկութեամբ ի պաշտօն Հոգաբարձութեան Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի Հայոց Տփխիս քաղաքի, պարոնայք Աբեգեան Ար-

տաշէս, Արզումեան Յովսէփ, Բաբեանց Արշակ, Տէր-Ստեփանեանց Գարեգին։

Արդ՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով հաստատեմք զյիշատակեալ պարոնայս ի պաշտաման Հոգաբարձութեան Մարիամեան-Յովնանեան օր. դպրոցի Հայոց եռամեայ ժամանակաւ, ցվախճան Յունուար ամսոյ 1916 ամի, յուսալով, զի նորոգ հաստատեալ հոգաբարձուք սրտեռանդն գործունէութեամբ գուն գործեսցեն վասն բարգաւաճման կրթական հաստատութեան մատաղերամ դստերց ս. Եկեղեցւոյս և աշխատ լիցին տալ դաստիարակել զաշակերտուհիս կրօնական-բարոյական ոգւով։

Զոյգ ընդ սմին յայտնեմք զգոհունակութիւն Մեր հանդերձ Հայրապետական օրհնութեամբ նախկին անդամոց Հոգաբարձութեան Մարիամեան-Յովնանեան դպրոցի, որոց բարձեալ զծանրութիւն պաշտաման և զխնամս դպրոցին, հոլովեցին զեռամեայ շրջան պաշտաման Հոգաբարձութեան։

Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց ի 28 յունուարի 1913 ամի ըստ Տոմարի ՌՅԿԲ ի Հայրապետութեան մերում Բ. ամի յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի ի Վաղարշապատ Թ. 245։

Այդ նիստում որոշուեց, թէ ինչ կարգով պէտք է Հոգ. հին կազմը յանձնէր նոր կազմին դպրոցի գոյքը։ Այս առթիւ Հոգաբարձական Խորհրդի նոր կազմը առաջարկեց, որ դպրոցի գործերը որ և է մարմնի կողմից նախ վերաստուգութեան ենթարկուին, որ մինչև այդ, ինչպէս երևաց հին կազմի տուած տեղեկութիւնից, տեղի չէ ունեցել։ Հին կազմը միանալով այդ առաջարկութեանը՝ այն միտքը յայտնեց, թէ այդպիսի մի մարմին առաջ բերելու համար հարկաւոր է ժամանակ, քանի որ անհրաժեշտ կլինի դիմել Հոգևոր բարձր իշխանութեան, ուստի՝ նոր կազմին թողնելով իր առաջարկութեան օրինական ըն-

թացք տալը, յայտարարեց, որ ինքն ևս դպրոցի գոյքն կը յանձնի այն կարգով, ինչ կարգով որ յանձնուել է իրեն։

Փետրուարի 28-ի նիստում նախորդ կազմը տուեց իր եռամեայ գործունէութեան ամփոփ տեղեկութիւնը, որից յետոյ յանձնեց նոր կազմին.—

1. 96.100 րուբլու նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5% օբլիգացիաներ (անդորրագրերի №№ 7, 8, 50)։

2. Հետևեալ փաստաթղթերը.—

ա. Դպրոցի շէնքի նուիրաբերութեան կուպչիան՝ հաստատուած 1882 թ. փետրուարի 15-ին, րէէստր № 174։

բ. Քարվանսարայի նուիրաբերութեան կտակի պատճէնը՝ հաստատուած 1877 թ. ապրիլի 18-ին, րէէստր № 313։

գ. Տիրապետութեան թերթի (ВВОДНЫЙ ЛИСТЪ) պատճէնը՝ վաւերացուած 1887 թ. սեպտ. 18 ին № 161 մակագրութեամբ։

3. Թիֆլիսի Առևտրական Բանկի № 3228 ընթացիկ հաշւով, համաձայն պաշտօնական գրութեան, առ 25 փետրուարի եղած գումարը 2175 ր.—48 կոպէկ և դրամարկղի մատեանի համաձայն առձեռն դրամ առ 1 մարտի 1913 թ. 489 ր.—43 կոպէկ։

4. Դպրոցի պաշտօնեաների թոշակարկղի հաստատուած կանոնադրութեան բնագիրը, նոյն և տպագրուած։

5. Դպրոցի շարժական կայքը և Հոգաբարձութեան Խորհրդի դիւանը ցուցակագրուած մատեաններով։

6. Դպրոցի գրադարանը, ֆիզիքական կաբինէտը և ուսումնական պիտոյքները, որ յանձնուած է եղել պ. Տեաչի հսկողութեան։

7. Չգանձուած պարտամուրհակներ, որոնք անյուսալի են, 3023 ր.—84 կոպէկ և 900 րուբլի գումարի։

8. Ընթացիկ ուսումնական տարուայ նախահաշիւը, որով մուտք սպասւում էր 34.810 ր., ելք՝ 34.674 ր.։

---

Մարտի 6-ին տեղի ունեցաւ նորընտիր Հոգաբարձական Խորհրդի առաջի նիստը, որի կազմն է.—

Վրաստանի և Իմերէթի Հայոց թեմի Նորահաստատ թեմակալ առաջնորդ Գերապատիւ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեան։ Մշտական անդամներ Հոգաբարձական Խորհրդի՝ Կուսանաց Վանքի մայրապետ Հ. Թայիրեան և Յովհաննեան տոհմի ներկայացուցիչ Ն. Անանեան (այժմ հանգուցեալ)։

Ընտրեալ անդամներ.—

պ. Արտաշէս Աբեղեան
» Յովսէփ Արղութեան
» Արշակ Բաբեան
» Գարեգին Տէր-Ստեփանեան

Տեսուչ պ. Ստ. Մալխասեանց
Քարտուղար պ. Մ. Յարութիւնեան։

---

Այդ նիստում, համաձայն հիմնադրի կտակի, ընտրուեցին՝ փոխ-նախագահ մի տարի ժամանակով պ. Ա. Աբեղեան, գանձապահ՝ պ. Ա. Բաբեան և Թոշակարկղի Վարչութեան անդամք համաձայն կանոնադրութեան՝ պ. պ. Յ. Արղութեան և Գ. Տէր-Ստեփանեան։

Մարտի 6-ից մինչև ուսումնական տարուայ վերջը Հոգաբարձական Խորհուրդն ունեցել է 24 նիստ, որին մասնակցել են.—

| | | |
|---|---|---|
| Սրբազան նախագահ՝ | | |
| Տ. Մեսրոպ եպիսկոպոս | 23 | անգամ |
| Մայրապետ Հ. Թայիրեան | 20 | » |
| Ն. Անանեան | 21 | » |
| Ա. Աբեղեան | 24 | » |
| Յ. Արղութեան | 22 | » |
| Ա. Բաբեան | 19 | » |
| Գ. Տէր-Ստեփանեան | 24 | » |
| Ստ. Մալխասեանց | 23 | » |

---

Հոգաբարձութեան Խորհուրդը իր գործունէութեան ընթացքում, համաձայն արձանագրական որոշումների՝ հետեւեալ գործողութիւններն է կատարել.—

1. Դպրոցական կեանքի ընթացքին հետեւելու համար նպատակայարմար համարեց ունենալ ընդունուած ձեւով հերթապահ հոգաբարձուներ, որոնց պարտքն է իրենց ժամանակաշրջանում յաճախել դպրոց և վերահասու լինել դպրոցական-տնտեսական առօրեայ գործերին և հնարաւոր չափով ներկայ լինել դասերին։

2. Քարվանսարայի եկամուտը բարձրացնելու համար՝ իր միջից ընտրած յանձնաժողովի (Ն. Անանեան, այժմ հանգուցեալ, պ. պ. Յ. Արղութեան, Ա. Բաբեան և տնտես. կառավարիչ Մ. Անանեան) զեկուցումը լսելով՝ որոշեց քարվանսարայի կրպակների վարձագինը աւելացնել 10 %-ով, ինկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչ այդ եղած վարձագները շրջակայ խանութների համար ընդունուած նորմայից պակաս են, որի մասին և օր առաջ յայտարարուեց կրպակակալներին։ Այսպիսով քարվանսարայի եկամուտը 27.816 րուբլուց բարձրացաւ մինչև 30.500 րուբլու, որը պէտք է ստացուէր $19^{13}/_{14}$ ուս. տարուանից։

3. Առանձին շինարարական յանձնաժողովի († Ն. Անանեան, պ. Բաբեան և կառավարիչ) զեկուցումը լսելով՝ մի շարք նիստերում քննութեան առաւ քարվանսարայի վրայ 4-րդ յարկ կառուցանելու և ապրանքաբարձ մեքենայ շինելու խնդիրները, որոնք եկամտի նոր աղբիւրներ դառնալով՝ մեծացնելու էին դպրոցի նիւթական միջոցները։ Հոգաբարձական Խորհրդի յանձնարարութեամբ շինարարական յանձնաժողովը կազմել տուեց 4-րդ յարկի յատակագիծը և բանակցութիւն սկսեց ապրանքաբարձ մեքենաներ շինող ֆիրմաների տեղիս ներկայացուցիչների հետ. բայց Հոգաբարձական Խորհուրդը, իրանից անկախ

հանգամանքների պատճառով, հարկադրուեց առ ժամանակ յետաձգել այդ որոշումների իրագործումը։

4. Չքաւոր աշակերտուհիներին դպրոցի կողմից տըրուած օժանդակութիւնը (նախաճաշ, ձրի ուսում, դասական պիտոյքներ, բժշկական օգնութիւն և այլն) աւելի ընդլայնելու նպատակով՝ որոշեց հիմնել դպրոցի չքաւոր աշակերտուհիներին օգնող յատուկ ընկերութիւն, որի կազմակերպչական աշխատանքներին առանձնապէս նպաստեցին մայրապետ Հ. Թայիրեան և պ. Գ. Տէր-Ստեփանեանը։ Քըննութեան առնելով Հոգաբարձական և Մանկավարժական մարմիններից ընտրուած յանձնաժողովի (Հոգաբարձութեան կողմից ընտրուած էին պ. պ. Յ. Արղութեան և Գ. Տէր-Ստեփանեան) մշակած կանոնադրութիւնը՝ ընդունեց այն և կարգադրեց ներկայացնել պատշաճաւոր իշխանութեան հաստատութեան։

5. Դպրոցի ուսումնական մասի նկատմամբ նպատակայարմար գտաւ գրաւոր դիմել Նորին Վեհափառութեան, որ առ ժամանակ յետաձգի դպրոցի ծրագրի հաստատութիւնը, մինչև որ ինքն ևս ծանօթանայ նրա հետ և անէ իւր դիտողութիւնները, եթէ կունենայ, քանի որ նախորդ կազմը այդ ծրագիրը Վեհ. Հայրապետի հաստատութեան էր ուղարկել, երբ նոր կազմն արդէն ընտրուած և հաստատուած էր։ Ստանալով Նորին Վեհափառութեան թոյլտւութիւնը՝ մանրամասն զբաղուեց ուսման ծրագրի խնդրով յաջորդ ուսումնական տարում։

6. Վաղուց զգացած մեծ կարիք էր, որ դպրոցաւարտ սանուհիներին, որոնք իրենց կեանքի ասպարէզ են ընտրում ուսուցչութիւնը, տալ ամենաանհրաժեշտ մանկավարժական գիտելիքներ։ Հոգաբարձական Խորհուրդն զբաղուելով այդ խնդրով՝ եկաւ այն եզրակացութեան, որ դըպրոցիս տնտեսական միջոցները (քարվանսարայի կրպակների վարձագինն աւելացնելու շնորհիւ) հնարաւորութիւն են տալիս բանալու Ը-րդ լրացուցիչ դասարան, որի մէջ

գլխաւորապէս պէտք է աւանդուեն մանկավարժական առարկաներ։ Այդ կարիքի համար Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Խորհուրդն որոշում ունէր—տալ տարեկան 1000 րուբլի նպաստ, եթէ Յովնանեան դպրոցի Հոգաբարձական Խորհուրդը բաց կանէր Ը. մանկավարժական դասարան. Հոգաբարձական Խորհուրդը որոշեց բանալ Ը. դասարան իւր միջոցներով՝ հրաժարուելով Բարեգ. Ընկ. Խորհուրդի առաջարկած նպաստից այն հանգամանքն ի նկատի ունենալով, որ առաջարկած գումարը գործադրւում է հայոց ծխական կարիքաւոր դպրոցների համար։

7. Ը. դասարանի մանկավարժութեան գործնական պարապմունքների համար Հոգաբարձական Խորհուրդը բանակցութիւն սկսեց Բեթղեհէմի նոր բացուած ծխական դպրոցի Հոգաբարձութեան հետ իւր անդամ պ. Գ. Տէր-Ստեփանեանի միջոցով, որ միաժամանակ այդ դըպրոցի Հոգաբարձութեան նախագահն էր, և որոշեց տարեկան 200 րուբլի նպաստ տալ այդ դպրոցին այնքան ժամանակ, որքան դպրոցին Ը. դասարանի աշակերտուհիները ուսուցիչների ղեկավարութեամբ կօգտուին դպրոցից փորձնական դասերի համար, որպէս վարժոցից։

Վերոյիշեալ հիմնական խնդիրների քննութեամբ զբաղուելով հանդերձ՝ հերթական նիստերում ուշադրութեան է առել և դպրոցի ընթացիկ կեանքին վերաբերեալ խնդիրների կարգաւորումը։ Այսպէս, ուսումնական տարուայ վերջը մտաւոր աշխատանքից և վատ սնունդից հիւծուած ամենակարիքաւոր աշակերտուհիներից 6 հոգու, որոնք բժշկի վկայութեամբ կազդուրուելու կարիք ունէին, Թոքախտի դէմ կռուող ընկերութեան Վարչութեան միջոցով ուղարկուել են բժ. Գամբաշիձէի սանատորիան, վճարելով պահանջած գումարը։

Հոգաբարձական Խորհուրդն ի նկատի ունենալով դպրոցի նախկին կրօնուսոյց հանգուցեալ Արս. ա. ք. Բագրատունու այրու խնդիրը—շարունակել հանգուցեալին

տուած նպաստը մինչև դպրոցում սովորող աղջկայ աւարտելը՝ որոշեց տալ տարեկան 240 րուբլի նպաստ հանգուցեալի դստեր, մինչև դպրոցիս դասընթացն աւարտելը։

Տնտեսական կառավարիչը՝ իւր ռոճիկի նկատմամբ համաձայն չլինելով նախորդ Հոգաբարձական Խորհրդի արած որոշման՝ շարունակել էր իւր պաշտօնը առանց ռոճիկ ստանալու. այս առթիւ նա գրաւոր դիմում անելով Հոգաբարձական Խորհուրդին խնդրում էր վճարել իրեն հասանելիք անցեալ ռոճիկը և որոշել իւր ռոճիկի չափը։ Հոգաբարձական Խորհուրդն զբաղուելով այդ հարցով՝ որոշեց տալ նրան չվճարուած ռոճիկները համաձայն նախորդ Հոգաբարձական Խորհրդի որոշման, և ապագայի համար ռոճիկն աւելացնել 300 րուբլով։

Յունիսի 9-ին լրանում էր դպրոցի տեսուչ պ. Ստ. Մալխասեանցի պաշտօնավարութեան եռամեայ ժամանակամիջոցը. պ. տեսուչը Հոգաբարձական Խորհուրդին ներկայացրեց իւր գրաւոր հրաժարականը։ Հոգաբարձական Խորհուրդն առաջարկեց պ. Ստ. Մալխասեանցին մի տարի ևս շարունակել իր պաշտօնը, որին պ. Ստ. Մալխասեանցը տուեց իր համաձայնութիւնը։

Հոգաբարձական Խորհուրդը յընթացս վերոյիշեալ անյետաձգելի զբաղմունքների արձագանգ է տուել հասարակական բնոյթ կրող այլ և այլ ձեռնարկութիւններին և հանդէսներին։ Այսպէս, մասնակցել է դերասան Գ. Տէր-Դաւթեանի 40-ամեայ բեմական գործունէութեան յոբելեանին ներկայացուցիչ ուղարկելով դպրոցի կողմից բժ. Բ. Աղասարբեանին, մասնակցել է, յանձին իւր անդամ Յ. Արղութեանի և դպրոցի տեսուչ Ստ. Մալխասեանցի, տառերի գիւտի 1500-ամեայ և հայկական տպագրութեան 400-ամեայ յոբելեանական տօները Թիֆլիսում կազմա-

*կերպող յանձնաժողովի ընտրութիւններին. ուղերձով շնորհաւորել է բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանի գրական գործունէութեան 30-ամեայ յոբելեանը, իսկ ներկայացուցիչն է ունեցել, յանձին փոխ-նախագահ Ա. Արեգեանի, Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ յոբելեանական հանդէսներին։ Դպրոցի Տեսչին ներկայացուցիչ է ուղարկել Ներսիսեան դպրոցի նկարչութեան ուսուցիչ Յ. Տամչինեանի (այժմ հանգուցեալ) 25-ամեայ ուսուցչական գործունէութեան յոբելեանին։*

# ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒ

1912 Թ. ՍԵՊՏ. – 1913 Թ. ՍԵՊՏ.

ԱԿՏԻՒ **Հաշուեկշ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դրամարկղ | | 1.760 | — | |
| 2. | Անշարժ կայք | | | | |
| | ա. Քարվանսարայ, Սիօնի փողոցում | 400.000— | | | |
| | բ. Կից կրպակներ, Կոլոկոլնի Փողոցում | 7.060—91 | | | |
| | գ. Դպրոցի շէնք, Բեհբութեան փողոցում № 14 | 50.000— | 457.060 | 91 | |
| 3. | Շարժական կայք | | | | |
| | ա. Դպրոցական կարասի | 8259—66 | | | |
| | բ. Ուսումնական պարագա. | 2337—53 | | | |
| | գ. Գրադար. (1910 թ. սեպ.ից) | 482—75 | | | |
| | դ. Ֆիզիքական կաբինէտի իրեր (1911 թ. սեպ.ից) | 470—78 | 11.550 | 72 | |
| 4. | Տոկոսաբեր թղթեր<br>Թիֆլիսի քաղաքային վարկի ընկ. լիտերալնիյ 2րդ կարգի 5% օբլիգացիաներ 96.000 ր. նոմինալ արժողութեան 717 թերթ 1000-ական և 50 թերթ 500-ական ռուբլանոց. պահւում են նոյն ընկ. բանկում №№ 7, 8 անդորրագրերով. իսկական արժէքը a' 89 | | 85.440 | — | |
| 5. | Թիֆլիսի Առ. բանկում ընթացիկ հաշւով № 3228 | | 2.506 | 94 | |
| 6. | Աւանսներ | | 15 | — | |
| 7. | Ապահովագրութիւն | | | | |
| | ա. Դպրոցի շէնքի 1912 թ. սեպտ.—1913 յունվ. 1-ը | 40—83 | | | |
| | բ. Դպրոցի շարժակ. կայքի՝ 1912 թ. 26/VIII—1913 թ. 26/IV | 22—50 | | | |
| | գ. Քարվանսարայի շէնքի 1912 թ. սեպտ.—1913 թ. 1/II | 60—25 | 123 | 58 | 558.457 |
| | | | | | 558.457 |

## ւ 1-ն սեպտ. 1912 թ. ՊԱՍԻՒ

| | | | |
|---|---|---|---|
| Անցնող գումարների հաշիւ | | | |
| Ստացուած է փոխարինաբար 1912/13 ուս. տարուայ մուտքից | — | — | 527 62 |
| Դրամագլուխ | — | — | 557.929 53 |
| | | | 558.457 15 |

# ԵԿԱՄՈՒՏ

| | | 1912/13 ուս. տ. նախահաշուով սպասւում էր | | Իրօք եղ… եկամու… |
|---|---|---|---|---|
| 1 | Քարվանսարայի կրպակների վարձ | 27,000 | — | 27,43 |
| 2 | 96,100 ր. նոմինալ արժող. 5 % օբլիգաց. զուտ %-ը | 4560 | — | 456 |
| 3 | Ուսման թոշակ | 3200 | — | 339 |
| 4 | Ձեռագործի իրերի վաճառումից | 50 | — | — |
| 5 | Անակնկալ մուտքեր | — | — | 27 |
| | | 34,810 | — | 35,66 |
| | Թիֆլիսի առևտրակ. բանկի ընթացիկ հաշուից | | — | 2,04 |
| | Փոխադրելի | 34,810 | — | 37,719 |

ԾԱԽՍ

| Դպրոցի ծախսեր | 1912/13 ուս. տ. նախահաշուով ենթադրւում էր | | Իրօք եղել է | |
|---|---|---|---|---|
| Ռոճիկ Տեսչին | 2000 | — | 2000 | 04 |
| » ուսուց. և 2 վերակացուհիներին | 1600 | — | 1599 | 96 |
| » Մանկվարժ. ժողովի քարտուղարին | 100 | — | 99 | 96 |
| » Գրադարանապետին | 180 | — | 180 | — |
| Դասագին | 16555 | — | 16531 | 39 |
| Գրաւորների վարձատրութիւն | 770 | — | 769 | 92 |
| Ռոճիկ դպրոցի բժշկին | 500 | — | 500 | 04 |
| » բժշկի օգնականին | 300 | — | 300 | — |
| » Հոգաբարձական Խորհուրդի քարտուղարին | 840 | — | 840 | — |
| » Ծառաներին (4 հոգի, ամառը 3) | 1080 | — | 1020 | — |
| » Դռնապանին | 240 | — | 240 | — |
| | 24165 | — | 24081 | 31 |
| Իգմիրեան կաթողիկոսի անուան որդեգրուհու ծախս | 40 | — | 40 | 50 |
| Դիւանական-գրասենեկային և տպարանական ծախսեր | 200 | — | 245 | 89 |
| Դպրոցական հանդէսներ և էքսկուրսիա | 250 | — | 108 | 16 |
| Բժշկական օգնութիւն | | | | |
| ա. Դեղորայք | 120 | — | 221 | 58 |
| բ. Թուլակազմ աշակերտուհիներին սանատորիա | | | 237 | 08 |
| Չքաւոր աշակերտուհիներին նախաճաշ դպրոցում | 500 | — | 382 | 05 |
| Հիմնադրի հոգեհանգիստ | 60 | — | 65 | — |
| Վառելափայտ | 500 | — | 461 | 67 |
| Էլեկտրական լուսաւորութիւն | | | 116 | 98 |
| Ջուր | 80 | — | 66 | 30 |
| Մանր վերանորոգութիւն | 500 | — | 461 | 82 |
| Կահ-կարասիի վերանորոգութիւն | 50 | — | 26 | 77 |
| Շինութեան ապահովագրութիւն | 123 | — | 122 | 35 |
| Շարժական կայքի ապահովագրութիւն | 34 | — | 33 | 75 |
| Փոխադրելի | 2457 | — | 2679 | 90 |

ԵԿԱՄՈՒՏ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | 34.810 | — | 37.71 | |
| | 34.810 | — | 37.719 | |

## ԾԱԽՍ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | 2.457 | — | 2.679 | 90 |
| Ձեռագործի նիւթեր | 50 | — | 52 | 25 |
| Անակնկալ ծախսեր | 200 | — | 23 | 85 |
| Մանր ծախսեր | 100 | — | 264 | 38 |
| | 2.807 | — | 3.020 | 38 |
| | 24.165 | — | 24.081 | 31 |
| Դպրոցի ամբողջ ծախսը | 26.972 | — | 27.101 | 69 |
| Քարվանսարայի ծախսեր | | | | |
| Ռոճիկ կառավարչին՝ 1911 թ. հոկտ. մինչև 1912 թ. սեպտ. | | | 550 | — |
| » » 1912 թ. սեպտ. մինչև 1913 թ. սեպտ. | 600 | — | 600 | — |
| » 2 դռնապանին | 480 | — | 480 | — |
| » աղբ թափող մշակին (դպրոցինը) | 72 | — | 72 | — |
| Տուրքեր՝ պետական և քաղաքային | 4.000 | — | 3.647 | 16 |
| Շէնքի ապահովագրութիւն | 145 | — | 133 | 25 |
| Մանր վերանորոգութիւն | 500 | — | 238 | 11 |
| Վառելիք և էլէքտրական լոյս | 50 | — | 276 | 48 |
| Ջուր | 150 | — | 76 | 07 |
| Մանր ծախսեր | 100 | — | 129 | 83 |
| | 6.097 | — | 6.202 | 90 |
| Նպաստներ | | | | |
| Կուսանաց վանքին | 300 | - | 300 | — |
| Ախալքալաքի հայոց ծխ. դպրոցին | 150 | — | 150 | — |
| Հանգ. Արսէն ա. ք. Բագրատունու ընտանիքին | 500 | | 499 | 92 |
| | 950 | | 949 | 92 |
| | 34.019 | — | 34.254 | 51 |
| Մուտքի և ելքի տարբերութիւնը | 791 | — | 3.464 | 52 |
| | 34.810 | — | 37.719 | 03 |

ԴԵԲԵՏ

# Եկամտի եւ ծախ

| | | Նախահաշւով | | Իրօք մուտ |
|---|---|---|---|---|
| 1 | Թոշակարկղի գանձարանին ռոճիկների 6 %-ը | 1.370 | 88 | 1.370 |
| 2 | Դպրոցական կահ-կարասի | 100 | — | 151 |
| 3 | Ուսումնական պարագաներ | 150 | — | 330 |
| 4 | Ֆիզիքական կաբինէտ | 400 | — | — |
| 5 | Գրադարան | 250 | — | 211 |
| | | 2.270 | 88 | 2.064 |
| | Դրամարկղ առ 1-ն սեպտ. 1913 թ. | — | — | 1.400 |
| | | — | — | 3.464 |

## ...արբերութեան հաշիւ ԿՐԵԴԻՏ

| | | | |
|---|---|---|---|
| *Եկամտի և ծախսի տարբերութիւնը* | — — — | | 3464 52 |
| | — — — | | 3464 52 |

ԱԿՏԻՒ **Հաշուեկշի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | 1400 | 42 | |
| 2 | Թղթակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 3130 | 25 | |
| 3 | Անշարժ կայք<br>ա. Բարվանասարայ, Սիօնի փողոցում 400,000 ր.<br>բ. Կից նոր կրպակներ, Կօլօկօլնիյ փողոցում 7,060 ր. 91<br>գ. Դպրոցի շէնքը, Բէհբութեան փողոց № 14 50,000 ր. — | 457,060 | 81 | |
| 4 | Շարժական կայք<br>ա. Դպրոց. կահ-կարասի 8411ր. 31կ.<br>բ. Ուսումն. պարագաներ 2667ր. 90կ.<br>գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ.-ից) 470ր. 78կ.<br>դ. Գրադարան (1910 թ. սեպտ.-ից) 694ր. 58կ. | 12,244 | 57 | |
| 5 | Տոկոսաբեր թղթեր<br>96,100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի քաղաքային վարկի ընկ. լիտերալնիյ 5 % օբլիգացիաների (48-ը 500-ական րուբլանոց, 71-ը 1000-ական րուբլանոց à 89, 1-ը 1000 րուբլանոց և 1-ը 100 րուբ. a' 84) իսկական արժէքը | 85,474 | — | 559,310 |
| 6 | Աւանս | 15 | — | |
| 7 | Ապահովագրութիւն<br>ա. Դպրոցի շէնքի՝ 1913 սեպ. 1914 թ. յուն. 1-ը 40—83<br>բ. Շարժական կայքի՝ 1913 թ. օգ. 26-ից—1914 թ. ապ. 26-ը 22—50<br>գ. Բարվանասարայի շէնքի՝ 1913 թ. սեպ.—1914 թ. փետ. 1-ը 60—25 | 123 | 58 | 138 |
| | | | | 559,448 |

ը 1-Ն սեպտ. 1913 թ. ԴԱՍԻԻ

| | | | |
|---|---|---|---|
| Դրամագլուխ | — | — | 559,448 73 |
| | — | — | 559,448 73 |

ԱԿՏԻՒ Համեմատական Հաշուէկ

| | | Առ 1-ն սեպտ. 1912 թ. | | Առ 1-ն 1913 |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | — | — | 140 |
| 2 | Թոշակարկղ | 1760 | — | 313 |
| 3 | Անշարժ կայք | | | |
| | ա. Քարվանսարայ, Սիօնի փողոցում 400000ր. — | | | |
| | բ. Կից նոր կրպակներ, Կօլօկօլնիյ փողոցում 7060ր. 91 | | | |
| | գ. Դպրոցի շէնք, Բէհբութեան փողոց № 14 50000ր. — | 457,060 | 91 | 457,06 |
| 4 | Շարժական կայք | | | |
| | ա. Դպրոցական կահ-կարասի | 8259 | 66 | 841 |
| | բ. Ուսումնական պարագաներ | 2337 | 53 | 266 |
| | գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ. սկսած) | 470 | 78 | 47 |
| | դ. Գրադարան (1910 թ. սեպ. սկսած) | 482 | 75 | 69 |
| 5 | Տոկոսաբեր թղթեր | | | |
| | 96000ր. նոմինալ արժ. 5 % օբլիգ. 96100ր. » » » իսկական արժէք | 85,440 | — | 85,474 |
| 6 | Թիֆլիսի Առեւտր. Բանկի ընթացիկ հաշիւ | 2506 | 94 | — |
| 7 | Ապահովագրութիւն | | | |
| | ա. Դպրոցի շէնքի | 40 | 83 | 40 |
| | բ. Շարժական կայքի | 22 | 50 | 22 |
| | գ. Քարվանսարայի | 60 | 25 | 60 |
| 8 | Աւանս | 15 | — | 15 |
| | | 558,457 | 15 | 559,448 |

## ...ր առ 1-ն սեպտ. 1912 թ. եւ 1913 թ. ՊԱՍԻՒ

| | Առ 1-ն սեպտ. 1912 թ. | | Առ 1-ն սեպտ. 1913 թ. | |
|---|---|---|---|---|
| Անցնող գումարների հաշիւ | 527 | 62 | — | — |
| Դրամագլուխ | 557.929 | 53 | 559.448 | 73 |
| | 558.457 | 15 | 559.448 | 73 |

ՄՈՒՏՔ

# Համեմատական Ցա…

| № | | 1911—1912 ուս. տ. Նախահաշիւ | | Ճիշտ ստացուած | | 1912—1913 ուս. տ. Նախահաշիւ | | Ճիշտ ստացուած | | 191… ուս… Նախ… |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քարվանսարայից | 26.444 | — | 26.232 | 05 | 27.000 | — | 27.436 | 50 | 30.5… |
| 2 | 96.000 ր. 5 % օբլ. զուտ % % | 4.560 | — | 4.560 | — | 4.560 | — | 4.564 | 74 | 4.5… |
| 3 | Ուսման վարձ | 3.000 | — | 3.158 | — | 3.200 | — | 3.392 | 50 | 3.6… |
| 4 | Ձեռագործի իրերի վաճառումից | 100 | — | 23 | 75 | 50 | — | — | — | |
| 5 | Անակնկալ մուտք | 250 | — | 1.060 | 39 | — | — | 276 | 13 | 2… |
| 6 | Առև. բանկի ընթ. հաշ. % | — | — | 79 | 12 | — | — | — | — | |
| | | 34.354 | — | 35.113 | 31 | 34.810 | — | 35.669 | 87 | 38.91… |

## …աշիւներ 1911/12, 1912/13, 1913/14 ուս. տ. տ. ԵԼՔ

| | 1911—1912 ուս. տ. Նախահաշիւ | | 1911—1912 ուս. տ. Ճիշտ ծախսուած | | 1912—1913 ուս. տ. Նախահաշիւ | | 1912—1913 ուս. տ. Ճիշտ ծախսուած | | 1913—1914 ուս. տ. Նախահաշիւ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ռոճիկներ ուսուցչական …խմբին, պաշտօնեաներին և ծառաներին | 22.336 | — | 22.385 | 37 | 24.165 | — | 24.081 | 31 | 26.015 | — |
| Թոշակարկղին | 1 260 | — | 1.260 | — | 1.370 | 88 | 1.370 | 25 | 1.481 | 70 |
| Ուսումնական պարագաներ, ֆիզիքական կաբի…նէտ, գրադարան, կահ…կարասի, ձեռագործի նիւ…թեր, մանր վերանորոգու…թիւններ, շէնքի և շար…ժական կայքի ապահովա…գրութիւն, դպրոցական …անդէններ, էքսկուրսիա, …եղորայք, ջուր, լուսաւո…րութիւն, վառելիք, դիւա…նական և տպարանական; …նալէնկալ և մանր ծախսեր | 3.477 | — | 4.700 | 46 | 3.147 | — | 3.267 | 18 | 3.096 | — |
| Նախաճաշ չքաւոր աշակերտուհիներին | — | — | 108 | 24 | 500 | — | 382 | 05 | 400 | — |
| Հիմնադրի հոգեհանգիստ | 60 | — | 59 | — | 60 | — | 65 | — | 160 | — |
| Քարվանսարայի վերաբերեալ՝ ռոճիկներ և այլ ծախսեր | 5.067 | — | 5.182 | 61 | 6.097 | — | 6.202 | 90 | 6.135 | — |
| Նպաստներ | 950 | — | 949 | 92 | 950 | — | 949 | 92 | 890 | — |
| | 33.150 | — | 34.645 | 60 | 36 289 | 88 | 36.318 | 61 | 38.087 | 70 |

*96.100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5 % լիտերալնիյ օբլիգացիա երի №№-ը*

72 հատ 1000-ական ռուբլանոց

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15,398, | 15,411, | 15,424, | 15,108, | 15,124, | 15,434 |
| 15,399, | 15,412, | 15,425, | 15,109, | 15,125, | 15,435 |
| 15,400, | 15,413, | 15,426, | 15,110, | 15,126, | 15,440 |
| 15,401, | 15,414, | 15,427, | 15,112, | 15,127, | 15,441 |
| 15,402, | 15,415, | 04,166, | 15,113, | 15,253, | 15,442 |
| 15,403, | 15,416, | 14,248, | 15,114, | 15,254, | 15,458 |
| 15,404, | 15,417, | 14,678, | 15,115, | 15,376, | 18,729 |
| 15,405, | 15,418, | 14,966, | 15,116, | 15,428, | |
| 15,406, | 15,419, | 14,967, | 15,117, | 15,429, | |
| 15,407, | 15,420, | 14,968, | 15,118, | 15,430, | |
| 15,408, | 15,421, | 14,969, | 15,121, | 15,431, | |
| 15,409, | 15,422, | 15,106, | 15,122, | 15,432, | |
| 15,410, | 15,423, | 15,107, | 15,123, | 15,433, | |

48 հատ 500-ական ռուբլանոց

| | | | | |
|---|---|---|---|---|
| 05,389, | 06,245, | 7601, | 9688, | 9759, |
| 05,969, | 06,246, | 7602. | 9737, | 9760, |
| 06,077, | 06,247. | 7603, | 9750, | 9761, |
| 06,078, | 06,249, | 7604, | 9751, | 9762, |
| 06,080, | 06,250, | 9448, | 9752, | 9763, |
| 06,096, | 06,251, | 9449, | 9753, | 9764, |
| 06,097, | 06,252, | 9450, | 9754, | 9765, |
| 06,100, | 06,253, | 9451, | 9755, | 9766, |
| 06,104, | 06,254, | 9641, | 9756, | |
| 06,244, | 06,539, | 9687, | 9757, | |

1 հատ 100 ռուբլանոց № 16,986։

Նախագահ Հոգաբարձական Խորհրդի

*Տ. Մեսրոպ եպիսկոպոս*

Անդամներ

*Մայրապետ Հ. Թայիրեան*

*Աւետաշէս Արեգեան (փոխ-նախ.)*

*Յովսէփ Արղութեան*

*Արշակ Բաբեան*

*Գարեգին Տէր-Ստեփանեան*

*Տեսուչ Ստ. Մալխասեանց*

*Քարտուղար Մ. Յարութիւնեան։*

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

*Ուսումնարանական տարուայ սկզբին, վերաքննութիւններից և նորեկների ընդունելութիւնից յետոյ, աշակերտների թիւն էր* 384, *որոնք զետեղուած էին* 7 *հիմնական և* 3 *զուգընթաց դասարաններում հետևեալ կերպով.— Ա. հիմն.՝* 42, *Ա. զուգ.՝* 33, *Բ. հիմն.* 32, *Բ. զուգ.՝* 43, *Գ. դաս.* 42, *Դ. դաս.* 37, *Ե. հիմն.՝* 32, *Ե. զուգ.՝* 35, *Զ. դաս.* 50, *Է. դաս.* 38։

*Յունուարի սկզբին քննութեամբ ընդունուեցին դարձեալ* 9 *աշակերտուհի, որով տարուայ ընթացքում նրանց բարձրագոյն թիւը եղաւ* 393։

*Տարուայ ընթացքում զանազան պատճառներով դըպրոցից հեռացան* 24 *աշակերտուհի, այնպէս որ տարուայ վերջին աշակերտուհիների ընդհանուր թիւն էր* 369։

*Դպրոցում ուսումն սկսուեց սեպտեմբերի* 2-*ին (բացումը* 1-*ին) և շարունակուեց մինչև մայիսի* 20-*ը։ Տարուայ ընթացքում դասարանական պարապմունք եղել է* 178 *օր։*

*Մայիսին կատարուեցին հրապարակական քննութիւններ Է. դասարանում, իսկ միւս դասարաններում ստուգութիւններ, որոնց հիման վրայ աշակերտուհիների յառաջադիմութիւնը արտայայտուեց հետևեալ կերպով.*

| Դաս | Թիւ | փոխադր. | վերաքնն. | մնում են | արձակ. |
|---|---|---|---|---|---|
| Ա. հիմն. | 42 | 18 | 13 | 9 | 2 |
| Ա. զուգ. | 32 | 14 | 9 | 9 | — |
| Բ. հիմն. | 31 | 12 | 13 | 5 | 1 |
| Բ. զուգ. | 38 | 17 | 14 | 6 | 1 |
| Գ. դաս. | 41 | 12 | 21 | 5 | 3 |
| Դ. դաս. | 36 | 12 | 20 | 4 | — |
| Ե. հիմն. | 30 | 14 | 14 | 2 | — |
| Ե. զուգ. | 33 | 13 | 16 | 3 | 1 |
| Զ. դաս. | 48 | 28 | 19 | 1 | — |
| Է. դաս. | 38 | 29 | 4 | 4 | 1 |
| | 369 | 169=45,8% | 143=38,7% | 48=13% | 9=2,5% |

*Եթէ փոխադրուողների տոկոսի վրայ աւելացնենք վերաքննելիների $^2/_3$ մասը, որոնք սեպտեմբերին նոյնպէս կփոխադրուեն՝ կստացուի մօտ 72 % յառաջադիմութիւն, որ աւելի քան բաւարար պէտք է համարել։*

## ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՎԱՐՔԸ

*Աշակերտուհիների վարքի մէջ առանձին աչքի ընկնող պախարակելի բան չէ նկատուել. բոլորը, բացի մէկից, ստացել են վարքից 5։*

Սովորական զանցառութիւնները և մանր-մունր պակասութիւնները վերացուած են դաստիարակչական միջոցներով, առանց պատիժների։

## ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշուէտուութեան տարում աշակերտուհիների բացակայութեան գումարն է 20059 դաս, կամ իւրաքանչիւր աշակերտուհու վրայ գալիս է 54 բացակայութիւն։ Սակայն սա իսկական պատկեր չէ բացակայութեան. որովհետև աշակերտուհիներից շատերը երկարատև հիւանդութեան պատճառով բացակայելով՝ նրանց բազմաթիւ բացակայութիւնները ազդում են ընդհանուրի բացակայութեան $^0/_0$-ի վրայ։ Առանձնացնելով 53 աշակերտուհի, որոնք, ըստ մեծի մասին հիւանդութեան պատճառով, 100-ից աւելի բացակայութիւն ունեն, իրանց 10390 բացակայութիւններով՝ կմնայ 316 աշակերտուհու վրայ 9669 բացակայութիւն, կամ միջին 30,5։

Բացակայութիւնների այս թիւը աւելի ևս պակաս կլինէր՝ եթէ Վարչութիւնն ստիպուած չլինէր ժամանակին ուսումնավարձ չբերող աշակերտուհիներին արգելել դպրոց յաճախելը, մինչև ուսումնավարձը ամբողջապէս կամ մասամբ վճարելը։

## ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐԸ

Հաշուէտուութեան տարում դպրոցի եօթդասարանեան լիակատար դասընթացն աւարտեցին ու ատեստատ ստացան հետևեալ 32 աշակերտուհիները։ (Սրանց մեծագոյն մասը, որոնք նշանակուած են աստղանիշով, ցանկութիւն յայտնեցին մնալ նոր բացուելիք ութերորդ դասարանը)։

* Ահարոնեան Արփենիկ—Իգդիրցի
* Ապայեան Անահիտ— Ցղնեցի
Ասլանեան Մանեակ - Թիֆլիսեցի

Արզումանեան Արփենիկ—Թիֆլիսեցի
* Աւագեան Գայիանէ—Ախալցխացի
* Աւագեան Նունէ—Յղնեցի
* Աւագեան Շուշանիկ—Յղնեցի
* Աշչեան (Բաղդասարեան) Արաքսիա —Ալէքսանդրապ.
* Գէորգեան Աննա—Շուշեցի
* Գօզալեան Մարիամ—Թիֆլիսեցի
* Եարալեան Վարսենիկ—Թիֆլիսեցի
* Թարխանադեան Մարիամ—Թիֆլիսեցի
Խիզանեան Աննա—Թելաւեցի
Կանայեան Մարգարիտ—Իգդիրցի
* Ղուլիջանեան Վարսենիկ—Թիֆլիսեցի
* Մակարեան Թամար—Թիֆլիսեցի
* Մեհրաբեան Վարսենիկ—Թիֆլիսեցի
* Մկրտչեան Շուշանիկ—Կարնեցի
* Մնացականեան Իսգաբեր—Ախալցխացի
* Յակոբջանեան Սոֆիա—Կարնեցի
* Տէր-Յարութիւնեան Սառդիկ—Ղազախեցի (կողբ գ.)
Յովսէփեան Նատալիա—Թիֆլիսեցի
Մելիքեան Սիրանոյշ—Թիֆլիսեցի
* Նալբանդեան Սիլվիա—Թիֆլիսեցի
* Նալբանդեան Վարսենիկ—Ալէքսանդրապօլցի
* Նալբանդեան Փերրոնէ—Ախալքալաքցի
* Նաւտիկեան Մարիամ—Թիֆլիսեցի
* Ջիլ-Յակոբեան Նունէ—Ախալցխացի
Ջումշուդեան Սիրանոյշ—Թիֆլիսեցի
* Սիրունեան Սառդիկ—Թիֆլիսեցի
Փիրալեան Սաթենիկ—Թիֆլիսեցի
* Օդաբաշեան Մարթա—Ղարսեցի

# Ուսուցչական կազմը 19¹²|₁₃ ուս. տարում

| ԱԶԳԱՆՈՒՆ ԵՒ ԱՆՈՒՆ | Քանիերորդ տարին է ուսուցչում | Որտեղ է սովորել | Ի՞նչ է աւանդում | Շաբաթա-կան քանի դաս ունի | Քանի ժամ է պակասել | Քանի ժամ է ուշացել |
|---|---|---|---|---|---|---|
| Աղաջանեան Արմենակ | 3 | Օդեսայի համալս. | Ռուսերէն | 17 | 11 | — |
| Աղասարեան Բախշի բժ. | 2 | Բժշկ. ակադեմիա | Առողջապահութիւն | 2 | — | — |
| Բաբասեան Յարութիւն | 3 | Գէորգեան ճեմարան | Հայերէն | 24 | — | -- |
| Բէժանեան Հեղինէ | 3 | Գիմնազ.և Ժընևի համ. | Ֆրանսերէն և հանրահաշիւ | 21 | 9 | 17 |
| Դեմիրճեան Դերենիկ | 3 | Ներս. դպ.և Ժըն. համ. | Հայերէն և նոր գրականութիւն | 24 | 6 | 1 |
| Թումանեան Կատարինէ | 2 | Գիմնազիա | Ռուսերէն և Ռուսաստ. աշխարհ. | 14 | 21 | 18 |
| Թումանեան Յարութիւն | 1 | Ն.—Նախ. Թեմ. դպ.և յետ է Մարկովի համլ. | Ռուսաց պատմութիւն | 4 | 1 | -- |
| Կանայեան Խաչատուր | 3 | Գէորգեան ճեմարան | Պատմութիւն Հայոց և եկեղեցա-կան, Հայաստ. աշխարհագր. | 16 | 6 | 2 |
| Խոտիկեան Միսաք | 1 | Գէորգ.ճեմ.և Բեռ.համլ. | Ընդհանուր պատմութիւն | 12 | 6 | 1 |
| Կիւրեղեան Եղիսաբէթ | 12 | Արհեստ. դպրոց | Ձեռագործ | 10 | 5 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մալխասեանց Ստեփան | 3 | Պետրոգր. համալս. | Գրաբար և հին պրակմնութիւն (* որից 4-ը ձրի) | 12* | 11 | 18 |
| Մելիք-Ջհանեան Յովսէփ | 3 | Ուսուցչակ. սեմինար | Ռուսերէն | 20 | 21 | — |
| Մինասեան Արշակ քհնյ. | 13 | Ներս. դպր. և Գերմ. աստուածաբ. դասըն. | Կրօն և քրիստ. վարդապետութ. | 13 | 6 | — |
| Մնացականեան Շուշան. | 12 | Գիմնազիա | Թուաբանութիւն | 12 | 2 | 1 |
| Մուրադեան Կատարինէ | 26 | Գիմնազիա | Թուաբանութիւն | 6 | — | 38 |
| Յարութիւնեան Իսահակ | 3 | Ներս. դպր. և Իենայի համալսարան | Մանկավարժ., հոգեբանութիւն | 7 | 14 | — |
| Յովսէփեան Գէորգ | 3 | Թիֆլս. գեղար. դպր. | Նկարչութիւն, գեղագրութիւն | 20 | 7 | 1 |
| Շաղգամեան Մարիամ | 3 | Բար. Ընկ. կար ու ձևի ուսումնարան | Ձեռագործ, կարուձև | 6 | 1 | — |
| Սարգսեան Նիկողայոս | 3 | Ցիւրիխի համալս. | Բնագիտ., ընդհ. աշխարհագր. | 29 | 9 | 4 |
| Տէր-Յովսէփեան Արշակ | 3 | Օդես. խմբագ. կուրս | Երաժշտութ., խմբ. երգեցող. | 15 | 35 | — |
| Տէրեան Կարապետ | 4 | Գէորգեան ճեմարան և Սորբօնում լսել է | Ֆիզիկա, երկրաչափութիւն | 18 | 51 | 1 |

Վերակացութեան պաշտօն կատարում էին — օր. Կ. Մուրադեան (աւագ վերակացուհի), տիկ. Ս. Դաւթեան (նոյնը և բժշկի օգնական) և տիկ. Արվանեան։ Դպրոցի բժիշկն էր պ. Բ. Աղասարեան, գրադարանապետը՝ պ. Գ. Յովսէփեան։ Տիկ. Դաւթեան բացակայել է 16 օր, տիկ. Արվանեան 14 օր։

Պաշտօնեաների բացակայութեան գլխաւոր պատճառն եղել է հիւանդութիւնը կամ պաշտօնական՝ իրանցից անկախ պատճառներ։ Բացառութիւն է կազմում պ. Ա. Տէր-Յովսէփեանը, որի բացակայութիւնները յաճախ եղել են առանց օրինական պատճառի։

Ուսուցչական կազմը շատ քիչ փոփոխութիւն կրեց հաշուէտարում։

Տիկ. Հ. Տէր-Գրիգորեանը, որ մի տարուայ արձակուրդ էր ստացել հիւանդութեան պատճառով՝ այնքան չէր կազդուրուել, որ կարողանար, առանց հիւանդութեան կրկնուելու կասկածի, ստանձնել իւր պաշտօնը, ուստի համարուեց պաշտօնից հեռացած. պ. Պետր. Տիգրանեանը չունենալով այնքան ազատ ժամեր, որ կարողանար մաթեմատիկայի բոլոր 11 դասերն ստանձնել, ինչպէս առաջարկում էր դպրոցի վարչութիւնը՝ հեռացաւ դպրոցից։ Նոր հրաւիրուեցին պ. պ. Յ. Թումանեան և Մ. Խոստիկեան։

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշուէտու ուս. տարում Մանկավարժական Խորհուրդն ունեցել է 37 նիստ։ —Նիստերին բացակայ են եղել — պ. պ. Բաբասեան, Յովսէփեան—1 անգամ, օր. Մուրադեան, պ. Սարգսեան 2 անգամ, օր. Մնացականեան, պ. Տէրեան—3 անգամ, պ. պ. Ալաջալեան, Խոստիկեան—4 անգամ, պ. Մելիք-Ջհանեան, օր. Շաղգամեան—5 անգամ, պ. Տէր-Յովսէփեան—7 անգամ, բժ. Աղասարեան, տիկ. Կիւրեղեան—8 անգամ, պ. Ի. Յարու-

թիւնեան—10 անգամ, պ. Յ. Թումանեան—12 անգամ(*), տիկ. Կ. Թումանեան—14 անգամ, տիկ. Դաւթեան, Արշակ քահանայ Մինասեան—15 անգամ։ Տիկ. Արվանեան գրեթէ միշտ։ Անթերի յաճախել են նիստերին, բացի նախագահից և քարտուղարից (պ. Կանայեան) օր. Բէժանեան և պ. Դեմիրճեան։

Բացի ընթացիկ հարցերից, Մանկավարժական Խորհուրդն զբաղուել է և մի քանի կարևոր՝ մնայուն նշանակութիւն ունեցող հարցերով։

Անցեալ 1911/2 ուս. տարուայ տեղեկագրի մէջ յիշուած էր Մանկավարժական Խորհրդի աշխատանքը ուսման ծրագրի վերամշակութեան գործում։ Հաշուետարում Մանկավարժական Խորհուրդը շարունակեց այս աշխատանքը։ Մասնաժողովների պատրաստած առանձին առարկաների ծրագիրները ամբողջական նիստերում քննելով և դասատախտակը պատրաստելով (նիստ 10, 14—19), իր պատրաստ աշխատանքը ներկայացրեց Հոգաբարձութեան հայեցողութեան։ Հոգաբարձութիւնը ծանօթանալով ծրագրի հետ՝ նրան վաւերացրեց և 1913 թ. փետրուարի 11-ի նիստում որոշեց՝ ծրագիրն ուղարկել Վեհափառ Կաթողիկոսին ի հաստատութիւն, որ և իրագործուեց փետրուարի վերջին։ Սակայն նորընտիր Հոգաբարձութիւնը կամենալով իւր կողմից ևս ծանօթանալ նոր ծրագրի հետ և եթէ կարիք զգացուի, բարեփոխութիւններ մտցնել նրա մէջ՝ խնդրեց Վեհափառից տակաւին թողնել ծրագրի հաստատութիւնը։ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց յարգել Հոգաբարձութեան այս խնդիրը։

Նորընտիր Հոգաբարձութեան մէջ միտք ծագեց բանալ դպրոցում ութերորդ դասարան, մասամբ ընդհանուր

---

(*) պ. պ. Ի. Յարութիւնեանի և Յ. Թումանեանի համար, ի նկատ ունենալով նրանց գասերի սակաւութիւնը՝ պարտադիր չէ եղել բոլոր նիստերին ներկայ լինելը։

կրթական և մասամբ մանկավարժական ծրագրով։ Ընդհանուր կրթական մասի նպատակը պէտք է լինէր՝ միջոց տալ աշակերտուհիներին սովորելու մի քանի առարկաների դասընթացը լրիւ, քանի որ տարիների փորձը ցոյց էր տալիս, որ եօթդասարանեան դասընթացով չէ կարելի մի քանի առարկաներ լրիւ անցնել։ Բացի սրանից՝ կարևոր զգացուեց ընդհանուր գրականութիւնից էլ փոքր ի շատէ տեղեկութիւններ տալ աշակերտուհիներին, որոնք եօթդասարանեան դասընթացով՝ զուրկ էին մնում այս՝ ընդհանուր կրթական տեսակէտից անհրաժեշտ առարկայից։ Մանկավարժական մասի նպատակը պէտք է լինէր՝ աշակերտուհիներին այնքան պատրաստել տեսականօրէն և գործնականօրէն, որ ուսուցչական ասպարէզ մտնելու հէնց առաջին տարուց բաւական փորձուած և օգտակար դասատուներ լինեն։ Մանկավարժական Խորհուրդը միանգամայն համակրելով այս մտքին՝ Հոգաբարձութեան առաջարկութեամբ կազմեց մի տարուայ համար ժամանակաւոր ծրագիր (Նիստ 29, 31, 33), այն պայմանով, որ առաջիկայ տարում, դպրոցի ընդհանուր ծրագիրը քննելիս՝ Ը. դասարանի համար էլ հաստատուն ծրագիր մշակուի, իբրև շարունակութիւն եօթներորդ դասարանի։ Այս ժամանակաւոր ծրագիրն ընդունուեց Հոգաբարձութեան կողմից՝ առաջիկայ 1913/4 ուս. տարում գործադրելու համար։

Ութերորդ դասարան մտնելը 1913/4 ուս. տարում թողնուեց Է.-ի ընթացաւարտ աշակերտուհիների կամքին, բայց որոշուեց, որ յաջորդ 1914/5 տարուց սկսած պարտադիր լինի բոլորի համար։

Մանկավարժական Ժողովը մշակեց կանոններ այն օրիորդների համար, որոնք գիմնազիան աւարտելուց յետոյ կամենում են մեր դպրոցից էլ վկայական ստանալ հայագիտական առարկաներ անցած լինելու և սահմանեց քննուելիք առարկաների ցուցակն ու ծաւալը։

Նոյնպէս ուշադրութեան առնելով աշակերտուհիների առողջութեան և ֆիզիքական նորմալ զարգացման պահանջները՝ կարևոր համարեց դպրոցում մտցնել մարմնամարզութեան դասեր, որոշելով դրանց համար ժամանակ ու տեղ, ընդունելով շվէդական սիստեմը։ Հոգաբարձութիւնը հաւանութիւն տուեց այս առաջարկութեան, բայց աչքի առաջ ունենալով տեղի անյարմարութիւնը՝ որոշեց նրա գործադրութիւնը յետաձգել առաջիկայ տարուան, երբ հաւանօրէն դպրոցը կվերաշինուի և մարմնամարզութեան համար յարմար սենեակ կպատրաստուի։

Մանկավարժական Խորհուրդը զբաղուեց դարձեալ գրութեան սիստեմի և ձևի խնդրով՝ ի նկատի ունենալով ուղիղ և շեղ գրութիւնների անխտիր գործածութիւնը ի միջի այլոց դպրոցում։ Երկու նիստ նուիրելով այս հարցին և ծանօթանալով մանկավարժական և բժշկական գրականութեան մէջ այս խնդրի առիթով արտայայտուած կարծիքները՝ Մանկավարժական Խորհուրդը որոշեց կանգ առնել շեղ (աջից ձախ) գրութեան ձևի վրայ, որը կարելի է իրագործել՝ նստարանի առաջ ուղիղ գրութեամբ նստելու պայմանով ևս։

Մանկավարժական ժողովը մասնակցութիւն ունեցաւ տարուայ ընթացքում տօնուած յոբելեաններին, ինչպէս Արամեան դպրոցի (Պարսկաստանում), Ղարաբաղի թեմական դպրոցի, բանաստեղծ Յ. Յովհաննիսեանի, դերասան Տէր-Դաւթեանի, ուսուցիչ Յ. Շամշինեանի և Գրերի Գիւտի 1500 ամեակի և Հայ տպագրութեան 400-ամեակի, ուղարկելով յատուկ պատգամաւորներ, շնորհաւորութիւններ և ուղերձներ։

## ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Դպրոցի գրադարանը վերջնականապէս բարեկարգուելով՝ գործում էր կանոնաւորապէս։ Հաշուետուութեան տարում նա հարստացաւ Մանկավարժական Խորհրդի կազ-

*մած ցուցակներով։ Տարուայ վերջին գրադարանն ունէր 1262 անուն հայերէն և 914 անուն ռուսերէն գրքեր, չհաշուած ֆրանսերէն և այլ լեզուներով գրքերը, որոնք ցուցակագրուած չեն։*

---

## ԹՈՇԱԿԱՐԿՂ ԵՒ ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

*Ինչպէս անցեալ տարուայ տեղեկագրի մէջ զեկուցուել էր՝ դպրոցի պաշտօնեաների թոշակարկղի կանոնադրութիւնը մշակուած և ուղարկուած էր Վեհափառ Կաթողիկոսին ի հաստատութիւն։*

*Այս կանոնադրութիւնը հաշուէտւութեան տարում հաստատուեց (1912 թ. նոյեմբեր 20-ին), որով հաստատուն հիմքի վրայ դրուեց թոշակարկղի գոյութիւնը։ Այս կերպով Յովնանեան դպրոցը, Ներսիսեան դպրոցից յետոյ, առաջինը եղաւ, որ իր պաշտօնեաների համար հիմնեց թոշակարկղ, այն էլ աւելի ապահով հիմքերի վրայ, ինչպէս բացատրուած է անցեալ տարուայ զեկուցագրի մէջ։*

*Անցեալ տարի, ինչպէս յիշուած է, դպրոցում սահմանուեց նախաճաշ 50-60 չքաւոր աշակերտուհիների համար։ Նոյնը շարունակուեց և ներկայ տարում։ Սակայն նորընտիր Հոգաբարձութիւնը գտնելով, որ միայն թեթև նախաճաշ տալը բաւականաչափ սնունդ չէ, որ միայն նախաճաշով չեն բաւարարւում չքաւոր աշակերտուհիների կարիքները և որ մենակ դպրոցը իւր սահմանափակ միջոցներով չէ կարող օգնութեան հասնել չքաւոր աշակերտուհիների զանազան կարիքներին՝ միտք յղացաւ հիմնել մի յատուկ ընկերութիւն՝ դպրոցի չքաւոր աշակերտուհիներին նպաստելու համար։ Այս միտքը ընդհանուր հաւանութիւն գտաւ և Մանկավարժական ժողովի կողմից և ձեռնարկուեց հիմնուելիք ընկերութեան կանոնադրութեան մշակման։*

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ԶԲՕՍԱՆՔՆԵՐ, ՀԱՆԴԷՍՆԵՐ

*Հաշուէտարում դպրոցում տեղի ունեցան դասախօսութիւններ երկու նշանաւոր յոբելեանների առիթով— ազգային՝ հայոց գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի, որ սկսուելով 1912-ի հոկտեմբերի 13-ից պիտի վերջանար 1913 հոկտեմբերի 13-ին, և երկրորդը՝ Պետական-Ռոմանովների Տան Թագաւորութեան 300-ամեակը։ Երկու անգամն էլ, դասախօսութիւնների հետ տեղի ունեցան գրական-երաժշտական երեկոյթներ և հիւրասիրութիւն։*

*Նոյնպիսի երեկոյթ-հանդէս տեղի ունեցաւ և Բարեկենդանի արձակուրդին, Վարդանանց տօնի առիթով։*

*Աշակերտուհիները զատկական արձակուրդին, ուսուցիչների առաջնորդութեամբ, կատարեցին զբօսանք քաղաքի շրջակայքում, իսկ պ. բժ. Աղասարեանի ղեկավարութեամբ է. դասարանի աշակերտուհիները այցելեցին քաղաքային լաբօրատօրիան և Արամեան հիւանդանոցը, որտեղ պաշտօնեաները ամենայն սիրալիրութեամբ բացատրում էին աշակերտուհիներին նրանց հետաքրքրող առարկաները, առաւելապէս առողջապահութեան վերաբերեալ։*

*Հեռաւոր էքսկուրսիա կազմակերպել չյաջողուեց հաշուէտուութեան տարում, այլ յետաձգուեց յաջորդ տարուան։*

Տեսուչ՝ Ստ. Մալխասեանց

## 1913—1914 ՈՒՍ. ՏԱՐԻ

*Հաշուէտուութեան տարում Հոգաբարձական Խորհուրդն ունեցել է 34 նիստ, որին մասնակցել են.—*

| | | |
|---|---|---|
| *Սրբազան նախագահ* | | |
| *Տ. Մեսրոպ եպիսկոպոս* | 31 | *անգամ* |
| *Մայրապետ Հ. Թայիրեան* | 26 | » |
| *պ. Ն. Անանեան (այժմ հանգ.)* | 19 | » |
| » *Ա. Աբեղեան (փոխ-նախագահ)* | 33 | » |
| » *Յ. Արղութեան* | 31 | » |
| » *Ա. Բաբեան* | 14 | » |
| » *Գ. Տէր-Ստեփանեան* | 33 | » |
| *Տեսուչ՝ պ. Ստ. Մալխասեանց* | 29 | » |

---

*Ուսումնական տարուայ սկզբից իսկ Հոգաբարձական Խորհուրդն զբաղուեց դպրոցի շէնքի հարցով։ Ներկայ դպրոցական շէնքը սկզբում եղած է մասնաւոր տուն, որ ձեռք բերելով երջանկայիշատակ հիմնադիրը՝ յատկացրել է դպրոցին։ Թերևս սկզբնական շրջանում, երբ դեռ դպրոցը զարգացման ընթացքի մէջ էր, այդ շէնքը կարող էր բաւարար համարուել. իսկ այժմ, երբ դպրոցը դարձել է միջնակարգ, խիստ աչքի են ընկնում շէնքի թերութիւնները։ Այս շէնքն ամենևին չէ համապատասխանում մանկավարժական-առողջապահական պահանջներին, որ և անդրադառնում է աշակերտուհիների առողջութեան և ուսումնական գործի յառաջադիմութեան վրայ։ Միւս կողմից՝ շէնքի փոքրութիւնը հնարաւորութիւն չէ տալիս դպրոցի դռները աւելի լայն բանալ ուսումնատենչ աղջ. առաջ։*

Շէնքի խնդրի քննութեամբ զբաղուելով՝ Հոգաբարձական Խորհուրդն առաջադրեց երկու նպատակ՝ կամ ունենալ դպրոցական նոր շէնք, կամ վերանորոգել ներկայ շէնքը, հնարաւորութեան չափով յարմարեցնելով մանկավարժական-առողջապահական պահանջներին։

Մի շարք նիստերում, մասնագէտ ճարտարապետի մասնակցութեամբ, խորհրդածութիւն ունենալով այդ խնդրի շուրջը՝ Հոգաբարձական Խորհուրդը ներկայումս հնարաւոր համարեց միայն հիմնովին վերանորոգել հին շէնքը և յանձնարարեց ճարտարապետի պատրաստել մակարդակ և նախահաշիւ։ Սակայն, դժբախտաբար, դրա իրագործումը պատերազմի պատճառով անհնար դարձաւ։

Ապա Հոգաբարձական Խորհուրդն զբաղուեց դպրոցի համար եկամուտի նոր աղբիւրներ հայթայթելու խնդրով։ Քարվանսարայի եկամուտներն աւելի ևս շատացնելու նպատակով Հոգաբարձական Խորհուրդը բանակցութեան մէջ մտաւ Երուսաղէմեան փողոցի կողմից հարևան խանութների տէրերի հետ՝ այդ խանութները ձեռք բերելու նպատակով. այդ փողոցից յարմարաւոր մուտք բանալով՝ քարվանսարան պասաժի կերպարանք կստանար, որով և աւելի բանուկ կդառնար, բայց խանութի տէրերի հետ Հոգաբարձական Խորհուրդը համաձայնութեան չեկաւ։

Ուսումնական տարուայ սկզբներին ստացուեց դպրոցի չքաւոր աշակերտուհիներին նպաստող ընկերութեան կանոնադրութեան հաստատութիւնը։

Այս առիթով Հոգաբ. Խորհուրդը հրաւիրեց առաջին ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ 1913 թ. դեկտ. 15-ին, նախագահութեամբ Հոգաբ. Խորհրդի Սրբազան Նախագահ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի և ընտրեց վարչութեան ու վերստուգիչ յանձնաժողովի անդամներ, որոնց և յանձնեց գործի ղեկավարութիւնը։ Համաձայն կանոնադրութեան՝ Հոգաբ. Խորհուրդն իր կողմից ընտրել էր վարչութեան անդամներ 2 հոգի՝ Տնօրհ. Մայրապետ Հ. Թա-

յիրեանին և պ. Գ. Տէր-Ստեփանեանին, Մանկավարժական կազմը՝ բժ. Բ. Աղասարեանին. դպրոցի տեսուչն էլ անդամ է համարւում ըստ կանոնադրութեան։ Ընդհանուր ժողովը իւր կողմից ընտրեց վարչութեան անդամներ.—

Իշխ. Ս. Վ. Արղութեանին, տիկ. Եղ. Ստաքելեանին, տիկ. Շ. Տէր-Մարգարեանին, տիկ. Վ. Անանեանին, բժ. Մ. Մովսիսեանին, փոխ-անդամներ՝ տիկ. Եղ. Կարգանեանին, տիկ. Ա. Խոստիկեանին և պ. Ս. Մելքումեանին. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ պ. պ. Յ. Տէրտէրեանին, Ա. Կարապետեանին և Լ. Տէր-Աւետիքեանին։

Ուսումնական տարւայ սկզբից Հոգաբարձական Խորհուրդը, համաձայն իր որոշման, բացեց Ը. լրացուցիչ դասարան։

Այնուհետև՝ Հոգաբար. Խորհուրդը Մանկավարժական կազմի հետ միասին ձեռնարկեց Ուսման ծրագրի վերամշակման։ Դրա համար 2 կազմերից ընտրուեց մի յանձնաժողով, (Հոգաբարձական Խորհրդի կողմից՝ պ. պ. Ա. Աբեղեան, Յ. Արղութեան, Ա. Բաբեան և Գ. Տէր-Ստեփանեան), որ զբաղուելու էր սկզբնական աշխատանքներով։ Յանձնաժողովը մշակեց առարկաների վերջնական տախտակը, որը և քննութեան առնելով Մանկավարժական և Հոգաբարձական Խորհրդի նիստերում՝ հաստատուեց վերջինիս կողմից և յանձնարարուեց Մանկավարժական խըմբին, համաձայն ընդունուած տախտակի վերամշակել առարկաների ծրագիրը, իսկ Ը. դասարանի համար ժամանակաւոր ծրագրի տեղ կազմել մշտական ծրագիր։

1914/15 ուս. տ. նախահաշիւը կազմելիս Հոգաբարձական Խորհուրդն զբաղուեց ուսուցիչների դասագինն աւելացնելու խնդրով և որոշեց դպրոցում ընդունել 2 կարգի դասագին՝ բարձրագոյն և միջնակարգ ցենզերի։ Նիւթական պատճառով հնարաւորութիւն չունենալով միաժամանակ ներկայ դասագինը յարաբերական չափով աւելացնել՝ Հոգաբարձական Խորհուրդն առ այժմ բարձ-

բագոյն ցենզի համար դասագինն աւելացրեց 5 րուբլով միայն, դարձնելով այն 60 րուբլի, իսկ միջնակարգ ցենզի համար թողեց նոյն դասագինը՝ 55 րուբլի։ 55 րուբլու որոշումը տարածուելու է միայն նոր մտնող ուսուցիչների վրայ, իսկ եղածներին վարձատրութիւն տըրւելու է 60 րուբլի դասագնով։ Այսպիսով 1914/15 ուս. տ. նախահաշուի ծախսերը աւելացան 1830 րուբլով, որով բիւջէն հասաւ 39,752 ր. 40 կոպ. գումարի, առանց դէֆիցիտի։

Հոգաբարձական Խորհուրդը դպրոցի տեսչին հրաւիրել էր մի տարի ևս շարունակել իւր պաշտօնը։ Ուսումնական տարուայ վերջին (յունիսի 5-ին) տեսուչ պ. Ստ. Մալխասեանցը ներկայացրեց իւր հրաժարականը, որ և ընդունուեց։ Ապա Հոգ. Խորհուրդն զբաղուեց նոր տեսուչ հրաւիրելու խնդրով և ընտրեց Թիֆլիսի թեմի ծխական դպրոցների տեսուչ պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանին, որին և ներկայացրեց Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն։

Նոյն տարուայ մէջ Հոգաբարձական Խորհուրդն ունեցաւ մի ցաւալի կորուստ։ 1914 թ. Մարտի 31-ին կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Հոգաբարձական Խորհրդի անդամ, դպրոցի հիմնադրի տոհմի ներկայացուցիչ, Նիկողայոս Յովսէփեան Անանեանը։ Հանգուցեալի կորուստը անփոխարինելի է այն կողմից, որ նա իբրև տոհմի ներկայացուցիչ սերտ կապուած էր զգում իրեն դպրոցի հետ և իւր ուժերի չափով աջակցում էր նրա բարօրութեան. նրա սէրը դէպի այդ հիմնարկութիւնն արտայայտւում էր նրանով, որ չնայած իր 70-ամեայ հասակին՝ ամենայն ճշտութեամբ կատարում էր իւր վրայ դրուած պարտականութիւնը։

Հոգաբարձական Խորհուրդը հանգուցեալի յիշատակը յարգելու համար որոշեց. 1) Ամբողջ կազմով ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի ընտանիքին. 2) Հոգաբար-

և Մանկավարժ. կազմով ներկայ լինել հոգեհանգստին և յուղարկաւորութեան. 3) Բարձր դասարանի աշակերտուհիներին տանել թաղման օրը եկեղեցի. 4) Պատարագին ուղարկել երգեցիկ խումբը. 5) Պսակի փոխարէն 25 րուբլի տալ չքաւոր աշակերտուհիներին նպաստող ընկերութեան և 6) Պահել նրա անունով մի ձրիավարժ աշակերտուհի։

Ն. Անանեանի մահից յետոյ գրաւոր դիմումն եղաւ Յովնանեան տոհմի ներկայացուցիչներին որոշելու՝ թէ ով իրենցից աւագութեան կարգով, համաձայն կտակի, փոխարինելու է հանգուցեալին։

Ուսումնական տարում դպրոցի Ը. դասարանի աշակերտուհիների հետ իշխ. Ս. Վ. Արղութեանը սիրայօժար կերպով, շաբաթը երկու անգամ, երեկոները դպրոցում ձրիաբար անցել է Ֆրէօբէլեան դասընթաց, իսկ գործնական պարապմունքների համար աշակերտուհիներն այցելել են նրա մանկապարտէզը. Հոգաբարձական Խորհուրդը՝ գնահատելով իշխ. Ս. Վ. Արղութեանի աշխատանքը, որոշեց շնորհակալութիւն յայտնել նրան։

---

Ուսումնական տարուայ ընթացքում Հոգաբարձական Խորհուրդն իր մասնակցութիւնն է ցոյց տուել հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւններին.— Տառերի գիւտի 1500 ամեայ և տպագրութեան 400 ամեայ յոբելեանական ազգային մեծ հանդէսներին էջմիածին ներկայացուցիչ է ուղարկել Հոգաբարձական Խորհրդի անդամ պ. Գ. Տէր-Ստեփանեանին։

Հասարակական գործիչներ՝ Ս. Զաւարեանի, Ա. Քալանթարի և Կ. Խատիսեանի մահուան առիթով ցաւակցութիւն է յայտնել իր ներկայացուցչի միջոցով նրանց ընտանիքներին և մասնակցել է ամբողջ կազմով թաղմանը։

*Դպրոցի ուսուցիչ պ. Իս. Յարութիւնեանի 25 ամեայ մանկավարժական գործունէութեան յոբելեանին մասնակցել է ամբողջ կազմով։*

*Դպրոցում բարձր դասարանի աշակերտուհիներն եւ ի պատիւ յոբելեարի, որպէս իրենց ուսուցչի, կազմակերպել են հանդէս հիւրասիրութեամբ, որին մասնակցել են նաև Հոգաբարձուները։*

*Հեռագրով շնորհաւորել է երաժշտագէտ պ. Ն. Տիգրանեանի 30 ամեայ գործունէութեան յոբելեանը։*

# ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒ

## 1913 Թ. ՍԵՊՏ.—1914 Թ. ՍԵՊՏ.

ԱԿՏԻՒ

# Հաշուէկշի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դրամարկղ | | 1.400 | 42 | |
| 2. | Փոստակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | | 3.130 | 25 | |
| 3. | Անշարժ կայք | | | | |
| | ա. Քարվանսարայ, Սիօնի փողոցում | 400.000— | | | |
| | բ. Կից նոր կրպակներ, Կօլօկօլնի փողոցում | 7.060—91 | | | |
| | գ. Դպրոցի շէնք, Բեհբութ՚ան փողոցում № 14 | 50.000— | 457.060 | 91 | |
| 4. | Շարժական կայք | | | | |
| | ա. Դպրոցական կարասի | 8441—31 | | | |
| | բ. Ուսումնական պարագա. | 2667—90 | | | |
| | գ. Գրադար. (1910 թ. սեպ.-ից) | 694—58 | | | |
| | դ. Ֆիզիքական կաբինէտի իրեր (1911 թ. սեպ.-ից) | 470—78 | 12.244 | 57 | |
| 5. | Տոկոսաբեր թղթեր<br>96.100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի քաղաքային վարկի ընկ. լիտերալնիյ 5% օբլիգացիաների (48-ը 500-ական, 71-ը 1000-ական րուբլանոց a՝ 89, գնուած 1911 թ. փետր. 4-ին, 1-ը 1000 րուբլանոց և 1-ը 100 րուբլանոց 2րդ կարգի a՝ 84, գնուած 1912 թ. հոկտեմբեր 12-ին) իսկական արժէքը | | 85.474 | — | 559.310 |
| 6. | Աւանս | | 15 | — | |
| 7. | Ապահովագրութիւն | | | | |
| | ա. Դպրոցի շէնքի 1913 թ. սեպտ.—1914 յունվ. 1-ը | 40—83 | | | |
| | բ. Դպրոցի շարժակ. կայքի՝ 1913 թ. 26/VIII—1914 թ. 26/IV | 22—50 | | | |
| | գ. Քարվանսարայի՝ 1913 թ. սեպտ.—1914 թ. 1/II | 60—25 | 123 | 58 | 138 |
| | | | | | 559.448 |

## ու 1-ն սեպտ. 1913 թ. ՊԱՍՍԻՒ

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Դրամագլուխ* | — | — | 559.448 | 73 |
| | | | 559.448 | 73 |

## ՄՈՒՏՔ

# Եկամտի եւ ծախս

| | | 1913/14 ուս. տ. նախահաշուով սպասւում էր | | իրօք եկել է եկամուտ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Քարվանսարայից | 30,500 | — | *)29,908 | [illegible] |
| 2 | 96,100 ր. նոմինալ արժող. 5 % օբլիգաց. գում. %-ը | 4564 | 75 | 4564 | [illegible] |
| 3 | Ընթացիկ հաշուի 1913 թ. %-ը | — — | — | 62 | [illegible] |
| 4 | Ուսման թոշակ աշակերտուհ. | 3600 | — | 3947 | [illegible] |
| 5 | Ձեռագործի իրերի վաճառումից | 50 | — | 40 | [illegible] |
| 6 | Անակնկալ մուտքեր | 200 | — | 91 | [illegible] |
| | | 38,914 | 75 | 38,614 | [illegible] |
| | Փոխադրելի | 38,914 | 75 | 38,614 | |

*) Մնում է ստանալիք կրպակներից յուլիս և օգոստոս ամիսների վարձը՝ 444 րուբլի, որը մտել է յաջորդ տարուայ հաշիւը:

| Դպրոցի ծախսեր | 1913/14 ուս. տ. նախահաշուով ենթադրւում էր | | Իրօք եղել է | |
|---|---|---|---|---|
| Ռոճիկ տեսչին | 2.000 | — | 1.999 | 92 |
| » ուսուց. և 2 վերակացուհուն | 1.720 | — | 1.719 | 96 |
| » Մանկավարժ. ժողովի քարտուղարին | 100 | — | 99 | 96 |
| » գրադարանապետին | 180 | — | 180 | — |
| Դասագին և գրաւորների վարձատրութիւն | 19.155 | — | 19.154 | 64 |
| Ռոճիկ բժշկին և օգնականին | 700 | — | 699 | 96 |
| » Հոգաբարձ. Խորհր. և տեսչի քարտուղ. | 840 | — | 840 | — |
| » դպրոցի ծառաներին (4 հոգի) | 1.080 | — | 1.080 | — |
| » դռնապանին | 240 | — | 240 | — |
| | 26.015 | — | 26.014 | 44 |
| Իգմիրլեան կաթող. անուան որդեգր. ծախս | 40 | — | 40 | 50 |
| Դիւանական | | | | |
| ա. Գրասենեկ. պէտքեր՝ թուղթ, թանաք են. | 200 | — | 71 | 97 |
| բ. Տպագր. ծախս.՝ բլանկներ, տեղեկագր. են. | | | 163 | 39 |
| Դպրոցական՝ | | | | |
| ա. Հանդէսներ, երեկոյթներ | 250 | — | 143 | 51 |
| բ. էքսկուրսիա | | | 218 | 19 |
| Բժշկական օգնութիւն-դեղորայք | 300 | — | 185 | 24 |
| Նախաճաշ չքաւոր աշակերտուհ. դպրոցում | 400 | — | 385 | 76 |
| Հիմնադրի հոգեհանգիստ | 160 | — | 63 | — |
| Վառելիք | 550 | — | 469 | 26 |
| Էլէքտրական լոյս | | | 80 | 96 |
| Ջուր | 80 | — | 115 | 53 |
| Մանր վերանորոգութիւններ | 200 | — | 1.285 | 18 |
| Կահ-կարասիի վերանորոգութիւն | 30 | — | 41 | 35 |
| Շինութեան ապահովագրութիւն | 82 | — | 80 | 22 |
| Շարժական կայքի ապահովագրութիւն | 33 | — | 33 | 75 |
| Ձեռագործի նիւթեղէն | 50 | — | 60 | 37 |
| Անակնկալ ծախսեր | 200 | — | 125 | — |
| Փոխադրելի | 2.575 | — | 3.563 | 18 |

ՄՈՒՏՔ

# Եկամուտի եւ ծախս

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | 38.914 | 75 | 38.614 | 8 |
| *Վերադարձուել է աւանսի հաշուից* | — | — | 15 | — |
| | 38.914 | 75 | 38.629 | 8 |
| *Մնում էր դրամարկղում առ 1-ն սեպտ. 1913 թ.* | — | — | 1.400 | 4 |
| | 38.914 | 75 | 40.030 | |

## հաշիւ 1913 թ. սեպտ.—1914 թ. սեպտ. ԵԼՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Փոխադրուած | 2.575 | — | 3.563 | 18 |
| 24 | *Մանր ծախսեր* | 200 | — | 282 | 85 |
| 25 | *Տէլէֆօն* | — | — | 81 | 05 |
| | | 2.775 | — | 3.927 | 08 |
| | | 26.015 | — | 26.014 | 44 |
| | *Դպրոցի ամբողջ ծախսը* | 28.790 | — | 29.941 | 52 |
| | Քարվանսարայի ծախսեր | | | | |
| 1 | *Ռոճիկ կառավարչին՝* | 900 | — | 900 | — |
| 2 | *» 2 դռնապանին* | 480 | — | 480 | — |
| 3 | *» աղբ թափողին (և դպրոցինը)* | 72 | — | 72 | — |
| 4 | *Տուրքեր՝ պետական և քաղաքային* | 4.000 | — | 2.584 | 05 |
| 5 | *Շէնքի ապահովագրութիւն* | 72 | — | 70 | 55 |
| 6 | *Մանր վերանորոգութիւններ* | 200 | — | 840 | 55 |
| 7 | *Էլէքտրական լուսաւորութիւն* | 150 | — | 183 | 34 |
| 8 | *Ջուր* | 100 | — | 165 | 93 |
| 9 | *Մանր ծախսեր* | 100 | — | 107 | 75 |
| | | 6.074 | — | 5.404 | 17 |
| | Նպաստներ | | | | |
| 1 | *Կուսանաց վանքին* | 300 | — | 300 | — |
| 2 | *Ախալքալաքի հայոց ծխ. դպրոցին* | 150 | — | 150 | — |
| 3 | *Հանգ. Արսէն ա. ք. Բագրատունու դստեր-աշակ.* | 240 | — | 240 | — |
| 4 | *Բեթղեհէմի ծխական դպրոցին* | 200 | — | 200 | — |
| | | 890 | — | 890 | — |
| | | 35.754 | — | 36.235 | 69 |
| | *Մուտքի և ելքի տարբերութիւնը* | 3160 | 75 | 3.794 | 57 |
| | | 38.914 | 75 | 40.030 | 26 |

ԴԵԲԵՏ

# Եկամտի եւ ծախսի

| | | Նախահաշուով | | Իրօք տրուած | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թոշակարկղի գանձարանին տոկոսների 6 %-ը | 1.481 | 70 | 1.481 | 6 |
| 2 | Դպրոցական կահ-կարասի | 100 | — | 141 | 9 |
| 3 | Ուսումնական պարագաներ | 250 | — | 230 | 8 |
| 4 | Ֆիզիքական կաբինէտ | 200 | — | 242 | 9 |
| 5 | Գրադարան | 200 | — | 212 | 3 |
| 6 | Աշակերտական բեմին (վարպետի աշխատավարձ և այլ մանր ծախք.) | — | — | 68 | 1 |
| | | 2.231 | 70 | 2.377 | 8 |
| | Դրամարկղ առ 1-ն սեպտ. 1914 թ. | — | — | 1.416 | 7 |
| | | — | — | 3.794 | 5 |

## …տարբերութեան հաշիւ ԿՐԵԴԻՏ

| | | | |
|---|---|---|---|
| Եկամտի և ծախսի տարբերութիւնը | — — | 3794 | 57 |
| | — — | 3794 | 57 |

ԱԿՏԻՒ　　　Հաշուեկշի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | 1416 | 71 | |
| 2 | Թօշակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 4611 | 89 | |
| 3 | Անշարժ կայք<br>ա. Բարվանսարայ Սիօնի փողոցում 400,000ր.—<br>բ. Նից նոր կրպակներ, Կօլօկօլնիյ 7060ր.91<br>գ. Դպրոցական շէնք, Բեհբութեան փողոցում 50,000ր.— | 457,060 | 91 | |
| 4 | Շարժական կայք<br>ա. Դպրոցական կահ-կարասի 8553ր. 29<br>բ. Ուսումնական պարագաներ 2898ր. 70<br>գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ.-ից) 713ր. 70<br>դ. Գրադարան (1910 թ. սեպտ.-ից) 906ր. 93<br>ե. Աշակերտական բեմ (1913 թ. յունվ.) 163ր.46* | 13,236 | 08 | |
| 5 | Տոկոսաբեր թղթեր<br>ա. 96,100 ր. նօմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկ. լիտերայնի 5 % օբլիգացիաների (48-ը 500-ական ռուբլանոց, 71-ը 1000-ական ռուբլանոց գնուած 1911 թ. 4/II à 89, 1-ը 1000 ռուբլանոց և 1-ը 100 ռուբլանոց գնուած 1912 թ. 12/X à 84) իսկական արժէքը | 85,474 | — | |
| | բ. Պետական 1866 թ. ներքին II. փոխ. խաղարկութեան 5 % տոմս, նուէր հանգ. հոգաբարձու Ն. Յ. Անանեանի ընտանիքից, սերիա 17,764 № 7, իսկական արժէքը | 100 | — | |
| 6 | Կրպակականների հաշիւ | 444 | — | 562,343 |
| | | | | 562,343 |

*) Այս գումարից նուէր է ստացուել նիւթեղէն 95 ր. 29 կոպ. արժողութեամբ հետևեալ անձերից—տիկ. Տէր-Աստուրեանից տախտակեղէն 5 ռուբլու, պ. Աղաբէգ Տէր-Աստուրեանից տախտակեղէն 5 ր. 20 կոպ., պ. Ջաղէթեանից տախտակեղէն 18 ր. 65 կ., պ. պ. Ցխովրեբով և Տէր Խաչատրեանից տախտակեղէն 9 ր. 60 կ., Գասպարեանից տախտակեղէն 14 ր. 40 կ., պ. Պարսատանից տախտակեղէն 3 ր., պ. Խեսադուրովից տախտակեղէն 6 ր., պ. Աֆրիկեանից մի թափ կտաւ 13 ր. 44 կոպ., ընդամենը 95 ր. 29 կ.։

## ... 1-ն սեպտ. 1914 թ. ՊԱՍՍԻՒ

| | | | |
|---|---|---|---|
| *Դրամագլուխ* | — — — | 562,343 | 59 |
| | — — — | 562,343 | 59 |

ԱԿՏԻՒ

# Համեմատական Հաշուէկշի

| | | Առ 1-ն սեպտ. 1913 թ. | | Առ 1-ն սեպ 1914 թ. |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | 1400 | 42 | 1416 |
| 2 | Թղթակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 3130 | 25 | 4611 |
| 3 | Անշարժ կայք—քարվանս և գպր. շին. | 457,060 | 91 | 457,060 |
| 4 | Շարժական կայք | | | |
| | ա. Դպրոցական կահ-կարասի | 8411 | 31 | 8553 |
| | բ. Ուսումնական պարագաներ | 2667 | 90 | 2898 |
| | գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ.-ից) | 470 | 78 | 713 |
| | դ. Գրադարան (1910 թ. սեպ.-ից) | 694 | 58 | 906 |
| | ե. Աշակերտական բեմ | — | — | 163 |
| 5 | Տոկոսաբեր թղթեր՝ | | | |
| | ա. 96100 ր. նոմ. արժ. Թիֆլ. քաղ. վ. ընկ. 5% օբլիգ. իսկական արժէքը | 85,474 | — | 85,474 |
| | բ. Ներքին II փոխառութեան խաղարկութեան տոմս | — | — | 100 |
| 6 | Ապահովագրութիւն | | | |
| | ա. Դպրոցի շէնքի | 40 | 83 | — |
| | բ. Շարժական կայքի | 22 | 50 | — |
| | գ. Քարվանսարայի | 60 | 25 | — |
| 7 | Աւանս | 15 | — | — |
| 8 | Կրպակակալների հաշիւ | — | — | 444 |
| | | 559,448 | 73 | 562,343 |

...ր առ 1-ն սեպտ. 1913 թ. եւ 1914 թ. ՊԱՍԻՒ

| | Առ 1-ն սեպտ. 1913 թ. | | Առ 1-ն սեպտ. 1914 թ. | |
|---|---|---|---|---|
| Դրամագլուխ | 559·448 | 73 | 562·343 | 59 |
| | 559·448 | 73 | 562·343 | 59 |

ՄՈՒՏՔ **Համեմատական Նա**

| | | 1912—1913 ուս. տ. Նախահաշիւ | | 1912—1913 ուս. տ. Ճիշտ ստացուած | | 1913—1914 ուս. տ. Նախահաշիւ | | 1913—1914 ուս. տ. Ճիշտ ստացուած | | 1914 ուս. Նախ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քարվանսարայից | 27·000 | — | 27·436 | 50 | 30·500 | — | 29·908 | 50 | 30·5 |
| 2 | 96.100 ր. նոմ. արժ. 5% օբլ. զուտ %-ը | 4·560 | — | 4·564 | 74 | 4·564 | 75 | 4·564 | 74 | 4.5 |
| 3 | Ուսման վարձ | 3·200 | — | 3.392 | 50 | 3·600 | — | 3·947 | 50 | 4.5 |
| 4 | Ջեռագործի իրերի վաճառումից | 50 | — | — | — | 50 | — | 40 | 05 | |
| 5 | Անակնկալ մուտք | — | — | 276 | 13 | 200 | — | 91 | 60 | |
| 6 | Առև. բանկի ընթ. հաշ. % % | — | — | 68 | 54 | — | — | 62 | 45 | |
| 7 | Դրմրկղ 1.ապ.1914 թ. | | | | | | | | | 1· |
| | | 34·810 | — | 35.738 | 41 | 38·914 | 75 | 38·614 | 84 | 40. |

# ...ԱՇԻՒՆԵՐ 1912/13, 1913/14, 1914/15 ուս. Տ. Տ. ԵԼՔ

| | 1912—1913 ուս. տ. | | | | 1913—1914 ուս. տ. | | | | 1914—1915 ուս. տ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Նախահաշիւ | | Ճիշտ ծախսուած | | Նախահաշիւ | | Ճիշտ ծախսուած | | Նախահաշիւ | |
| Ռոճիկներ ուսուցչական խմբին, պաշտօնեաներին և ծառաներին | 24.165 | — | 24.081 | 31 | 26.015 | — | 26.014 | 44 | 27.560 | — |
| Թոշակաւորներին | 1 370 | 88 | 1.370 | 25 | 1.481 | 70 | 1.481 | 64 | 1.583 | 52 |
| Ուսումնական պարագաներ, ֆիզիքական կաբինէտ, գրադարան, կահկարասի, ձեռագործի նիւթեր, մանր վերանորոգութիւններ, շէնքի և շարժական կայքի ապահովագրութիւն, դպրոցական հանդէսներ, էքսկուրսիա, դեղորայք, ջուր, լուսաւորութիւն, վառելիք, դիւանական և տպարանական, անակնկալ և մանր ծախսեր | 3.147 | — | 3.267 | 18 | 2.965 | — | 4.374 | 54 | 3.282 | — |
| Նախաճաշ չքաւոր աշակերտուհիներին | 500 | — | 382 | 05 | 400 | — | 385 | 76 | 100 | — |
| Հիմնադրի հոգեհանգիստ | 60 | — | 65 | — | 160 | — | 63 | — | 100 | — |
| Քարվանսարայի վերաբերեալ՝ ռոճիկներ և այլ ծախսեր | 6.097 | — | 6.202 | 90 | 6.074 | — | 5.404 | 17 | 5.805 | — |
| Նպաստներ | 950 | — | 949 | 92 | 890 | — | 890 | — | 1190 | — |
| Մնում է առ 1-ն սեպտ. 1915 թ. | | | | | | | | | 1360 | 94 |
| | 36.289 | 88 | 36.318 | 61 | 37.985 | 70 | 38.613 | 55 | 40.981 | 46 |

*96·100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5 % լիտերային օբլիգացիաների № №-ը*

72 հատ 1000-ական ռուբլանոց

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15,398, | 15,411, | 15,424, | 15,108, | 15,124, | 15,434 |
| 15,399, | 15,412, | 15,425, | 15,109, | 15,125, | 15,435 |
| 15,400, | 15,413, | 15,426, | 15,110, | 15,126, | 15,440 |
| 15,401, | 15,414, | 15,427, | 15,112, | 15,127, | 15,441 |
| 15,402, | 15,415, | 04,166, | 15,113, | 15,253, | 15,442 |
| 15,403, | 15,416, | 14,248, | 15,114, | 15,254, | 15,458 |
| 15,404, | 15,417, | 14,678, | 15,115, | 15,376, | 18,729 |
| 15,405, | 15,418, | 14,966, | 15,116, | 15,428, | |
| 15,406, | 15,419, | 14,967, | 15,117, | 15,429, | |
| 15,407, | 15,420, | 14,968, | 15,118, | 15,430, | |
| 15,408, | 15,421, | 14,969, | 15,121, | 15,431, | |
| 15,409, | 15,422, | 15,106, | 15,122, | 15,432, | |
| 15,410, | 15,423, | 15,107, | 15,123, | 15,433, | |

48 հատ 500-ական ռուբլանոց

| | | | | |
|---|---|---|---|---|
| 05,389, | 06,245, | 7601, | 9688, | 9759, |
| 05,969, | 06,246, | 7602. | 9737, | 9760, |
| 06,077, | 06,247. | 7603, | 9750, | 9761, |
| 06,078, | 06,249, | 7604, | 9751, | 9762, |
| 06,080, | 06,250, | 9448, | 9752, | 9763, |
| 06,096, | 06,251, | 9449, | 9753, | 9764, |
| 06,097, | 06,252, | 9450, | 9754, | 9765, |
| 06,100, | 06,253, | 9451, | 9755, | 9766, |
| 06,104, | 06,254, | 9641, | 9756, | |
| 06,244, | 06,539, | 9687, | 9757, | |

1 հատ 100 ռուբլանոց № 16,986։

Նախագահ Հոգաբարձական Խորհրդի

*Տ. Մեսրոպ եպիսկոպոս*

Անդամներ

*Մայրապետ Հ. Թայիրեան*

*Արտաշէս Աբեղեան (փոխ-նախագահ)*

*Յովսէփ Արղութեան*

*Արշակ Բաբեան*

*Գարեգին Տէր-Սահփանեան*

*Տեսուչ՝ Սա. Մալխասեանց*

*Քարտուղար՝ Մ. Յարութիւնեան։*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

*Դեռ նախորդ 1912/3 ուս տարուայ վերջերին որոշուած էր այս տարուանից դպրոցում բանալ ութերորդ դասարան, որի նպատակը պէտք է լինէր մի կողմից լրացնել աշակերտուհիների ընդհանուր կրթութիւնը և միւս կողմից մասնագիտական-մանկավարժական ուսումը աւելի հիմնաւոր դարձնել և տեսականապէս ու գործնականապէս պատրաստուած ուսուցչացուներ հասցնել։ Այս որոշման հիման վրայ՝ ուս. տարուայ սկզբից դպրոցում բացուեց ութերորդ դասարան, որտեղ մտան՝ Է. դասարանն աւարտածներից 27 հոգի։ (Այս առաջին տարին Հոգաբարձութիւնը յարմար համարեց Ը. դասարանի դասընթացը պարտադիր չդարձնել Է. դասարանն աւարտողների համար, այլ թողնել իւրաքանչիւրի ազատ ընտրութեան)։*

*Ը. դասարանի բացուելով՝ դպրոցն ստացաւ միջնակարգ դպրոցի լրացած տիպ, և աշակերտուհիների թիւը, ուս. տարուայ սկզբին, վերաքննութիւններից և նորեկների ընդունելութիւնից յետոյ, հասաւ 425-ի, մի քանակութիւն, որպիսին երբէք չէ ունեցել դպրոցը իւր հիմնարկութիւնից ի վեր։ Յունուարին քննութեամբ ընդունուեցին դարձեալ 5 աշակերտուհի. այնպէս որ աշակերտուհիների բարձրագոյն թիւն եղաւ 430։*

*Սրանք զետեղուած էին 8 հիմնական և 3 զուգընթաց դասարաններում հետևեալ կերպով. Ա. դաս. 50, Բ. հիմ. 48, Բ. զուգ. 38, Գ. հիմ. 46, Գ. զուգ. 31, Դ. դաս. 40, Ե. դաս. 46, Զ. հիմ. 29, Զ. զուգ. 28, Է. դաս, 46, Ը. դաս. 28։*

*Տարուայ ընթացքում զանազան պատճառներով դպրոցից հեռացան 25 հոգի (որոնցից 2-ը վախճանած), այ*

պէս որ տարուայ վերջին աշակերտուհիների ընդհանուր թիւն էր 405։

Ուսումը դպրոցում սկսուեց սեպտեմբերի 3-ին և շարունակուեց մինչև մայիսի 17-ը։ Տարուայ ընթացքում դասարանական պարապմունք եղել է 179 օր։

Մայիսին կատարուեցին Ը. դասարանում հրապարակական քննութիւններ, իսկ միւս դասարաններում ստուգութիւններ, որոնց հիման վրայ աշակերտուհիների յառաջադիմութիւնը արտայայտուեց հետևեալ կերպով.

| Դաս. | Թիւ | փոխադր. | Վերաքնն. | Թուում են | արձակ. |
|---|---|---|---|---|---|
| Ա. | 43 | 15 | 18 | 7 | 3 |
| Բ. հիմ. | 46 | 22 | 15 | 5 | 4 |
| Բ. զուգ. | 35 | 18 | 9 | 6 | 2 |
| Գ. հիմ. | 43 | 21 | 12 | 10 | — |
| Գ. զուգ. | 30 | 12 | 14 | 4 | — |
| Դ. | 37 | 16 | 9 | 11 | 1 |
| Ե. | 43 | 18 | 13 | 11 | 1 |
| Զ. հիմ. | 29 | 12 | 8 | 8 | 1 |
| Զ. զուգ. | 28 | 13 | 9 | 6 | — |
| Է. | 43 | 22 | 10 | 11 | — |
| Ը. | 28 | 28 (աւարտ.) | — | — | — |
| | 405 | 197=48,6% | 117=29% | 79=19,5% | 12=3% |

## ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Աշակերտուհիների մէջ տարուայ ընթացքում չէ նըկատուել առանձին պախարակելի վարք. բոլորը վարքից ստացել են տարեկան 5 թուանշան։

Մի-երկու անհատական պակասութիւններ և կարգապահական սովորական զանցառութիւններ վերացուած են առանց պատիժների, Վարչութեան, Մանկ. Ժողովի և դաստիարակների ձեռք առած միջոցներով ու յորդորանքներով։

## ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացակայութիւնների ընդհանուր թիւն է եղել 14,337 (առանց հաշուի առնելու Ը. դասարանի բացակայութիւնները, որոնք շատ քիչ են եղել), որ բաժանելով աշակերտուհիների թուի վրայ (405—28), կստանանք միջին թուով ամէն մէկի վրայ 30 ժամ բացակայութիւն։ Սակայն, այս թիւը ճշգրիտ պատկերը չէ տալիս բացակայութիւնների, քանի որ 29 աշակերտուհի, երկարատև հիւանդութեան պատճառով, բացակայել են 4726 ժամ (միջին թուով իւրաքանչիւրը 163 ժամ)։ Դուրս գալով այս աշակերտուհիներին իրանց բացակայութիւններով ընդհանուր թուից՝ կստանանք դպրոցի համար բացակայութեան միջին թիւ իւրաքանչիւր աշակերտուհու համար 27,3 ժամ։ Սակայն այս քանակութեան մէջ էլ պէտք է մտցնել որոշ կորրէկտիւ, ի նկատի ունենալով որ շատ աշակերտուհիներ օրերով ստիպուած են եղել դպրոց չյաճախել Վարչութեան կարգադրութեամբ, որոշեալ ժամանակին սահմանուած ուսումնավարձը գոնէ մասամբ վճարած չլինելու պատճառով։ Որքան էլ ցաւալի միջոց է այս, բայց և այնպէս Վարչութիւնը, հերուայ նման, ստիպուած էր այս տարի ևս այդ միջոցին դիմել, որովհետև չնայելով բոլոր ընձեռուած յարմարութիւններին՝ աշակերտուհիների ծնողները չէին վճարում ուսման վարձը նշանակուած ժամանակամիջոցին։

## ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐ

Հաշուէտուութեան տարում դպրոցի լիակատար, առաջին անգամ ութդասարանեան, դասընթացն աւարտեցին 28 աշակերտուհի.—

1. Անարոնեան Արփենիկ, Իգդիրեցի
2. Աղայեան Անահիտ, Ցղնեցի
3. Աւագեան Գայեանէ, Ախալցխացի
4. Աւագեան Նունէ, Ցղնեցի
5. Աւագեան Շուշանիկ, Ցղնեցի
6. Աշչեան (Բաղդասարեան) Արաքսիա, Ալէքսանդրապ.
7. Գաբրիէլեան Աննա, Թիֆլիսեցի
8. Գէորգեան Աննա, Շուշեցի
9. Գօզալեան Մարիամ, Թիֆլիսեցի
10. Եարալեան Վարսենիկ, Թիֆլիսեցի
11. Զրվանդեան Վանանոյշ, Վանեցի
12. Թախանողեան Մարիամ, Թիֆլիսեցի
13. Իշխանեան Մարիամ, »
14. Ղուլիջանեան Վարսենիկ, »
15. Մակարեան Թամար, »
16. Մեհրաբեան Վարսենիկ, »
17. Միրզոյեան Նունէ, »
18. Մկրտչեան Շուշանիկ, Կարնեցի
19. Մնացականեան Իւղաբեր, Ախալցխացի
20. Յակոբջանեան Սոֆիա, Կարնեցի
21. Նալբանդեան (Պայտասունի), Սելվինիա, Թիֆլիսեցի
22. Նալբանդեան Վարսենիկ, Ալէքսանդրապօլցի
23. Նալբանդեան Փեփրոնէ, Ախալցխացի
24. Նաւափլեան Մարիամ, Թիֆլիսեցի
25. Չիլ-Յակոբեան Նունէ, Ախալցխացի
26. Սիրունեան Ծաղիկ, Ախալցխացի
27. Տէր-Յարութիւնեան Աստղիկ, Ղազախեցի (Կողբ գ.)
28. Օղաբաշեան Մարթա, Ղարսեցի

# Ուսուցչական կազմը 19¹³|₁₄ ուս. տարում

| ԱԶԳԱՆՈՒՆ ԵՒ ԱՆՈՒՆ | Քանիերորդ տարին է ծառայում | Որտեղ է սովորել | Ի՞նչ առարկաներ էր աւանդում եւ ո՛ր դասարանում | Շաբաթական քանի դաս | Բացակայել է քանի ժամ | Ուշացել է [illegible] քանի ժամ |
|---|---|---|---|---|---|---|
| Աղաջանեան Արմենակ | 4 | Օդեսայի համալս. | Ռուսերէն Ա. Բհ. Բգ. դաս. | 18 | 9 | — |
| Ադամարեան Բախշի բժ. | 3 | Պետրոգ. Բժշկ. ակադ. | Բնախօսութիւն Դ., Առողջապահութիւն Է. Ը. | 5 | 2 | — |
| Ամատունի Արաքսիա | 1 | Թիֆլ. 4-րդ Գիմնազ. և վկայ. Թիֆլ. արհես. | Ձեռագործ Դ. Ե. Զ. և Զգ. | 8 | 5 | — |
| Դեմիրճեան Դերենիկ | 4 | Ներս. դպ. և ժրն. համ. | Հայերէն և նոր մատենագր. Դ. Ե. Զ. և Զգ. Է. | 19 | 15 | 6 |
| Թումանեան Կատարինէ | 3 | Թէոդոսի. գիմնազիա | Ռուսերէն Գհ. Գգ. Դ. | 16 | 14 | 1 |
| Թումանեան Յարութիւն | 2 | Խարկովի համլ. լսող | Ընդհ. և ռուս. գրականութիւն | 6 | 3 | — |
| Իփէկեան Գասպար | 1 | Փարիզի իրա. համլս. | Ֆրանսերէն Դ. Ե. Զհ. Զգ. և Է. | 10 | 3 | 3 |
| Խոտիկեան Միսաք | 1 | Գէորգ. ճեմ. և Բեռ. համլ. | Եկեղ. պատմ. Ե. Զհ. Զգ. Գրաբար Ե. Զհ. | 12 | — | — |
| Կանայեան Խաչատուր | 4 | Գէորգեան ճեմարան | Հայերէն Ա. Բը. Բգ. Գհ. Գգ. | 14 | 4 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կիւրեղեան Եղիսաբեթ | 13 | Արհեստաւ. դպրոց | Ջեռագործ Ա. Բհ. Բգ. Գհ. Գգ. | 10 | 26 | — |
| Մալխասեանց Ստեփան | 4 | Պետրոգր. համալս. | Գրաբար, հին մատր. Զգ. Է. Ը. | 8 | 8 | 9 |
| Մարգարեան Տիգրան | 1 | Պետրգ. և Լէյպց. համլ. | Ընդհ. Մանկավ. և դիդակտ. Ը. | 4 | 2 | — |
| Մինասեան Արշակ քհնյ. | 14 | Ներս. դպր., Ստրազ. համալս. | Կրօն, քրիստ. վարդ. Ա.-Դ. | 12 | 21 | 3 |
| Մնացականեան Շուշան. | 13 | Թիֆլս. իգ. գիմնզ. | Թուաբան. Բհ. Բգ. Գհ. Գգ. | 14 | 7 | 1 |
| Մուշեղեան Տիգրան | 1 | Պետրոգ. համալսարան | Թուաբ. Ա. Դ., Երկրաչփ. Ե. Տիեզրագր. Է. Ը., Ռուս. աշխ. Ե. | 21 | 17 | 1 |
| Մուսայէլեան Հայրապետ | 1 | Գերմ. համլս. դօկտօր | Ընդհ. պատմ. Գհ. Գգ. Դ. Ե. Զհ. Զգ. Է. Ը. Հայ. աշխրհ. Գհ.Գգ. | 20 | 3 | 1 |
| Յարութիւնեան Իսահակ | 4 | Իենայի համալսարան | Հոգեբ., Մեթոդ. Է. փորձն. Դ.Ը. | 10 | 21 | — |
| Յովհաննիսեան Հայկ | 1 | Լէյպցիկի համալս. | Հայերէն Ա. Գհ. Գգ. Հայ. պատ. Դ. Ե. Զհ. Զգ. | 25 | 14 | 2 |
| Շահմազեան Արսէն | 1 | Միրզօրօզի նկարչ. դպրոց | Նկարչութիւն Ա.-Դ. | 12 | 11 | — |
| Շահվերդեան Մարիամ | 1 | Պետրոգ. կան. բարձր. կուրս. | Ռուսերէն Ե.-Է. Ռուս. պատ. Զ. Է. | 23 | 3 | — |
| Սարգսեան Նիկողայոս | 4 | Լէյպց. և Ցիւրիխի համալսարան | Բնապատմ., կենսաբ., ֆիզիկա-քիմիա Ա.-Գ. Ե.-Ը. | 29 | 44 | — |
| Վանեցեան Մկրտիչ | 1 | Լէյպցիկի համալսրն. | Ընդհ. աշխարհ. Ա.-Դ. | 12 | 1 | — |
| Տէր-Մկրտչեան Կարապետ. | 5 | Սօրբօնի համլս. լսող | Հանրահաշիւ Ե-Է. | 11 | 2 | — |
| Տիգրանեան Արմենակ | 1 | Թիֆլ. Երաժշտ. դպրց. | Երաժշտութիւն Ա-Ե. | 15 | 14 | — |

Վերակացութեան պաշտօն կատարել են օր. Կ. Մուրադեան (բացակայել է 4 օր, ազատ դասեր է պարապել 34 ժամ), տիկ. Ս. Դաւթեան (բացակայել է 7 օր, ազատ դասեր է պարապել 12 ժամ) և օր. Լ. Աղայեան (ազատ դասեր է պարապել 25 ժամ)։ Դպրոցի բժիշկն էր պ. Բ. Աղասարեան, նրա օգնականը տիկ. Դաւթեան և մատենադարանապետը օր. Աղայեան։

Բացակայութիւնների ամենամեծ մասը առաջ է եկել հիւանդութիւնից (ինչպէս պ. պ. Դեմիրճեանի, Մուշեղեանի, տիկ. Թումանեանի, Կիւրեղեանի), կամ պաշտօնական ու ընտանեկան գործով Թիֆլիսից հեռանալու պատճառով (ինչպէս պ. Իս. Յարութիւնեանի, Ստ. Մալխասեանցի էջմիածին ուղևորուիլը իբրև պատգամաւոր, պ. Սարգսեանի Շուշի գնալը ընտանեկան կարևոր գործով), կամ անյետաձգելի ծիսակատարութեան պատճառով (ինչպէս Ա. ք. Մինասեանինը)։

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշուետուութեան տարում Մանկավարժական Խորհուրդն ունեցել է 34 նիստ։ Նիստերին բացակայ են եղել—պ. պ. Աղաջանեան և Մուսայէլեան 1 անգամ, Դեմիրճեան, Մուշեղեան և Յովհաննիսեան՝ 2 անգամ, Մնացականեան և Յարութիւնեան՝ 3 անգամ, Շահմազեան և Սարգսեան՝ 4 անգամ, Խոստիկեան, Վանեցեան և Տիգրանեան՝ 5 անգամ, Մարգարեան և Ա. ք. Մինասեան՝ 7 անգամ, օր. Շահվերդեան՝ 8 անգամ, օր. Ամատունի և օր. Մուրադեան՝ 9 անգամ, օր. Աղայեան և տիկին Դաւթեան՝ 10 անգամ, պ. Իփէկեան՝ 12 անգամ, տիկ. Կիւրեղեան՝ 13 անգամ, պ. Տէրեան՝ 14 անգամ, պ. Աղասարեան՝ 16 անգամ, տ. Թումանեան և պ. Թումանեան՝ 17 անգամ։ *)

---

*) պ. Աղասարեանի և պ. Թումանեանի համար պարտադիր չէ եղել բոլոր նիստերին ներկայ լինել։

Մանկավարժական Ժողովը բացի ընթացիկ՝ իւր իրաւասութեան ենթակայ գործերը վարելուց, զբաղուել է նաև հետևեալ խնդիրներով.

Ութերորդ դասարանը բացուած լինելով դեռ առանց դասընթացի պատրաստ ծրագիր ունենալու՝ Ժողովը հէնց իւր առաջին նիստում զբաղուեց ժամանակաւոր՝ այդ մի տարին գործադրելու ծրագրի հարցով և առարկաների ուսուցիչներին յանձնարարեց կազմել այսպիսի ծրագիրներ՝ իւրաքանչիւրը իւր առարկայի համար, որոնք երբ պատրաստուեցին ու Ժողովին ներկայացուեցին՝ Ժողովը թոյլ տուեց գործադրել հաշուէտուութեան տարում։

Անցեալ տարուայ հաշուէտուութեան մէջ յայտնուած էր, որ նորընտիր Հոգաբարձութիւնը, կամենալով իւր կողմից ևս ծանօթանալ արդէն կազմուած և Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն ուղարկուած ուսման ծրագրի հետ՝ խնդրել էր առկախ թողնել հաստատութիւնը և Մանկավարժական Ժողովին առաջարկել էր՝ վերաքննել այդ ծրագիրը, մտցնելով բոլոր ցանկալի համարուած փոփոխութիւնները, չափահմանափակելով ծրագրի նոյն մասերով, նոյնպէս և լրացնելով Ը. դասարանի առարկաների ծրագրով։ Մանկավարժ. Ժողովը մի շարք նիստեր նուիրեց այս հարցին, բանակցութիւններ վարեց Հոգաբարձութեան հետ, խնդրելով տալ դիրեկտիւներ, որոնցով ղեկավարուի ծրագիրը վերամշակելիս, որպէս զի իւր աշխատանքը, աւարտուելուց յետոյ, Հոգաբարձութեան կողմից հիմնական առարկութիւնների չհանդիպի և նոր աշխատանքի դուռ չբացուի, կամ գումարել խառն ժողով այս դիրեկտիւները մշակելու համար։ Ի վերջոյ ընտրուեց մի խառն յանձնաժողով, բաղկացած 8 անդամներից, 4-ը Հոգաբարձութեան կողմից և 4-ը Մանկավարժական Ժողովի անդամներից, որին յանձնարարուեց մշակել նոր ծրագրի հիմնական սկզբունքները և առարկաների տախտակը (առարկաները, ժամերի թիւը և բաշխումն ըստ

*դասարաններէ)։ Յանձնաժողովը, տեսչի նախագահութեամբ, մի շարք նիստեր գումարելով՝ կատարեց իւր վրայ դրուած յանձնարարութիւնը և իւր աշխատանքի արդիւնքը ներկայացրեց Մանկավարժական ու Հոգաբարձական ժողովներին, որոնք և ընդունեցին դասացուցակը երկու աննշան փոփոխութիւններով։*

*Այս նոր դասացուցակի մէջ նկատելու արժանի են հետևեալ էական կէտերը.—*

*Ը. դասարանը վերջնականապէս ընդունւում է իբրև դպրոցի նորմալ դասարան՝ շարունակութիւն Է-ի. Նրա մէջ աւանդուող առարկաները (ի միջի այլոց ընդհանուր գրականութիւն շաբաթական չորս դասով) մասամբ ընդհանուր կրթական են և մասամբ մասնագիտական-մանկավարժական։*

*Ֆրանսերէնը դարձեալ մնում է դպրոցում իբրև կարևոր օտարազգի լեզու. Նրա դասերն աւելանում են 4-ով։ Ֆրանսերէնը գերմաներէնով փոխարինելու առաջարկութիւնը մերժւում է։*

*Իբրև դասարանական առարկայ ստորին դասարաններում մտցնւում է մարմնամարզութիւնը, որի կարևորութիւնը Մանկավարժական ժողովը, ինչպէս և Հոգաբարձութիւնը ճանաչել էին հաշուէտուութեան տարում, բայց իրագործել կարելի չէր եղել շինութեան անյարմարութեան պատճառով։*

*Նկարչութեան դասերն աւելացան այն նպատակով, որ նկարչութեան հետ միաժամանակ աւանդուի նաև ձեռարուեստ։*

*Մանկավարժական ժողովը անհրաժեշտ գտաւ՝ երբեմն-երբեմն, կարիք զգացուած ժամանակ, հրաւիրել ծընողական ժողովներ, մի կողմից լսելու համար ծնողների ցանկութիւններն ու նկատողութիւնները և միւս կողմից նրանց բացատրելու համար դպրոցի պահանջները դէպի աշակերտուհիները, որպէս զի ծնողներն էլ իրանց կողմից*

նպաստեն դպրոցին։ Այս որոշման համաձայն, հոկտ. 20-ին տեսչի նախագահութեամբ գումարուեց ծնողական ժողով, որի մէջ շօշափուել են հարցեր—ծնողների և դպրոցի փոխադարձ յարաբերութեան, աշակերտուհիների բացակայութեան, ուշանալու, պիտոյքների բացակայութեան, անմաքրութեան, օտարի իրերի իւրացուցման, փողոցներում շրջելու մասին, և առաջարկուեցին միջոցներ՝ այս պակասութիւնների առաջն առնելու։

Մանկավարժական Ժողովն հաշուէտուութեան տարում մասնակցութիւն ունեցաւ Գրերի Գիւտի և Տպագրութեան ազգային յոբելեանին, հանգուցեալ Աղ. Բաղանթարի, Ս. Զաւարեանի և Կ. Խատիսեանի ոգահանդէսներին և Իս. Յարութիւնեանի ուսուցչական-մանկավարժական գործունէութեան 25-ամեայ յոբելեանին, յատուկ պատգամաւորութիւններով և դպրոցում պատշաճ երեկոյթներ և դասախօսութիւններ կազմակերպելով։ Նոյնպէս ժողովը շնորհաւորեց երաժիշտ Ն. Տիգրանեանի յոբելեանը։

## Ը. ԴԱՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Ը. դասարանը բանալով և նրանում մանկավարժական մասնագիտութեանը կարևոր տեղ տալով՝ դպրոցը կարիք զգաց ունենալու նաև նախակրթարան, որտեղ Ը. դասարանցիք միջոց ունենային փորձնական դասեր լսելու և փորձնական դասեր տալու։ Արդէն երկու տարի, ինչպէս յիշուած է իմ զեկուցումների մէջ, մեր դպրոցի Է. դասարանի աշակերտուհիները այս նպատակով յաճախում էին Գայեանեան և Զգրաշէնի դպրոցները։ Բայց չէր կարելի ի չարը գործածել այդ դպրոցների վարչութիւնների բարեսրտութիւնը և անյարմարութիւն պատճառել նրանց մշտապէս. պէտք էր հոգալ կամ սեփական նախակրթարանի մասին կամ որ և է դպրոցի հետ սեակա՝ն պայմանաւորութեան մէջ մտնել։ Բարեբախտաբար յաջողուեց երկրորդ միջոցը (քանի որ սեփական նախա-

կրթարան ունենալը թէ ծախսի տեսակէտից և թէ շէնքի փոքրութեան պատճառով դժուար իր գործելի էր)։ Դըպրոցիս հոգաբարձու պ. Գ. Տէր-Ստեփանեանը, որ Բեթղեհէմի եկեղեցուն կից, իբրև նոյն եկեղեցու ծխական և հոգաբարձու, տարուայ սկզբից բացել էր ծխական դըպրոց՝ Հոգաբարձութեան առաջարկեց՝ այդ նորաբաց դըպրոցն ընտրել մշտապէս փորձնական դասերի համար, և որա փոխարէն որոշ նպաստ տալ այդ դպրոցին տարէց տարի։ Հոգաբարձութիւնը յօժարութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, յատկացնելով Բեթղեհէմի դպրոցին տարեկան 200 ր. նպաստ, որի փոխարէն ծխական դըպրոցն ևս թոյլ պէտք է տար մեր Ը. դասարանի աշակերտուհիներին փորձնական դասեր լսել և աւանդել այնտեղ՝ որքան կարիք լինի։ Երկու դպրոցների մօտիկութիւնը և այս պայմանը բաւարար կերպով լուծեցին նախակրթարանի հարցը, և հաշուէտուութեան տարում Ը. դասարանցիք դասատու ուսուցչի առաջնորդութեամբ յաճախում էին այնտեղ և փորձնական դասեր էին տալիս արդիւնաւոր կերպով։

Սրա հետ միասին կարևոր է յիշել և մի ուրիշ հանգամանք, որ շատ նպաստեց մեր Ը. դասարանի աշակերտուհիների մանկավարժական պատրաստութեան։ Իշխանուհի Սոֆիա Արղութեանը պատրաստակամութիւն յայտնեց՝ մեր ընթացաւարտներից 6 հոգու հետ շաբաթը երկու-երեք անգամ պարապել՝ վարժեցնելով նրանց Ֆրէբէլեան խաղերի և նախադպրոցական հասակի երեխաների հետ պարապելու։ Մանկավարժական Ժողովը օգտակար գտաւ այս առաջարկութիւնը և թոյլ տուեց աշակերտուհիներին այդ պարապմունքը։ Այնուհետև իշխ. Ս. Արղութեանը, յարգելով իմ խնդիրը, հնարաւոր գտաւ պարապել ոչ թէ միայն 6 հոգու հետ, այլ բոլոր դասարանի հետ, որի համար նա որոշեալ օրերին ու ժամերին գալիս էր մեր դպրոցը, իսկ երբեմն, երբ հարկաւոր էր լինում կօլլեկցիաներ ցոյց

տալ կամ փոքրիկների հետ պարապել, հրաւիրում էր նըրանց իր պաշտօնը։

Համաձայն իմ զեկուցման՝ Հոգաբարձութիւնը խորին շնորհակալութիւն յայտնեց իշխանուհուն այս ինքնայօժար և օգտակար աշխատութեան համար։

## ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հաշուէտւութեան տարում դպրոցին կից հիմնուեց մի նոր ընկերութիւն ևս,—դպրոցի Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, որ իրան յատուկ նպատակ դրեց դպրոցի չքաւոր աշակերտուհիներին օգնել, մատակարարելով նրանց սնունդ, զգեստեղէն, ուսումնական պիտոյքներ, խնամելով հիւանդներին, սանատորիա և ամառանոց ուղարկելով հիւծուածներին և այլն։

Ընկերութեան բացումը տեղի ունեցաւ դպրոցում սրբազան Մեսրոպ եպիսկոպոսի նախագահութեամբ, դեկտ. 15-ին, որի ժամանակ ընտրուեց վարչութիւն՝ ըստ կանոնադրութեան։

Իմ հաշուէտւութեան սահմանից դուրս է ընկերութեան արդիւնաւոր գործունէութեան նկարագրութիւնը։ Չեմ կարող սակայն չյիշել, որ ընկերութիւնը դպրոցում նախաճաշողների թիւը իր հաշուին աւելացրեց 15 հոգով. ամառը կազդուրուելու համար ամառանոցներ ուղարկեց 6 աշակերտուհու, առաջիկայ 1914/5 ուս. տարուայ համար որոշեց տաք կերակրով նախաճաշիկ տալ 70—80 աշակերտուհու, նոյնպէս և հիմնել սեփական ամառային գաղութ Ծղնէթում՝ վատառողջ աշակերտուհիների համար, որպիսի նպատակի համար նուէր ստացաւ մի բաւական ընդարձակ հողաբաժին՝ իշխան Աղ. Բէհբութեանից։ Ընկերութեան նախագահուհի իշխ. Սոֆիա Արղութեանը, ի միջի այլոց, դպրոցում երկու անգամ կազմակերպեց սեփական գործիքով սինէմատօգրաֆիական ներկայացումներ, որից ստացուած համեստ մուտքի վը-

ճարքը (5 կոպ., չքաւորները ձրի) յատկացրեց Նորակազմ ընկերութեանը։

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ՋԲՕՍԱՆՔՆԵՐ, ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

Տարուայ ընթացքում տեղի ունեցան մի շարք դասախօսութիւններ ու դպրոցական հանդէսներ, ինչպէս նաև գրական-երաժշտական երեկոյթներ՝ պատշաճաւոր առիթներով։ Այսպէս՝ գրերի գիւտի և տպագրութեան յոբելեանի առիթով դպրոցում կազմակերպուեց երկու երեկոյթ (հոկտ. 19-ին փոքրերի և 20-ին մեծերի համար), համապատասխան դասախօսութիւններով ու հիւրասիրութեամբ։ Հանգուցեալ գործիչներ Աղ. Բալանթարի, Սիմ. Զաւարեանի և Կոստ. Խատիսեանի յիշատակին նոյեմբերի 20-ին կազմակերպուեց դասախօսութիւն, որի ժամանակ պ. պ. Աղասարեան, Վանեցեան և Դեմիրճեան ուրուագծեցի հանգուցեալների գործունէութիւնը և նշանակութիւնը մեր կեանքի համար։ Դեկտեմբերի 28-ին և յունվարի 6-ին, նոր տարուայ առիթով կազմակերպուեցին գրական-երաժշտական երեկոյթներ՝ հիւրասիրութեամբ։ Վարդանանց տօնը նոյնպէս կատարուեց սովորական հանդիսաւորութեամբ փետր. 6-ին։ Մայիսի 11-ին կազմակերպուեց գրական-երաժշտական երեկոյթ և հիւրասիրութիւն ի պատիւ պ. Իս. Յարութիւնեանի, որի յոբելեանական պաշտօնական հանդէսին մասնակցելուց դատ Մանկ. Ժողովը և Հոգաբարձութիւնը պատշաճ համարեցին յատուկ երեկոյթով պատուել՝ իբրև դպրոցի ուսուցչի։ Վերջապէս մայիս 23-ին Ը. դասարանի ընթացաւարտները դպրոցի շէնութեան մէջ հիւրասիրեցին Հոգաբարձական կազմն և ուսուցիչներին, նրանց հրաժեշտ տալու և իրանց շնորհակալութիւնն արտայայտելու համար։ Այս երեկոյթն արժան եմ համարում արձանագրելու իբրև նշան այն երախտագիտութեան զգացմունքի, որով տոգորուած հեռանում են սանուհիները իրանց մայր-դպրոցից։

Բացի քաղաքում և շրջակայքում բարձր դասարանների աշակերտուհիների կատարած մի քանի կրթական զբօսանքներից, պ. պ. Աղասարեանի և Մուշեղեանի առաջնորդութեամբ, դպրոցի Ը. դասարանի աշակերտուհիները իմ առաջնորդութեամբ երկու անգամ էքսկուրսիա կատարեցի. առաջինը դէպի Երևան—Էջմիածին—Օշական—Աշտարակ, երկրորդը դէպի Ալէքսանդրապօլ—Անի: Առաջին էքսկուրսիային մասնակցում էին բժ. Աղասարեան, պ. Մուսայէլեան, վերակացուհիներ տիկ. Դաւթեան և օր. Լ. Աղայեան և Հոգաբարձութեան քարտուղար պ. Մ. Յարութիւնեան: Երկրորդին մասնակցում էին հոգաբարձուհի Մայրապետ Հ. Թայիրեան, պ. պ. Մուսայէլեան, Շահմազեան և օր. Մնացականեան: Աշակերտուհիների էքսկուրսիայի ծախսը հոգացուեց մասամբ դպրոցի միջոցներից և մասամբ աշակերտուհիների միջոցներից: Իսկ էքսկուրսիային ուղեկցող ուսուցիչները և վարժուհիները (բացի երկուսից, որոնց ես յատկապէս խնդրեցի մասնակցել) իրանց ծախսերով կատարեցին ճանապարհորդութիւնը. իսկ բարեշնորհ Մայրապետը ոչ միայն իւր ծախսով մասնակցեց, այլ և 25 ր. նուիրեց չքաւոր աշակերտուհիների բաժին ծախսը հոգալու համար:

Էքսկուրսիաները սիրալիր ընդունելութիւն գտան ամենուրեք. Երևանում Գայիանեան դպրոցի Հոգաբարձութիւնը օթևան և անկողին էր պատրաստել և թէյով հիւրասիրեց. սրբազան Խորէն եպիսկոպոսը ճաշ տուեց. Էջմիածնում, Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ ամեն տեսակ յարմարութիւն տրուեց էքսկուրսանտներին—բ ւակարան, սնունդ, թանգարանները, գրադարանը բանալ և ցոյց տալ: Վեհափառը բարեհաճեց իւր ներկայութեան ընդունել և օրհնել էքսկուրսանտներին, յորդորելով որ միշտ յիշեն հայրենի վայրերը և յաճախ կատարեն այսպիսի ուխտագնացութիւններ: Ճեմարանի տեսուչ

որբ. Բագրատ եպիսկոպոսի հաճութեամբ ճեմարանում կայացաւ մի անգամ գրական-երաժշտական երեկոյթ և մի անգամ ուսանողների կողմից հիւրասիրութիւն։ Էջմիածնում սրբազան Կալուստ եպիսկոպոսը և արժ. Բաբգէն վարդապետը ուղեկից եղան մեզ, բացատրելով արժանայիշատակ հնութիւններն ու անցքերը (Գայիանէի և Հռիփսիմէի վանքերում, Զուարթնոց աւերակներում, թանգարաններում և այլն, վերջինումը յատկապէս Խ. ծ. վ. Դատեան), ինչպէս և ուղեկցեցին մեզ դէպի Օշական և Աշտարակ և յիշատակութեան արժանի վայրերի հետ ծանօթացրին։ Աշտարակում էքսկուրսանտներին ճոխ սեղանով հիւրասիրեց Եղբ. Փարւանեանների ընտանիքը։ Երկրորդ էքսկուրսիայի ժամանակ Արգութեան դպրոցի ուսուցիչ պ. Միքայէլեանը մեզ շատ օգնեց՝ Ալէքսանդրապօլում, դպրոցի շէնքի մէջ տեղաւորելու և մեր կարիքները հոգալու գործում։ Անիում պ. Աշխարհբէգ Քալանթարեանը, պրոֆ. Մառի աշակերտը և պեղումների ղեկավարը, անձանձրոյթ սիրով ցոյց տուեց և բացատրեց բոլոր աչքի ընկնող աւերակները, պարիսպներից սկսած մինչև միջնաբերդը և մզկիթները, իսկ վանահայր Միքայէլ վարդապետը իւր սովորական հիւրընկալութեամբ մեզ օթևան և յարմարութիւններ ընձեռեց։

Սրանց բոլորին յայտնում եմ խորին շնորհակալութիւն. իսկ Նորին Վեհափառութեան հայրական լուսամիտ խնամքը անմոռաց կմնայ երախտագէտ էքսկուրսանտների սրտերում, ինչպէս և բոլոր այն գեղեցիկ յուշիկներն ու տպաւորութիւնները, որ նրանք ստացան այս դպրոցական ուղևորութիւնների ժամանակ։

Տեսուչ՝ Ստ. Մալխասեանց

## 1914–1915 ՈՒՍ. ՏԱՐԻ

1914/15 ուս. տարում Հոգաբարձական Խորհուրդն ունեցել է ընդամենը 24 նիստ։ Նիստերին մասնակցել են.—

Սրբազան նախագահ

| | | |
|---|---|---|
| Մեսրոպ եպիսկոպոս | 23 | անգամ |
| Մայրապետ Հ. Թայիրեան | 16 | » |
| պ. Արտաշէս Աբեղեան (փոխ. նախ.) | 23 | » |
| » Յովսէփ Արղութեան*) | 9 | » |
| » Արշակ Բաբեան | 4 | » |
| » Գարեգին Տէր-Ստեփանեան | 23 | » |
| Տեսուչ Յ. Տէր-Միրաքեան | 24 | » |

Հաշուէտարում Հոգաբարձական Խորհուրդն իր նիստերին զբաղուել է գլխաւորապէս ընթացիկ հարցերով։ Չը նայած պատերազմից առաջ եկած աննորմալ երևոյթներին, դպրոցի կեանքն ընթացել է միանգամայն կանոնաւոր կերպով։ Այս ուսումնական տարուանից կիրառութեան մէջ մտաւ դպրոցական ծրագիրը իր ամբողջ ծաւալով, որ մշակուել էր Մանկավարժական Ժողովի կողմից և հաւանութիւն գտել Հոգաբարձական Խորհրդից։ Դպրոցիս նիւթական վիճակն էլ միանգամայն գոհացուցիչ էր, չը նայած կրկին պատերազմից առաջ եկած դրութեան։ Հաշուէտարում Հոգաբարձութեանը յաջողուեց իրագործել իր նախահաշիւն ամբողջ ծաւալով, համարեա որ և է կորուստ չունենալով նախորոշած եկամուտների

*) Քաղաքից բացակայ լինելու պատճառով։

սահմանում։ Հոգաբարձութիւնը, նկատի ունենալով կեանքի թանգութիւնը ներկայումս, անհրաժեշտ գտաւ և հնարաւոր համարեց գոնէ փոքր չափով, նախահաշուի թոյլատրած սահմաններում, օգնութեան գալ դպրոցիս պաշտօնեաներին, տալով իւրաքանչիւրին կէս ամսուայ ռոճկի չափով նպաստ։

Հետևեալ տախտակներն աւելի մանրամասն ծանօթութիւն կը տան դպրոցիս նիւթական մասին։

# ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒ

## 1914 Թ. ՍԵՊՏ.—1915 Թ. ՍԵՊՏ.

ԱԿՏԻՒ **Հաշուեկշիռ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դրամարկղ | 1.416 | 71 | | |
| 2. | Թոշակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 4.611 | 89 | | |
| 3. | Անշարժ կայք<br>ա. Քարվանսարայ, Սիօնի փողոցում 400 000—<br>բ. Կից նոր կրպակներ, Կօլօկօլնի փողոցում 7 060—91<br>գ. Դպրոցի շէնք, Բեհբութ'ան փողոցում № 14 50.000— | 457.060 | 91 | | |
| 4. | Շարժական կայք<br>ա. Դպրոցական կարասի 8441—31<br>բ. Ուսումնական պարագա. 2667—90<br>գ. Գրադար. (1910 թ. սեպ.-ից) 694—58<br>դ. Ֆիզիքական կաբինէտի իրեր (1911 թ. սեպ.ից) 470—78<br>ե. Աշակերտական բեմ (1914 թ. յունվ.) 163—46 | 13.236 | 08 | | |
| 5. | Տոկոսաբեր թղթեր<br>ա. 96.100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի քաղաքային վարկի ընկ. լիտերալնիյ 5% օբլիգացիաների (48-ը 500-ական, 71-ը 1000 ական րուբլանոց à 89, գնուած 1911 թ. փետր. 4-ին, 1-ը 1000 րուբլանոց և 1-ը 100 րուբլանոց 2րդ կարգի à 84, գնուած 1912 թ. հոկտեմբեր 12-ին) իսկական արժէքը | 85.474 | — | | |
| | բ. Պետական 1866 թ. ներքին II. փոխառութեան 5 % տոմս (նուէր հանգ. Ն. Յ. Անանեանի ընտանիքից) № 7, սերիա 17.764 իսկական արժէքը | 100 | — | | |
| 6. | Կրպակակալների հաշիւ | 444 | — | 562.300 | 59 |
| | | | | 562.300 | 59 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դրամագլուխ | — | — | 562.300 | 59 |
| | | | 562.300 | 59 |

ՄՈՒՏՔ

# Եկամտի եւ ծախսի

| | | 1914/15 ուս. տ. նախահաշուով | | իրօք ստացուել է | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Քարվանսարայից | 30,500 | — | *)30,965 | — |
| 2 | 96,100 ր. նոմինալ արժող. 5 % օբլիգաց. զուտ %-ը | 4564 | 75 | 4564 | 74 |
| 3 | Ներքին II փոխ. խաղարկութեան 5% տոմսի %-ը | —— | — | 4 | 19 |
| 4 | Ընթացիկ հաշուի 1914 թ. %-ը | —— | — | 72 | 10 |
| 5 | Ուսման թոշակ | 4500 | — | 3297 | 50 |
| 6 | Ձեռագործի իրերի վաճառումից | —— | — | 26 | 80 |
| 7 | Անակնկալ մուտք | —— | — | 405 | 22 |
| | | 39,564 | 75 | 39,335 | 55 |
| | Փոխադրելի | 39,564 | 75 | 39,335 | 55 |

*) Այդ գումարից 444 ր. ստացուած է 1913/14 ուս. տ. հաշուից մնացած կրպակավարձը։

հաշիւ 1914 թ. սեպտ.—1915 թ. սեպտ. ԵԼՔ

| | Դպրոցի ծախսեր | 1913/14 ուս. տ. նախահաշւով ենթադրւում էր | | Իրօք եղել է | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ռոճիկ տեսչին | 2.000 | — | 2.000 | 04 |
| 2 | » ուսուց. և 2 վերակացուհուն | 2.020 | — | 2.119 | 96 |
| 3 | » Մանկավարժ. ժողովի քարտուղարին | 100 | — | 99 | 96 |
| 4 | » գրադարանապետին | 180 | — | 180 | — |
| 5 | Դասագին և գրաւորների վարձատրութիւն | 20.550 | — | 20.550 | 42 |
| 6 | Ռոճիկ բժշկին և օգնականին | 700 | — | 699 | 96 |
| 7 | » Հոգաբարձ. Խորհր. և տեսչի քարտուղ. | 840 | — | 840 | — |
| 8 | » դպրոցի ծառաներին (4 հոգի) | 930 | — | 890 | — |
| 9 | » դռնապահին | 240 | — | 230 | — |
| | | 27.560 | — | 27.510 | 34 |
| 10 | Իգմիրլեան կաթող. անուան որդեգր. ծախս | 40 | — | 40 | — |
| 11 | Դիւանական՝ | | | | |
| | ա. Գրասենեկ. պէտքեր՝ թուղթ, թանաք են. | 200 | — | 80 | 82 |
| | բ. Տպագր. ծախս.՝ բլանկներ, տեղեկագր. են. | | | 95 | 98 |
| 12 | Դպրոցական՝ | | | | |
| | ա. Հանդէսներ, երեկոյթներ | 250 | — | 47 | 94 |
| | բ. էքսկուրսիա | | | 23 | 14 |
| 13 | Բժշկական օգնութիւն-դեղորայք | 100 | — | 210 | 35 |
| 14 | Նախաճաշ չքաւոր աշակերտուհ. դպրոցում | 100 | — | 100 | — |
| 15 | Հիմնադրի հոգեհանգիստ | 100 | — | 63 | 05 |
| 16 | Վառելիք | 350 | — | 213 | 36 |
| | Էլէքտրական լոյս | | | 145 | 77 |
| 17 | Ջուր | 80 | — | 69 | 61 |
| 18 | Մանր վերանորոգութիւններ | 300 | — | 306 | 78 |
| 19 | Կահ-կարասիի վերանորոգութիւն | 30 | — | 93 | 40 |
| 20 | Շինութեան ապահովագրութիւն | 123 | — | 116 | 14 |
| 21 | Շարժական կայքի ապահովագրութիւն | 34 | — | 14 | 50 |
| 22 | Ձեռագործի նիւթեղէն | 60 | — | 29 | 42 |
| | Փոխադրելի | 1.767 | — | 1.650 | 26 |

ՄՈՒՏՔ

# Եկամուտի եւ ծախսի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | 39.564 | 75 | 39.335 | 55 |
| *Մնում էր դրամարկղում առ 1-ն սեպտ. 1914 թ.* | — | — | 1.416 | 71 |
| | 39.564 | 75 | 40.752 | 26 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխադրուած* | *1.767* | – | *1.650* | *26* |
| *Անակնկալ ծախսեր* | *200* | — | *1.440* | *43* |
| *Մանր ծախսեր* | *240* | — | *281* | *48* |
| *Տէլէֆօն* | *75* | — | *85* | — |
| | *2.282* | — | *3.457* | *17* |
| | *27.560* | — | *27.510* | *34* |
| *Դպրոցի ծախսը* | *29.842* | — | *30.967* | *51* |
| **Քարվանսարայի ծախսեր** | | | | |
| *Ռոճիկ կառավարչին* | *900* | — | *900* | — |
| *» դռնապաններին* | *480* | — | *465* | — |
| *» դպրոցի և քարվ. աղբ թափողին* | *72* | — | *72* | — |
| *Տուրքեր՝ պետ., հող. և քաղաքային* | *3.450* | — | *3.951* | *77* |
| *Շէնքի ապահովագրութիւն* | *133* | - | *133* | *25* |
| *Մանր վերանորոգութիւններ* | *350* | — | *373* | *70* |
| *Էլէքտրական լուսաւորութիւն* | *200* | — | *244* | *13* |
| *Ջուր* | *120* | — | *75* | *50* |
| *Մանր ծախսեր* | *100* | — | *74* | *70* |
| | *5.805* | — | *6.290* | *65* |
| **Նպաստներ** | | | | |
| *Կուսանաց վանքին* | *300* | - | *300* | — |
| *Ախալքալաքի հայոց ծխ. դպրոցին* | *150* | — | *150* | — |
| *Հանգ. Արսէն ա. ք. Բագրատունու դստեր-աշակ.* | *240* | | *240* | — |
| *Բեթղեհէմի ծխական դպրոցին* | *200* | - | *200* | — |
| *Կիսաթոշակ Նախկին վարժ. օր. Կ. Մուրադեանին* | *300* | — | *300* | — |
| | *1.190* | - | *1.190* | — |
| *Դպրոցի ծախսերը* | *29.842* | — | *30.967* | *51* |
| *Քարվանսարայի ծախսերը* | *5.805* | — | *6.290* | *05* |
| | *36.837* | — | *38.447* | *56* |
| *Մուտքի և ելքի տարբերութիւնը* | *2.727* | *75* | *2.304* | *70* |
| | *39.564* | *75* | *40.752* | *26* |

ԴԵԲԵՏ

# Եկամտի եւ ծախ

| | | Նախահաշւով | | Իրօք արուա |
|---|---|---|---|---|
| 1 | Թոշակարկղի գանձարանին տոկոսների 6 %-ը | 1.583 | 52 | 1.583 |
| 2 | Դպրոցական կահ-կարասի | 500 | — | 428 |
| 3 | Ուսուցման պարագաներ | 300 | — | 14 |
| 4 | Ֆիզիքական կաբինէտ | 200 | — | — |
| 5 | Գրադարան | 200 | — | 124 |
| | | 2.783 | 52 | 2.151 |
| | Մնում է առ 1-ն սեպտ. 1915 թ. | — | — | 153 |
| | | — | — | 2.304 |

## րքերութեան հաշիւ ԿՐԵԴԻՏ

| | | | |
|---|---|---|---|
| *Եկամտի և ծախսի տարբերութիւնը* | — — — | 2304 | 70 |
| | — — — | 2304 | 70 |

ԱԿՏԻՒ **Հաշուեկշ**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | 153 | 11 | |
| 2 | Թոշակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 6195 | 46 | |
| 3 | Անշարժ կայք՝<br>ա. Քարվանսարայ Սիօնի փողոցում 400,000ր.—<br>բ. Կից նոր կրպակներ, Կոլոկոլնիյ 7060ր.91<br>գ. Դպրոցական շէնք, Բեհբութեան փողոցում 50,000ր.— | 457,060 | 91 | |
| 4 | Շարժական կայք՝<br>ա. Դպրոցական կահ-կարասի 8982ր. 14<br>բ. Ուսումնական պարագաներ 2913ր. 15<br>գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ.-ից) 713ր. 70<br>դ. Գրադարան (1910 թ. սեպտ.-ից) 1031ր. 68<br>ե. Աշակերտական բեմ (1913 թ. յունվ.) 163ր. 46 | 13,804 | 13 | |
| 5 | Տոկոսաբեր թղթեր՝<br>ա. 96,100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկ. լիտերայնի 5 % օբլիգացիաների (48-ը 500-ական ռուբլանոց, 71-ը 1000-ական ռուբլանոց գնուած 1911 թ. 4/II à 89, 1-ը 1000 ռուբլանոց և 1-ը 100 ռուբլանոց գնուած 1912 թ. հոկտ. 12-ին à 84) իսկական արժէքը | 85,474 | — | |
| | բ. Պետական 1866 թ. ներքին II. փոխ. խաղարկութեան 5 % տոմս, նուէր հանգ. հոգաբարձու Ն. Ց. Անանեանի ընտանիքից, սերիա 17,764, № 7), իսկական արժէքը | 100 | — | 562,7 |
| | | | | 562,7 |

1-Ն սեպտ. 1915 թ. ՊԱՍՍԻՒ

| | | | | |
|---|---|---|---|---|
| ...սմագլուխ | — | — | — | 562,787 56 |
| | — | — | — | 562,787 56 |

# ԱԿՏԻՒ Համեմատական Հաշուեկշ

| | | Առ 1-ն սեպտ. 1914 թ. | | Առ 1-ն ս… 1915 թ |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամարկղ | 1461 | 71 | 153… |
| 2 | Թոշակարկղ (1910 թ. սեպտ.-ից) | 4611 | 89 | 6193… |
| 3 | Անշարժ կայք—քարվանս. և դպր. շէն. | 457,060 | 91 | 457,060… |
| 4 | Շարժական կայք՝ | | | |
| | ա. Դպրոցական կահ-կարասի | 8553 | 29 | 898… |
| | բ. Ուսումնական պարագաներ | 2898 | 70 | 291… |
| | գ. Ֆիզիքական կաբինէտ (1911 թ. սեպտ.-ից) | 713 | 70 | 71… |
| | դ. Գրադարան (1910 թ. սեպ.-ից) | 906 | 93 | 103… |
| | ե. Աշակերտական բեմ | 163 | 46 | 16… |
| 5 | Տոկոսաբեր թղթեր՝ | | | |
| | ա. 96100 ր. նոմ. արժ. Թիֆլ. քաղ. վ. ընկ. 5% օբլիգ. իսկական արժէքը | 85,474 | — | 85,47… |
| | բ. Ներքին II փոխառութեան խաղարկութեան տոմս | 100 | — | 10… |
| 6 | Կրպակակալների հաշիւ | 444 | | |
| | | 562,343 | 59 | 562,… |

# ...ր առ 1-Ն սեպտ. 1914 թ. եւ 1915 թ. ՊԱՍՍԻՒ

| | Առ 1-Ն սեպտ. 1914 Թ. | | Առ 1-Ն սեպտ. 1915 Թ. | |
|---|---|---|---|---|
| Դրամագլուխ | 562.343 | 59 | 562.787 | 56 |
| | 562.343 | 59 | 562.787 | 56 |

# Համեմատական նախ…

ՄՈՒՏՔ

| | | 1913—1914 ուս. տ. | | | | 1914—1915 ուս. տ. | | | | 1915-1… ուս. … |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախահաշիւ | | Ճիշտ ստացուած | | Նախահաշիւ | | Ճիշտ ստացուած | | Նախահաշիւ |
| 1 | Բարվանսարայից | 30.500 | — | 29.908 | 50 | 30.500 | — | 30.965 | — | 30.436 |
| 2 | 96.100 ր. նոմ. արժ. 5% օբլիգ. | 4.564 | 75 | 4.564 | 74 | 4.564 | 75 | 4.564 | 74 | 4.564 |
| 3 | 100 ր. II փոխ. խ.տ.% | — | — | — | — | — | — | 4 | 19 | 4 |
| 4 | Ուսման վարձ | 3.600 | — | 3.947 | 50 | 4.500 | — | 3.297 | 50 | 3.626 |
| 5 | Ձեռագործի իրերի վաճառումից | 50 | — | 40 | 05 | — | — | 26 | 80 | — |
| 6 | Անակնկալ մուտք | 200 | — | 91 | 60 | — | — | 405 | 22 | — |
| 7 | Աու. բանկի ընթ. հաշ. % % | — | — | 62 | 45 | — | — | 72 | 10 | — |
| | Առ 1.սպ.1914թ.մնաց. | — | — | — | — | — | — | 1.416 | 71 | — |
| | | 34.810 | — | 35.738 | 41 | 38.914 | 75 | 38.614 | 84 | 40.981 |

## ...աշիւներ 1913/14, 1914/15, 1915/16 ուս. տ. տ. ԵԼՔ

| | 1913—1914 ուս. տ. | | | | 1914—1915 ուս. տ. | | | | 1915—1916 ուս. տ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Նախահաշիւ | | Ճիշտ ծախսուած | | Նախահաշիւ | | Ճիշտ ծախսուած | | Նախահաշիւ | |
| Ռոճիկներ ուսուցչական ...խմբին, պաշտօնեաներին և ծառաներին | 26.015 | — | 26.014 | 44 | 27.560 | — | 27.510 | 34 | 26.750 | — |
| Թոշակարկղին | 1 481 | 70 | 1.481 | 64 | 1.583 | 52 | 1.583 | 54 | 1.535 | — |
| Ուսումնական պարագաներ, ֆիզիքական կաբինէտ, գրադարան, կահկարասի, ձեռագործի նիւթեր, մանր վերանորոգութիւններ, շէնքի և շարժական կայքի ապահովագրութիւն, դպրոցական հանդէսներ, էքսկուրսիա, դեղորայք, ջուր, լուսաւորութիւն, վառելիք, դիւանական և տպարանական, անակնկալ և մանր ծախսեր | 2.965 | — | 4.374 | 54 | 3.282 | — | 3.862 | 17 | 2.502 | — |
| Նախաճաշ չքաւոր աշակերտուհիներին | 400 | — | 385 | 76 | 100 | — | 100 | — | 200 | — |
| Հիմնադրի հոգեհանգիստ | 160 | — | 63 | — | 100 | - | 63 | 05 | 65 | — |
| Քարվանսարայի վերաբերեալ՝ ռոճիկներ և այլ ծախսեր | 6.074 | — | 5.404 | 17 | 5.805 | — | 6.290 | 05 | 6.390 | — |
| Նպաստներ | 890 | — | 890 | — | 1190 | — | 1190 | — | 1190 | — |
| | 37.985 | 70 | 38.613 | 55 | 39 620 | 52 | 40.559 | 15 | 38.632 | — |

*96.100 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5 % լիտերալնիյ օբլիգացիաների № №-ը*

72 հատ 1000-ական ռուբլանոց

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15,398, | 15,411, | 15,424, | 15,108, | 15,124, | 15,434 |
| 15,399, | 15,412, | 15,425, | 15,109, | 15,125, | 15,435 |
| 15,400, | 15,413, | 15,426, | 15,110, | 15,126, | 15,440 |
| 15,401, | 15,414, | 15,427, | 15,112, | 15,127, | 15,441 |
| 15,402, | 15,415, | 04,166, | 15,113, | 15,253, | 15,442 |
| 15,403, | 15,416, | 14,248, | 15,114, | 15,254, | 15,458 |
| 15,404, | 15,417, | 14,678, | 15,115, | 15,376, | 18,729 |
| 15,405, | 15,418, | 14,966, | 15,116, | 15,428, | |
| 15,406, | 15,419, | 14,967, | 15,117, | 15,429, | |
| 15,407, | 15,420, | 14,968, | 15,118, | 15,430, | |
| 15,408, | 15,421, | 14,969, | 15,121, | 15,431, | |
| 15,409, | 15,422, | 15,106, | 15,122, | 15,432, | |
| 15,410, | 15,423, | 15,107, | 15,123, | 15,433, | |

48 հատ 500-ական ռուբլանոց

| | | | | |
|---|---|---|---|---|
| 05,389, | 06,245, | 7601, | 9688, | 9759, |
| 05,969, | 06,246, | 7602. | 9737, | 9760, |
| 06,077, | 06,247. | 7603, | 9750, | 9761, |
| 06,078, | 06,249, | 7604, | 9751, | 9762, |
| 06,080, | 06,250, | 9448, | 9752, | 9763, |
| 06,096, | 06,251, | 9449, | 9753, | 9764, |
| 06,097, | 06,252, | 9450, | 9754, | 9765, |
| 06,100, | 06,253, | 9451, | 9755, | 9766, |
| 06,104, | 06,254, | 9641, | 9756, | |
| 06,244, | 06,539, | 9687, | 9757, | |

1 հատ 100 ռուբլանոց № 16,986.

Նախագահ Հոգաբարձական Խորհրդի

*Տ. Մեսրոպ եպիսկոպոս*

Անդամներ

*Մայրապետ Հ. Թայիրեան*

*Արտաշէս Աբեղեան (փոխ-նախագահ)*

*Յովսէփ Արղութեան*

*Արշակ Բաբեան*

*Գարեգին Տէր-Ստեփանեան*

*Տեսուչ՝ Յ. Տէր-Միրաքեանց*

*Քարտուղար՝ Մ. Յարութիւնեան։*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Այս հաշուէտուութեան տարում դպրոցն ունէր 11 դասարան Բ.-ից մինչև Ը., որոնցից Ե., Զ. և Ը. դասարաններն առանց զուգընթացների էին։ Դպրոցում ուսումնական տարուայ սկզբին կար 397 աշակերտուհի, որոնք հետևեալ կերպով էին տեղաւորուած դասարաններում.—

| | | |
|---|---|---|
| Բհ. և Բզ. դասարաններում | 83 | հոգի |
| Գհ. և Գզ. » | 85 | » |
| Դհ. և Դզ. » | 71 | » |
| Ե. դասարանում | 38 | » |
| Զ. » | 43 | » |
| Էհ. և Էզ. դասարաններում | 47 | » |
| Ը. դասարանում | 30 | » |

Տարուայ ընթացքում զանազան պատճառներով Բհ. և Բզ. դասարաններից դուրս գնացին 4 աշակերտուհի, Գհ. և Գզ.-ից 1, Դհ. և Դզ,-ից 2, Ե.-ից 3, Էհ. և Էզ.-ից 3 և Ը.-ից 1։ Սեպտեմբերին նոր աշակերտուհիներ ընդունուեցին աւելի Բ. դասարանում 33 հոգի, Գ.-ում 3, Դ.-ում 3, իսկ յունուարին Բ.-ում 1, Դ.-ում 2, Ե.-ում 1, ընդամենը 43 աշակերտուհի։

Պարապմունքներն սկսուեցին սեպտեմբերի 1-ին և կանոնաւոր ընթացքով առաջ գնացին։

Չնայած պատերազմից առաջ եկած անցանկալի երեւոյթներին՝ դպրոցի յառաջդիմութիւնը՝ շնորհիւ ուսուցչական խմբի և աշակերտութեան ոյժերի լարման՝ հետըզհետէ զգալի չափով աւելացաւ. երկրորդ եռամսեակի

*թուանշաններից կազմուած վիճակագրութիւնը ցոյց տուեց, որ այդ ամիսների ընթացքում աւելի արդիւնք է առաջացել՝ քան առաջին եռամսեակում. և երրորդ եռամսեակում աւելի՝ քան երկրորդում։ Թոյլերի աւելի մեծ տոկոսներ ստացուել են ռուսաց լեզուից և ապա՝ մասամբ հայոց լեզուից ու թուաբանութիւնից։*

Աշակերտութիւնների յառաջադիմութեան տախտակը.—

| Դասարաններ | Աշկերտ. թիւը | Փոխադրուող | | Վերաքննուող | | Մնացող | | Մնացող և արձակուող | | Աւարտող | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիւ | % | Թիւ | % | Թիւ | % | Թիւ | % | Թիւ | % |
| ԲՀ. | 40 | 19 | 47,5 | 9 | 22,5 | 12 | 30 | — | — | — | — |
| Բգ. | 38 | 18 | 47,3 | 12 | 31,5 | 8 | 21 | — | — | — | — |
| ԳՀ. | 42 | 16 | 39 | 21 | 49 | 5 | 12 | 1 | 2 | — | — |
| Գգ. | 43 | 24 | 55,8 | 14 | 32 | 5 | 11,6 | — | — | — | — |
| ԴՀ. | 36 | 19 | 51,3 | 11 | 29.7 | 4 | 10,8 | 2 | 5,4 | — | — |
| Դգ. | 32 | 21 | 66 | 10 | 31 | 1 | 3 | — | — | — | — |
| Ե. | 35 | 15 | 42,8 | 16 | 45,7 | 2 | 5,7 | — | — | — | — |
| Զ. | 42 | 16 | 35,7 | 18 | 44 | 2 | 4,7 | 6 | 14,3 | — | — |
| ԷՀ. | 23 | 13 | 56,2 | 10 | 43,8 | — | — | — | — | — | — |
| Էգ. | 21 | 14 | 67 | 6 | 29 | 1 | 4 | — | — | — | — |
| Ը. | 29 | — | — | — | — | — | — | — | — | 29 | 100 |
| | 381 | 175 | 56 | 127 | 32 | 40 | 10 | 9 | 2 | 29 | 100 |

## 1914—1915 Թ. Ը. ԴԱՍ. ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ

1. *Աբրահամեանց Շուշանիկ, Ալէքսանդրապօլցի*
2. *Աղէկեանց Վարսենիկ, Երզրումցի*
3. *Գասպարեանց Եղիսաբէթ, Թիֆլիսեցի*
4. *Գրիգորեանց Սիրանոյշ, Գանձակեցի*
5. *Դանիէլեանց Արաքսիա, Մեղրեցի*
6. *Դովլաթեանց Վարսենիկ, Հին-Նախիջևանցի*

7. Երզնկանեանց Գայիանէ, Ախալցխացի
8. Խուցեանց Կատարինէ, Թելաւեցի
9. Հախնազարեանց Հեղինէ, Ագուլիսեցի
10. Ղըլըթճեանց Եղիսաբէթ, Ախալցխացի
11. Մազմանեանց Շուշանիկ, Սղնախեցի
12. Մամիկոնեանց Գոհարիկ, Գանձակեցի
13. Մանթաշեանց Մարիամ, Վաշլեվանցի (Թիֆ. գաւառ)
14. Մանուէլեանց Սաթենիկ, Թիֆլիսեցի
15. Յակոբեանց Ռեբեկա, Հին-Նախիջևանցի
16. Յովհաննիսեանց Սրբուհի, Թիֆլիսեցի
17. Նազարեանց Էմիլիա, Թիֆլիսեցի
18. Նալբանդեանց Անահիտ, Մեծ-Ղարաքլիսեցի
19. Շահվերդեանց Օլինկա, Լօռեցի (Այգեհատ)
20. Ոսկանեանց Մարիամ, Ախալցխացի
21. Պալոյեանց Շողակաթ, Ախալցխացի
22. Պապոյեանց Հրաչեայ, Ախալքալաքցի
23. Սարուխանեանց Ովսաննա, Ղազախեցի
24. Ստամբոլցեանց Եղիսաբէթ, Ալէքսանդրապօլցի
25. Վարդիկեանց Մարիամ, Թիֆլիսեցի
26. Տար·խչեանց Վարդանոյշ, Ալէքսանդրապօլցի
27. Տէր-Պետրոսեանց Էվելինա, Մեծ-Ղարաքիլիսեցի
28. Քալանթարեանց Թագուհի, Ագուլիսեցի
29. Քոչինեանց Շուշանիկ, Թիֆլիսեցի

Այսպէս ուրեմն 381 աշակերտուհիներից փոխադըրւում են 175 հոգի, աւարտում են 29 հոգի, վերաքննելի են 127, մնում են 40 հոգի, արձակւում են 9 հոգի։ Վերաքննութիւններից յետոյ փոխադրուողների վերջնական թիւը 264 եղաւ, աւարտողներինը 29, մնացողներինը 83, մնացող-արձակուող 9 հոգի։ Այսպիսով 381 հոգուց փոխադրուողները և աւարտողները 77% են կազմում։

Մինչև Գ. դասարանը երեք տարիներից՝ հայոց և ռուսաց լեզուներից և թուաբանութիւնից մէկից աւելի վերաքննութիւն չէ տրուել, բարձր դասարաններում աըը-

ուել է նաև այս 2-3 առարկաներից։ Մնացող և արձակուող աշակերտուհիներին թոյլ է տրուած անբաւարար առարկաներից օգոստոսին քննութեան ենթարկուել յաջող դէպքում փոխադրուելու պայմանով։ Դպրոցումս ամենից շատ դժուարութիւն է պատճառում ռուսաց լեզուի ուսուցումը՝ գլխաւորապէս գրաւորը, այս առարկայից 76 վերաքննութիւն է նշանակուած, որ մօտ 20% է կազմում, իսկ մնացողներից անբաւարար թուանշաններ ունեն 36 հոգի, որ 9,4% է կազմում։ Թուաբանութիւնից վերաքննութիւն ստացողները մօտ 25 հոգի են, որ 10% է կազմում, նոյնչափ էլ մնացողներն անբաւարար թուանշաններ ունեն։ Միւս առարկաների թերութիւններն աւելի հեշտ ուղղելի են, և արդէն այս տարի ուսուցչական խումբն եռամսեակից եռամսեակ, ինչպէս զեկուցի Հոգաբարձութեանը մանրամասն վիճակագրութեամբ, զգալի յաջողութիւն է ունեցել։

Դպրոցն ունեցել է պարապմունքի օրեր 154, որ իւրաքանչիւր դասարանում 890 ժամ է կազմում խմբական երգեցողութեան և ձեռագործի վեցերորդ դասերի հետ։ Այս ուսումն. տարում պատերազմի տագնապի օրերին ծննդեան տօները 5 օր առաջ սկսուեցին, բայց բարեկենդանին՝ միայն Վարդանանց տօնի օրը պարապմունք չեղաւ, իսկ Զատկից առաջ ստորին դասարանները վեցերորդ շաբթի միայն ուրբաթ և շաբաթ օրերը մինչև ժամը 11-ը պարապեցին, հաղորդութեան համար նախապատրաստուելով։

Աշակերտուհիների բացակայութիւնների միջին թիւը 28 է եղել։ Աւելի բացակայել են Դհ., Էգ. և Ը. դասարանցիները։ Նայելով այս տարուայ աննպաստ հանգամանքներին և անցած տարիների միջին թուերին, այս տարուանը չափաւոր է։

Դպրոցիս աշակերտութիւնը հասարակութեան հետևեալ խաւերից է.— 89 հոգու հայրերն արհեստաւորներ են,

66-ինը առևտրականներ, 32 ինը ծառայողներ, 12-ինը հոգևորական, 6-ինը ուսուցիչ, 6-ինը երկրագործ, 3-ինը կապալառու։ Ծնողներից 75 հոգի անգրագէտ են. հայր չունեն 94 հոգի, ընդամէնը 381 հոգի։ Աշակերտուհի՝ երից 145 հոգի Թ. ֆլիսեցի են*), Կովկասի քաղաքացիներ և գիւղացիներ 222 հոգի, Պարսկաստանցի 7 հոգի, Տաճկաստանցի 20 հոգի։

Չքաւոր աշակ. նպաստող ընկերութիւնից ստացել են՝ ձրի դասագրքեր 19 աշակերտուհի՝ 42 գիրք. ճաշ դպրոցում 40 հոգի. բարեգործական ընկերութեան ճաշարանում ձրի ճաշել են 15 հոգի, ձրի ճաշարանում՝ 6 հոգի։

## Դպրոցի աշակերտական գրադարանի վիճակագրութիւնը.

| Դասարաններ | Ընդհ. թիւ | Օգտուողներ | Կարդացել են | | | Գումար | Միջին թիւ կարդացած գրքերի | | | Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հայեր. | Ռուս. | Օտար | | Հայեր. | Ռուս. | Օտար | |
| Ուսուցիչ. | 26 | 18 | 88 | 92 | 1 | 181 | 5 | 5 | 0 | 10 |
| Բհ. | 40 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Բգ. | 42 | 5 | 59 | 1 | — | 60 | 12 | 0 | — | 12 |
| Գհ. | 41 | 40 | 560 | 73 | — | 633 | 14 | 2 | — | 16 |
| Դգ. | 44 | 41 | 579 | 34 | — | 613 | 14 | 1 | — | 15 |
| Դհ. | 37 | 34 | 357 | 58 | — | 415 | 10 | 2 | - | 12 |
| Դգ. | 32 | 28 | 276 | 37 | — | 313 | 10 | 1 | — | 11 |
| Ե. | 37 | 29 | 271 | 64 | - | 335 | 9 | 2 | — | 11 |
| Զ. | 43 | 41 | 254 | 121 | — | 375 | 6 | 3 | — | 9 |
| Էհ. | 24 | 20 | 106 | 46 | — | 152 | 5 | 2 | — | 7 |
| Էգ. | 21 | 18 | 86 | 30 | — | 116 | 5 | 1 | — | 6 |
| Ը. | 29 | 19 | 75 | 37 | — | 112 | 4 | 2 | — | 6 |
| | 308 | 270 | 2564 | 500 | — | 3064 | 77 | 16 | — | 93 |

7 ամսում Գ—Ը դասարաններին տրուել է 3064 գիրք, ամիսը՝ 437 գիրք, օրը 14 գիրք. չհաշուած ուսուցիչների և Բգ. դաս. 5 աշակ. տուած 241 գիրքը։

*) Թիֆլիսեցի են համարուած և վերաբնակուածները։

Ուրիշ գաւառներից կարդացել են 6583 հայերէն և 2612 ռուսերէն գիրք, որոնցից Բ. դասարաններում կարդացել են հայերէն 1895 , ռուսերէն 423 գիրք, Գ. դասարաններում՝ հայերէն 3304, ռուսերէն 755 գիրք, Դ. դասարաններում՝ հայերէն 1376, ռուսերէն 751 գիրք, Ե.-ում՝ հայերէն 781, ռուսերէն 230 գիրք, Զ-ում՝ հայերէն 338, ռուսերէն 273 գիրք, Է.-ում՝ հայելէն 660, ռուսերէն 430 գիրք։

## ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ԴԱՍԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Բհ. և Բգ. դասարանները ուսումնական տարուայ սկիզբը և վերջը բուսաբանութեան դասատու պ. Նիկողայոս Սարգսեանի ղեկավարութեամբ գնացել են բուսաբանական այգին. պ. Տ. Մուշեղեանի ղեկավարութեամբ երկու անգամ յաճախել են տնայնագործական կոմիտէի թանգարանն ու գործարանը։ Աշխարհագրութեան դաս տալու համար պ. Մուշեղեանի և օր. Վ. Սահաթ-Նովայի ղեկավարութեամբ բարձրացել են Ֆունիկուլեօր. պ. Մուշեղեանը իբրև աշխարհագրութեան լրացուցիչ պարապմունք, այս դասարանները մի անգամ բուսաբանական այգի է տարել. պ. Խ. Կանայեանը, իբրև դաստիարակ, Բգ. դասարանը տարել է նկարչական ցուցահանդէս։

Գհ. և Գգ. դասարանների դաստիարակներ՝ օր. Շ. Մնացականեանի, պ. պ. Հ. Յովհաննիսեանի, Ս. Երկայնեանի, ղեկավարութեամբ գնացել են բուսաբանական այգի։ Երկու անգամ նոյն տեղը գնացել են բուսաբանութեան դասատու պ. Ն. Սարգսեանի, օր. Լ. Աղայեանի և նկարչութեան ուսուցիչ պ. Ս. Երկայնեանի ղեկավարութեամբ։ Գգ. դասարանը դաստիարակչուհի օր. Շ. Մնացականեանի ղեկավարութեամբ գնացել է նաև նկարչական ցուցահանդէս։

Դգ. դասարանը դաստիարակչուհի տ. Կ. Թումանեանի ղեկավարութեամբ գնացել է բուսաբանական այգին, նաև տեսչի մասնակցութեամբ կոյրերի դպրոցը։

Դհ. դասարանը դաստիարակ պ. Ն. Սարգսեանի ղեկավարութեամբ գնացել է նկարչական ցուցահանդէս։

պ. Տ. Մուշեղեանը, իբրև դաստիարակ, Ե. դասարանը զբօսանքի է տարել Լիսի լիճը, բուսաբանական այգին և օր. Ա. Մելեանի աջակցութեամբ՝ դաստիարակը տարել է նաև տնայնագործական կոմիտէի թանգարանն ու գործարանը ինչպէս նաև մանկավարժական թանգարանը՝ պ. Յ. Տէր-Միրաքեանի մասնակցութեամբ։

Դաստիարակչուհի օր. Մ. Շահվերդեանի ղեկավարութեամբ Էզ. դասարանը գնացել է «Փառաց տաճարը» և Ծակևս գիւղը Էհ. դասարանի հետ՝ պ. Մուսայէլեանի մասնակցութեամբ։

Ուսումնական տարուայ սկիզբը Ը. դասարանի զբօսանքը տեղի ունեցաւ պ. պ. Տ. Մուշեղեանի, Դ. Դեմիրճեանի, տեսչի և օր. Շ. Մնացականեանի մասնակցութեամբ։

Ուսումնական տարուայ վերջը Ե., Զ. և Ը. դասարանների զբօսանքներ տեղի ունեցան պ. պ. դաստիարակների, տեսչի և ուսուցիչ-ուսուցչուհիների մասնակցութեամբ։

Վարդանանց տօնի առիթով ցերեկոյթ կազմակերպեցին պ. պ. Մ. Խոստիկեան, Հ. Մուսայէլեան և Հ. Յովհաննիսեան։ Վերջինս խօսեց նաև այս առիթով։

Ստորին դասարաններում դպրոցական ինքնավարութեան մասին խօսել է Ը. դասարանի աշակերտուհի Շ. Աբրահամեանը, վիճաբանութիւնը ղեկավարել է պ. Յ. Տէր-Միրաքեանը։

Դաստիարակներն այս դասարաններում կազմակերպել են դասարանական ինքնավարութիւն՝ երեխաներին առողջապահական, վարք ու բարքի խնդիրներով զբաղեցնելով։ Դաստիարակները դաստիարակչական առանձին ժամեր նաև ունեցել են։ Բարձր դասարանների ներկայութեամբ դպրոցական ինքնավարութեան մասին կարդացել է Ը. դասարանի աշակերտուհի Կ. Խուցեանը, գրոյցը

ղեկավարել է պ. տեսուչը։ Վերջինս երեք բարձր դասարանների ներկայութեամբ դասախօսել է «Կեանքն այստեղ՝ դպրոցում և այնտեղ՝ իրականութեան մէջ» թեմայի մասին, որ աշակերտութեան և իր միջև մտքերի առողջ փոխադարձութեան տեղիք է տուել։

Պր. Մ. Խոստիկեանը դասախօսութիւն կարդացել է «Հայոց խնդրի» մասին Ե. և Զ. դասարանների և ուսուցչական խմբի մեծամասնութեան ներկայութեամբ, Էգ. դասարանի համար՝ «Կովկասեան ռազմաբեմը», Զ-ի համար՝ «Հայկական հարցի անցեալ ու ներկայ դրութիւնը» և «Քրիստոնէական կրօնի էական հարցերը» Էհ. և Էգ. դասարաններում։ Դաստիարակի ղեկավարութեամբ նոյն դասարանը կազմակերպել է երեկոյթ յօգուտ կամաւորների։ Պր. Գ. Գեմիրճեանը բարձր դասարանցիների ներկայութեամբ կարդացել է երեք դասախօսութիւն՝ «Օտարաբանութիւնները հայերէնի մէջ», «Ինչպէս պէտք է մշակել լեզուն» և «Հայ ժողովրդական երգերը և նրանց չափերը»։ Պր. Հ. Յովհաննիսեանը Գհ.-ում դասարանական ինքնավարութիւն կազմակերպելու համար 3 անգամ պարապել է հիմունքները բացատրելու, կանոնադրութիւն մշակելու և ընտրութիւն կայացնելու համար։ Պր. Տ. Մուշեղեանը Է. և Ը. դասարանցիների ներկայութեամբ դասախօսել է «Պատանեկական հոգեբանութիւնը և անքետան դպրոցական կեանքում» նիւթի մասին։ Էհ. և Էգ. դասարանցիների համար դասախօսել է «Ժամանակի» մասին։ Ե.-ում իբրև դաստիարակ կազմակերպել է զրոյցներ հետևեալ նիւթերի մասին. «Դպրոց և ընկերական կեանք», «Մարմնամարզութեան նշանակութիւնը», «Զարդարանք և նրա նշանակութիւնը», «Ի՞նչ է երաժշտութիւնը»։ Տաճկաստանի դրութեան մասին բարձր դասարանցիների ներկայութեամբ դասախօսել է պ. Գ. Իփեկեանը։

Դպրոցիս բժ. պ. Բ. Աղասարեանը աշակերտութեան ահակիրճ գաղափար է տուել պատերազմի հետևանքով առաջացած տարափոխիկ հիւանդութիւնների մասին, Է. և Ը. դասարանցիներին տիֆի տեսակների մասին առանձին դասախօսութիւն կարդացել։

*Դպրոցի և ընտանիքի միութեանը, փոխադարձ աջակցութեանը նպաստելու համար կազմակերպուել են ծնողական ժողովներ։ Եռամսեակների թուանշանները բաժանելիս հրաւիրուել են թոյլ աշակերտուհիների ծնողները և կարևոր ցուցմունքներ տրուել։ Տարուայ ընթացքում դասարանական խմբակցութիւններով հերթով հրաւիրուել են, բացի Է. և Ը. դասարանցիների ծնողներից, բոլոր ծնողները։*

*Բ. և Գ. հիմնական ու զուգընթաց դասարանների ծնողական ժողովը տեղի ունեցաւ ղեկավարութեամբ Գզ.-ի դաստիարակ պ. Հ. Յովհաննիսեանի։ Շօշափուեցին դաստիարակութեան վերաբերեալ հարցեր. ժողովը մասնաւորապէս ուշադրութիւն դարձրեց տնային ընթերցանութեան վրայ, որ այս պարապմունքը առանձնապէս ղեկավարուի, անպատեհութիւնների առաջն առնուի։*

*Դհ. և զուգընթաց դասարանների ծնողական ժողովը ղեկավարել է Դհ.-ի դաստիարակ պ. Ն. Սարգսեանը և խօսել է դպրոցական ու ընտանեկան դաստիարակութեան համերաշխութեան մասին։*

*Ե. և Զ. դասարանների ծնողական ժողովը տեղի ունեցաւ Ե.-ի դաստիարակ պ. Տ. Մուշեղեանի ղեկավարութեամբ. խօսել է մեր դպրոցի դիրքի մասին միւսների շարքում, դպրոցական շէնքի և հագուստի մաքրութեան, զարդարանքի մասին։*

*Բոլոր ծնողական ժողովներին պ. տեսուչը ներկայ լինելով տուել է լրացուցիչ բացատրութիւններ շօշափուած խնդիրների մասին։*

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

*Այս հաշուէտարում մանկավարժական ժողովներ տեղի են ունեցել 42 անգամ։ Այս ժողովներից 21-ը գլխաւորապէս նուիրուել են ծրագրի վերամշակման յանձնա-*

ժողովների զեկուցումների քննութեանը։ Դասագրքերի և դասական պիտոյքների վերաբերող խնդրի մասին խօսք է եղել 5 ժողովում, պարապմունքների մասին՝ 4 ժողովում, դաստիարակութեան մասին՝ 5, կարգապահութեան մասին՝ 5, յառաջադիմութեան մասին՝ 6, ստուգութեան, քննութեան, վերաքննութեան, փոխադրութեան մասին՝ 10, երեկոյթ-ցերեկոյթների մասին՝ 9, ծնողական ժողովների մասին՝ 2 և տնային ընթերցանութեան մասին՝ 1 ժողովում։

Նիստերին բացակայ են եղել.—

պ. պ. Հ. Յովհաննիսեան, Մ. Խոստիկեան, Դ. Դեմիրճեան 1 անգամ, պ. պ. Խ. Կանայեան, Ն. Սարգսեան, օր. օր. Մ. Շահվերդեան, Շ. Մնացականեան՝ 2, պ. պ. Իս. Յարութիւնեան, Ա. Աղաջանեան, Գ. Իփէկեան՝ 3, օր. Ա. Մելեան՝ 6, տիկ. Ս. Տէր-Դաւթեան, օր. Վ. Սայեաթ-Նովա՝ 7, տիկ. Կ. Թումանեան, պ. Ա. Տիգրանեան՝ 9, Տ. Արշ. ք. Մինասեան՝ 10, պ. Ս. Երկայնեան՝ 11, տիկ. Ե. Կիւրեղեան՝ 12, պ. Կ. Տէրեան՝ 15, տիկ. Ս. Դաւթեան՝ 17 անգամ։

Վերակացութեան պաշտօն կատարում էին օր. Վ. Սայեաթ-Նովա՝ աւագ վերակացուհի, տիկ. Ս. Դաւթեան (նաև բժշկի օգնական) և օր. Լ. Աղայեան։ Դպրոցի բժիշկն էր Բ. Աղասարեան։

Վերակացուներից բացակայել են տիկ. Դաւթեան 8 օր, օր. Աղայեան 2 օր։ Ուշանալու դէպքերն աննշան են եղել, գլխաւորապէս էլեկտրաքարշի անկանոնութեան պատճառով։ Դասատուների և վերակացուհիների բացակայութիւնները յարգելի պատճառներով են եղել։

# Ուսուցչական կազմը 1914|15 ուս. տարում

| ԱԶԳԱՆՈՒՆ ԵՒ ԱՆՈՒՆ | Քանիերորդ տարին է ծառայում | Ուրտեղ է սովորել | Ի՞նչ առարկաներ է աւանդում եւ ո՛ր դասարանում | Շաբաթական դասի ժամ ունի | Արդարացի է բաց թողել | Անարդարացի է բաց թողել |
|---|---|---|---|---|---|---|
| Ադամեան Արմենակ | 5 | Օդեսայի համալս. | Ռուսերէն և գեղագր. Բ.Գ. դաս. | 16 | 10 | 4 |
| Ադասարեան Բախշի բժ. | 3 | Պետրոգ. զին. ակադեմ. | Առողջապահութիւն Է. Ը. դաս. | 5 | — | — |
| Դեմիրճեան Դերենիկ | 5 | Ներս. դպ. և Ժըն. համ. | Հայերէն և Նոր մատենագր. Ե.-Զ. դաս. | 22 | — | — |
| Թումանեան Կատարինէ | 4 | Թէոդոս. գիմնազ. | Ռուսերէն Բ. և Դ. դաս. | 16 | 11 | 3 |
| Թումանեան Յարութիւն | 3 | Խարկովի համլ. լսող | Ընդհ. գրականութիւն Ը. դաս. | 4 | 6 | — |
| Իփէկեան Գասպար | 2 | Պարիզի իրաւ. համլս. | Ֆրանսերէն Դ.-Է. դաս. | 12 | 6 | — |
| Երկայնեան Սարգիս | 1 | Պօլսի, Պարիզի գեղ. վ. | Նկարչութիւն Բ.-Դ. դաս. | 12 | 1 | — |
| Խոստիկեան Միսաք | 3 | Գէորգ. ճեմ. Բեռն. համլ. | Եկ. պատմ., հին լեզ. և գրակ. Ե.-Է. | 16 | — | — |
| Կանայեան Խաչատուր | 5 | Գէորգեան ճեմարան | Հայոց լ. և գեղագր. Բհ. և Գ. դաս. | 14 | 21 | 3 |
| Կիւրեղեան Եղիսաբէթ | 14 | Թիֆլ. քաղ. արհես. դպ. | Ձեռագործ Բ.-Գ. դաս. | 8 | — | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մուշեղեան Տիգրան | 2 | [illegible] | [illegible] երկրչփ.Ե.Է.դս.ռուս.աշխ. Ե.դաս. | 20 | — | — |
| Մինասեան Արշակ քհնյ. | 14 | Ներս. դպր., Սորագ. համալս. | Կրօն,Բ.-Գ., քրիստ.վարդ.Դ. դաս. | 12 | — | — |
| Մնացականեան Շուշան. | 14 | Թիֆլ. իգ. գիմնզ | Թուաբան. Բ.-Գ. դասարան | 14 | — | — |
| Մուսայէլեան Հայրապետ | 2 | Էրլանգէնի համլ. դօկ. | Ընդհ. պատմ. Գ.-Ը. դաս. Հայ. աշխրհ. Գ. դասարան. | 22 | — | — |
| Յարութիւնեան Իսահակ | 5 | Իեննայի համալսարան | Հոգեբ.Է.,Մեթ.Ը.գ. փորձ.դաս.Ը. | 15 | — | — |
| Յովհաննիսեան Հայկ | 2 | Լայպցիգի համալս. | Հայերէն Գ., Հայ. պատմ. Դ.-Զ., ընդհ. աշխարհ. Դ. դասարան | 26 | — | — |
| Շահվերդեան Մարիամ | 2 | Պետրոգ. կան. բարձր. կուրս. և համալս. | Ռուսերէն Ե., Ռուս. պատ. Զ. Է. գրականութիւն Զ. Է. դասարան | 24 | — | — |
| Սարգսեան Նիկողայոս | 5 | Լայպց. և Ցիւրիխի համալսարան | Բնապատմ. Բ. Գ., բնախօս. Դ., ֆիզիկա Ե.-Է., քիմիա Ը., կենս.Ը. | 28 | — | — |
| Տէրեան Կարապետ | 5 | Սօրբօնի համլս. լսող | Հանրահաշիւ Ե.-Է. դասարան | 10 | — | — |
| Տիգրանեան Արմենակ | 2 | Թիֆլ. Երաժշտ. դպրց. | Երաժշտութիւն Բ.-Դ. խմբ. երգ բոլոր դասարան. | 15 | 14 | 15*) |
| Տէր-Դաւթեան Սաթենիկ (փոխար. Իփէկեանի) | 1 | Ցիւրիպչէի բուլգ. դպ | Ֆրանսերէն Դ.-Է. դասարան | 12 | — | — |
| Տէր-Միրաքեան Յովհ. | 1 | Իեննայի և Լայպց.համլ. | Ընդհ. մանկավարժ. Է. Ը., դիտակտիկա Ը. դաս. | 8 | 5**) | — |
| Քափանակեան Սանփան | 1 | Մոսկուայի համալս. | Ռուսաց գրականութ. Ը. դաս. | 2 | 1 | — |

*) Խմբական երգեցողութեամբ.
**) Փորձնական դասերին ներկայ լինելու պատճառով։

## ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

| № | Ցուցակ հիւանդութեանց 1914/15 տարուայ | Քանակ | Նկատողութիւն |
|---|---|---|---|
| 1 | Ջղայնութիւններ | 36 | Մէկ երկուսի սաստիկ ջղաձգութիւններով և ուշագնացութեամբ։ |
| 2 | Սակաւարիւնութիւն | 36 | Անբաւարար սննդի պատճառաւ։ |
| 3 | Գլխացաւ | 36 | Աւելի շատ են դրանց թիւը։ |
| 4 | Ջերմախտ (մալարիա) | 36 | Գլխաւորաբար գաւառներից եկածների մէջ, մանաւանդ Երևանեան տափաստանից, Իգդիրից։ |
| 5 | Բրօնխիտ | 28 | |
| 6 | Ռեվմատիզմ | 25 | Խոնաւ բնակարանների պատճառաւ։ |
| 4 | Ստամոքս-աղիքային կատարր | 30 | Դժուարամարս սնունդի պատճառաւ։ |
| 5 | Ատամնացաւ | 25 | Աւելի շատ պետի համարել։ |
| 6 | Ինֆլուենցիա | 10 | |
| 7 | Քութէշ | 2 | Ուղարկուեցին «Սուր-վարակիչ հիւանդութիւնների հիւանդանոց»։ |
| 8 | Թոքերի հիւանդութիւն | 3 | Ինֆլուենցից յետոյ՝ մէկը, միւսը ծնողների միջոցներով պիտի գնայ Անապա։ |
| 9 | Զանազան վէրքեր և քոր | 20 | |
| 11 | Աչքերի հիւանդութիւն | 15 | Հիւանդներ ուղարկւում են մասնագէտ բժ. Գէորգբէգեանցին, որը ընդունում է ուրախութեամբ։ |
| 10 | Խպիպ (зобъ) | 6 | |
| 11 | Սկրօֆլօզ (գեղձախտ) | 6 | |
| 12 | Ականջի հիւանդութ. | 10 | Լուրջ դէպքերում ուղարկւում են բժ. Թամամշեանի մօտ։ |
| | Բժ. Բ. Աղասարեան | 223 | Սրանք են գլխաւոր հիւանդութիւնները։ |

Նայելով դպրոցիս բժ. պ. Բ. Աղասարեանի զեկուցման, այս հաշուետարում պատերազմի ազդեցութեամբ ջղային հիւանդութիւնները սաստկացել էին, այն ինչ նոյն պատճառով առաջացած տարափոխիկ հիւանդութիւններից դպրոցը չէ տուժել։ Բժիշկը հիւանդներին օգնութեան է հասել թէ տանը և թէ դպրոցում, ուր աջակցել է նրան դպրոցիս վերակացուհի տիկ. Ս. Դաւթեանը։ Շնորհակալութեամբ պէտք է յիշել հետևեալ մասնագէտ բժիշկների անունները, որոնք ձրիաբար բժշկել են աշակերտուհիներին, պ. պ. Տ. Թադէոսեան, Տ. Գէորգբէկեան, Վ. Թամամշեան, Գ. Պոնդոյեան, Մզաուրբէլեան, կին բժիշկ Մ. Բենեամինովիչ և ատամնաբոյժ օր. Շ. Տէր-Նիկողոսեան։

---

1914/15 ուսումն. տարուայ ընթացքում Թոշակարկղը մուտք է ունեցել՝

| | |
|---|---|
| ա) Մասնակիցների 6 % բարձումներից | 1583,54 |
| բ) Նպաստ դպրոցից | 1583,54 |
| գ) Հին մասնակիցների մասնագներից | 149,28 |
| դ) Նոր մասնակիցների միանուագ բարձում. | 158,80 |
| ե) 5000 ր. օբլիգ. % %-ից | 356,25 |

ընդամենը՝ 3831,41 կ., չեն հաշուած ընթացիկ հաշուով բանկ մտցրած և փոխատու-գանձարանին փոխարինաբար տուած % %-ը։

Առ 1-ը սեպտ. 1915 թ. Թոշակարկղն ունեցել է II. փոխ. վարկի ընկերութեան մէջ ընթացիկ հաշուով 5223 ր. 45 կ., փոխատու-գանձարանում՝ 3000 ր. և արժեթղթեր 5000 ր., ընդամենը՝ 13,223.45։

Թոշակարկղին կից գործում է փոխատու գանձարանը։ Թոշակարկղից տարուայ սկզբին փոխարինաբար ստացուել է 3000 ր., մայիսի 22-ին 3000 ր. և յունիսի 5-ին 357 ր. 36 կոպ.։ Տարուայ ընթացքում տոկոս է ստացուել 180ր. 68 կ., ուսուցիչներին և միւս ծառայողներին փոխարինաբար տրուել է տոկոսով 6319 ր. 24 կ.։

Տնտուչ՝ Յ. Տէր-Միրաքեան

# ԶԵԿՈՒՑՈՒՄ

## Մ-Յովնանեան օր. դպրոցի չքաւոր աշակերտուհիներին օգնող Ընկերութեան Վարչութեան։

Ներկայ Հոգաբարձութիւնը, ինչպէս յիշուած է Նրա տեղեկագրի մէջ, իւր պաշտօնավարութեան հէնց սկզբից որոշեց՝ դպրոցի չքաւոր աշակերտուհիներին լայն չափով օգնած լինելու համար, դպրոցին կից հիմնել չքաւոր աշակերտուհիներին օգնող ընկերութիւն։ Հոգաբարձութեան յանձնարարութեամբ իւր և Մանկավարժական ժողովի միջից ընտրուած մասնաժողովը մշակեց այդ ընկերութեան կանոնադրութիւնը, որը և Հոգաբարձութեան հաւանութիւնն ստանալուց յետոյ ներկայացուեց պատշաճաւոր իշխանութեան հաստատութեան։ 1913/14 ուս. տ. սկզբին ստացուեց հաստատուած կանոնադրութիւնը. նոյն թուի դեկտ. 15-ին հրաւիրուեց առաջին հիմնադիր ընդհանուր ժողովը նախագահութեամբ Թեմիս առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի։ Ներկայ եղողները լսելով կանոնադրութեան ընթերցումը՝ ցանկութիւն յայտնեցին անդամագրուել, որից յետոյ համաձայն կանոնադրութեան կատարուեց Վարչութեան անդամների ընտրութիւնը։ Վարչութեան անդամներ ընտրուեցին՝ իշխանուհի Ս. Վ. Արղութեան, տիկ. Եղ. Առաքելեան, տիկ. Վ. Ի. Անանեան, տիկ. Շ. Տէր-Մարգարեան և բժ. Մ. Մովսիսեան։ Թեկնածուներ՝ տիկ. տիկ. Եղ. Կարգանեան, Ա. Խոստիկեան և պ. Ս. Մելքումեան. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ պ. պ. Լ. Տէր-Աւետիքեան, Յովս. Տէրտէրեան

և Աղէքս. Կարապետեանն։ Սրբազան նախագահը յայտնեց,
որ կանոնադրութեան համաձայն Հոգաբարձական Խորհրդի
կողմից Վարչութեան անդամներ են ընտրուած Շնոր.
Մայրապետ Հ. Թայիրեան և պ. Գ. Տէր-Ստեփանեան,
Մանկ. Ժողովի կողմից՝ բժ. պ. Բ. Աղասարեան, իսկ տե-
սուչը անդամ է ի պաշտօնէ, համաձայն կանոնադրութեան։

Վարչութիւնն առաջին նիստում ընտրեց պաշտօնա-
տար անձինք—նախագահ՝ իշխ. Ս. Վ. Արղութեան, (մայ-
րապետ Հ. Թայիրեանը հրաժարուեց նախագահի պաշտօ-
նից), փոխ-նախագահ՝ պ. Գ. Տէր-Ստեփանեան, գանձա-
պահ՝ տիկ. Եղ. Առաքելեան և քարտուղար՝ տեսուչ պ.
Ստ. Մալխասեանց։

Վարչութեան կազմը մինչև հաշուետուութեան օրը
ենթարկուեց հետևեալ փոփոխութեան — սաստիկ զբա-
ղուած լինելու պատճառով իշխ. Ս. Վ. Արղութեանը հրա-
ժարուեց Վարչութեան անդամութիւնից, փոխարինեց տիկ.
Ե. Կարգանեանը, իսկ նախագահի պաշտօն կատարեց Վար-
չութեան ընտրութեամբ փոխ-նախագահ պ. Գ. Տէր-Ստե-
փանեանը, տիկ. Շ. Տէր-Մարգարեանին փոխարինեց տիկ.
Ա. Խոստիկեանը, գանձապահի պաշտօնը տիկ. Եղ. Առա-
քելեանի հրաժարուելու պատճառով՝ ստանձնեց տիկ. Վ.
Ի. Անանեան, քարտուղարի պաշտօնը՝ տեսուչ պ. Յ.
Տէր-Միրաքեան։

Վարչութիւնը իւր նիստերում զբաղուել է ընկերու-
թեան միջոցները շատացնելու և աշակերտուհիներին նիւ-
թական օժանդակութիւն տալու խնդիրներով։

Նիւթական միջոցներ հայթայթելու նպատակով Վար-
չութիւնն աշխատել է իւր անդամների միջոցով արծար-
ծել իրանց շրջաններում ընկերութեան նպատակը՝ ան-
դամներ շահելու համար, կազմակերպել է զբօսանք և
ներկայացումներ. իսկ չքաւոր աշակերտուհիներին արած
օժանդակութիւնն արտայայտուել է՝ դպրոցում նրանց
տաք նախաճաշ տալով, ուսումնական պիտոյքներ հայ-

*թայթելով, միանուագ նպաստներ (գլխաւորապէս ուսման համար) տալով, բժշկական օգնութիւն հասցնելով՝ թէ դեղ մատակարարելով և թէ հիւծուած աշակերտուհիներին ուսումնական տարուայ վերջը սանատորիա ուղարկելով։ Այսպէս* 1913 *թ. դեկտ.* 15-*ի*—1916 *թ. մարտի* 1-*ը Վարչութեան գործունէութիւնն եղել է հետևեալը.— ունի* 9 *պատուաւոր անդամ* (100 *րուբլի վճարողներ),* 6 *իսկական անդամ* (50 *րուբլի վճարողներ) և* 106 *մշտական անդամ (տարեկան* 3 *րուբլի վճարողներ). կազմակերպել է* 3 *սինեմատոգրաֆիական ներկայացում դպրոցում, գրօսանք* (1914 *թ. մայիսի* 6-*ին), և* 3 *անգամ աշակերտական ներկայացում դպրոցում կամաւոր նուիրաբերութեամբ՝ յօգուտ ընկերութեան* (1915 *թ. մայիս* 12, 13-*ի և յունիսի* 9-*ին)։ Նպաստել է չքաւոր աշակերտուհիներին—ճաշ է տուել* 1913/14 *ուս. տ.* 10 *հոգու,* 1914/15 *ուս. տ.* 60 *հոգու,* 1915/16 *ուս. տ.* 40 *հոգու. տուել է դրամական նպաստներ ուսման, ճանապարհածախսի, ամարանոց գնալու և այլ անակնկալ դէպքերի համար։ Սանատորիա է ուղարկել հիւծուած աշակերտուհիներին Թոքախտի դէմ կռուող ընկերութեան միջոցով* 1913/14 *թ.* 6 *աշակ.,* 1914/15 *թ.* 6 *աշակ.։* 1914 *թուի հոկտ.* 5-*ին հրաւիրել է ընդհանուր ժողով, որը հաստատել է Վարչութեան ներկայացրած* 1914/15 *ուս. տ. նախահաշիւը և լսել է վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը* 1913/14 *ուս. տ. հաշիւների քննութեան վերաբերեալ։*

*Ստորև Վարչութիւնը տալիս է Ընկերութեան դրամական հաշիւը* 1913 *թ. դեկտ.* 15-*ից մինչև* 1916 *թ. մարտի* 1-*ը, որից Ընկերութեան յարգելի անդամները գաղափար կարող են կազմել Ընկերութեան կարևորութեան չափի և օգտակարութեան մասին։*

Մուտք

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Պատուաւոր անդամներից | 900 | — | — | — |
| 2. Իսկական » | 350 | — | — | — |
| 3. Մշտական անդամներից՝ 1913/14 ուս. տ. 285 | | | | |
| » » 1914/15 ուս. տ. 147 | | | | |
| » » 1915/16 ուս. տ. 87ր.519ր. | — | | 1769 | — |
| 4. Ջրօսանքից 1914 թ. մայիսի 6-ին | 795 | 07 | — | — |
| Ներկայացումներ դպրոցում 1915 թ. մայիս 12, 13-ին և յունիս 9-ին | 363 | 09 | — | — |
| Սինեմատոգրաֆից դպրոցում | 21 | 76 | 1179 | 92 |
| 5. Նուէրներ—1913/14 ուս. տ. պ. Սա. Մալխասեանցի միջոցով զանազան նուէրներ | 30 | — | — | — |
| Պր. Մ. Անանեանի միջոցով հանգուցեալ տիկ. Ղալամքարեանի հարազատներից | 150 | — | — | — |
| Գ. Կուզանեանից | 50 | — | — | — |
| Մայրապետ Հ. Թայիրեանի միջոցով Ն. Վարդապետեանից 45 ր., Ն. Միրոքեանից 20 ր. և Ն. Կրասիլնիկեանից 20 րուբլի | 85 | — | — | — |
| Ջ. Գուլուլեանից | 15 | — | — | — |
| Տիկ. Մ. Մելիքեանից | 10 | — | — | — |
| Միք. Անանեանի միջոցով հոգաբարձու Ն. Անանեանի պսակի փոխարէն | 140 | — | — | — |
| Իշխ. Ս. Վ. Արղութեանից | 25 | — | — | — |
| 1914/15 ուս. տ.—Թիֆլիսի ժողովար. | 30 | — | — | — |
| Թիֆլ. Քաղ. Վ. Ընկերութիւնից | 200 | — | — | — |
| պ. Կ. Տ.-Մարգարեանից ի յիշատակ բժ. Ա. Ղազազեանի | 10 | — | — | — |
| պ. Տ. Բէգզադեանից | 25 | — | — | — |
| տիկ. Մ. Ա. Սարգսեանից Մայրապետ Հ. Թայիրեանի միջոցով | 8 | 40 | — | — |
| Ամուսինք Վ. Ի. և Մ. Յ. Անանեաններից ի յիշատակ Ա. Բ. Դաւիդովի | 10 | — | — | — |
| Արժ. Աբր. ա. ք. Ղազազեանից ի յիշատակ օր. Ա. Ղազազեանի | 5 | — | — | — |
| Իշխ. Նատալիա Գ. Մելիք Բէգլարեանից Մայրապետի միջոցով | 13 | — | — | — |
| | 806 | 40 | 2948 | 92 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխադրուած | 806 | 40 | 2048 | 92 | | |
| Այլ և այլ մանր նուէրներ | 21 | 59 | 827 | 99 | | |
| %% 100 ր. 5% օբլ. և ընթ. հաշ. 1914/15 | 38 | 08 | — | .. | | |
| » » 1915/16 | 49 | 46 | 87 | 54 | | |
| Դպրոցից նախաճաշի համար 1914/15 | 100 | — | — | — | | |
| » 1915/16 | 200 | — | 300 | — | 4164 | 45 |
| Ելք | | | | | | |
| Նախաճաշ չքաւոր աշակերտուհիներին դպրոցում | — | — | 1037 | 53 | | |
| Ուսման պիտոյքներ չքաւոր աշակերտ. | — | — | 65 | 44 | | |
| Միանուագ նպաստներ (սնունդ, դեղօրայք, ճանապարհածախս) | — | — | 627 | 20 | | |
| Սանատորիա | — | — | 416 | 08 | | |
| Դիւանական (բլանկներ, կանոնադրութեան տպ., յայտար., ծառաներ ևլն.) | — | — | 154 | 47 | | |
| Այլ ծախսեր (գրասենք. և մանր ծխս.) | — | — | 352 | 71 | | |
| 100 ր. 5% օբլիգ. Թիֆ. Փ. Վ. Ընկ. | — | — | 84 | 12 | | |
| Շարժական կայք (ամանեղէն և այլն) | — | — | 55 | 30 | | |
| Աւանս | — | — | 25 | — | 2817 | 85 |
| Մնում է առ 1-ն մարտի 1916 թ. | — | — | -- | — | 1346 | 60 |

Վարչութիւն

Նախագահ պ. Գ. Տէր-Ստեփանեան

Անդամներ:
- Մայրապետ Հ. Թայիրեան
- տիկ. Վ. Ի. Անանեան (գանձապահ)
- » Եղ. Սաաքելեան
- » Ա. Խոստիկեան
- » Եղ. Կարգանեան
- պ. բժ. Բ. Աղասարեան
- » Մ. Անանեան (գործակից անդամ)
- » բժ. Մ. Մովսիսեան
- Տեսուչ պ. Յ. Տէր-Միրաքեան (քարտ.)

Վերստուգիչ Յանձնաժողով

Նախագահ պ. Լ. Տէր-Աւետիքեան

Անդամներ:
- Աղ. Կարապետեան
- Յովս. Տէրտէրեան

# ՑԱՆԿ ԱՆԴԱՄՆԵՐԻ

## Պատուաւոր եւ իսկական անդամներ

1. Թեմիս առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոս
2. Մայրապետ կուսանաց վանքի Հ. Թայիրեան
3. Իշխ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ
4. † Ն. Յ. Անանեան
5. տիկ. Անանեան
6. պ. Մ. Ա. Անանեան
7. պ. Ա. Ա. Անանեան
8. տիկ. Օ. Մ. Անանեան
9. պ. Յ. Ալիխանեան
10. պ. Առաքելեան
11. պ. Գ. Բաստամեան
12. պ. Բ. Ա. Դաւթեան
13. տիկ. Ն. Կրասիլնիկեան
14. տիկ. Ե. Կարգանեան
15. պ. Ստ. Մալխասեանց
16. Իշխ. Ա. Ա. Բէհբութեան

## Մշտական անդամներ

1. պ. Աբեղեան Ա.
2. տիկ. Աբէլեան Հ.
3. » Ալիբէգեան Ն.
4. » Աղաբալեան Գ.
5. » Ազարեան Հ.
6. օր. Աղայեան Լ.
7. » Աղանեան Ն.
8. պ. Աղասարեան Բ. բժ.
9. » Աղաջանեան Ա.
10. տիկ. Անանեան Վ.
11. » Անանեան Օ.
12. պ. Անանեան Մ.
13. Իշ. պ. Արղութեան Յ.
14. Իշ. տիկ. Արղութեան Ս. Յ.
15. տիկ. Առաքելեան Ե.
16. պ. Առաքելեան Հ.
17. տիկ. Աւագեան Ս.
18. պ. Աւագեան Ա.
19. » Աւանեան Վ.
20. տիկ. Արղութեան Ա.
21. » Բահաթրեան Մ.
22. » Բարխուդարեան Վ.
23. Իշ. տ. Բէհբութեան Կ.
24. տիկ. Բէնքլեան Ն.
25. օր. Գասպարեան Ե.
26. տիկ. Դաւթեան Ս.
27. պ. Դեմիրճեան Դ.
28. օր. Դողանեան Կ.
29. պ. Եարգուլեան Ն.
30. » Ելազեան Յ.
31. տիկ. Էլարեան Ս.
32. » Էլչեան Թ.
33. Իշ. Թումանեան Մ. Մ.
34. Իշ. Թումանեան Մ. Յ.
35. տիկ. Թումանեան
36. „ Իգիթեան Վ.
37. պ. Իշխանեան Յ.
38. » Իփէկեան Գ.

39. տիկ. Իւզպաշեան Ե.
40. » Խոստիկեան Ա.
41. պ. Խոստիկեան Մ.
42. » Խուպլարեան Ա.
43. հ. Խուցեան Խ. քհնյ.
44. պ. Խունունց Յ.
45. » Կանայեան Խ.
46. » Կարապետեան Ա.
47. տիկ. Կարճիկեան Ա.
48. » Կաֆեան Մ.
49. » Կրասիլնիկեան Հ.
50. հ. Ղազարեան Ա. ա. քհնյ.
51. տիկ. Մալխասեանց Ս.
52. պ. Մամիկոնեան Ա.
53. » Մամուլեան Բ.
54. » Մարգարեան Տ.
55. տիկ. Մարտիրոսեան Հ.
56. պ. Մելիքեան Մ.
57. տիկ. Մելիքեան Մ.
58. պ. Մելիք-Նուբարեան
59. » Մելքումեան Ս.
60. տիկ. Միրաքեան Ս.
61. » Միրիմանեան Շ.
62. » Մկրտումեան Ե.
63. օր. Մնացականեան Շ.
64. պ. Մովսիսեան Կ.
65. պ. Մովսիսեան Մ. բժ.
66. օր. Մուրադեան Կ.
67. պ. Մուշեղեան Տ.
68. » Մուսայէլեան Հ.
69. տիկ. Յակոբեան Ս.
70. » Յարութիւնեան Ա.
71. » Յարութիւնեան Ե.
72. պ. Յար...
73. » Յովհաննիսեան Հ.
74. տիկ. Յովհաննիսեան
75. » Յովհաննիսեան Մ
75. » Յովհաննիսեան Շ.
77. » Յովհաննիսեան Ս.
78. պ. Շահմազեան Ա.
79. օր. Շահվերդեան Մ.
80. » Շահազիզեան Ս.
81. հ. Շիոյեան Ս. ա. ք.
82. տիկ. Պապովեան Ս.
83. օր. Պօղոսեան Կ.
84. պ. Ջաղէթեան Ա.
85. » Ջանոյեան Բ. Խ.
86. » Սարգսեան Լ.
87. » Սարգսեան Ն.
88. հ. Սահակեան Ս. ա. ք
89. պ. Տէր-Աբրահամեան
90. տիկ. Տէր-Անտոնեան
91. պ. Տէր-Գրիգորեան Ս.
92. » Տէրտէրեան Ա.
93. » Տէրտէրեան Յ.
94. » Տէր-Աւետիքեան Լ.
95. » Տէր-Մատթէոսեան
96. » Տէր-Միրաքեան Յ.
97. » Տէր-Յովհաննիսեան
98. » Տէր-Ստեփանեան
99. տիկ. Տէր-Ստեփանեան
100. » Քալանթարեան Ս.
101. պ. Քափանակեան Ս.
102. » Քէշիշեան Խ.
103. տիկ. Օթարեան Վ.
104. օր. Օհաննէսեան Մ.
105. տիկ. Օվաննէսեան Ա.
106. » Օրբէլեան Վ.

ЦЕНА
Л 2930